



Գիրք Զ

Հոգևոր պատերազմի
մասին

Արտաքին տեսքի և
շնության մասին

ԱՌԱՋԱԲԱՆ

Քրիստոնյաներիս պարտությունների պատճառը այս հոգևոր պատերազմում հիմնականում այն է, որ մենք սթափ չենք այն Սուրբգրային համարի նկատմամբ, որն ասում է թե՛ ձեր պատերազմը մարմնի և արյան դեմ չէ, այսինքն՝ ոչ թե մարդու, այլ սատանայի և նրա չար գնդերի դեմ:

Երբեմն, երբ մեզ վիրավորում են, մենք իսկույն պատասխանում ենք հին ուխտի պատգամի համեմատ՝ «Ատամի փոխարեն՝ ատամ», անտես անելով Նոր կտակարանի պատվիրանը, որ ասում է՝ մի երեսիդ խփողին մյուսն էլ դարձրու: Առաջինի դեպքում մենք պատերազմում ենք մարդու դեմ՝ հաղթելով նրան և պարտվում սատանայից, որն այս պարագայում, ցնծում է իր հաղթությամբ: Երկրորդի դեպքում՝ մյուս երեսը դարձնելով խփողին, չնայած տհաճություն ենք պատճառում մեր անձին, սակայն պարտության ենք մատնում մեր բուն թշնամուն՝ սատանային: Ինչպես որ Պետրոսը Մաղքոսի ակաջը կտրելով չէ, որ պիտի հաղթեր սատանային, այլ այնպես ինչպես որ մեր Տերը խաչի անարգ մահը անտրտունջ կրելով՝ ջախջախեց սատանայի գլուխը և մեզ էլ պատվիրեց՝ ասելով. «Ինձ նմանվեք»: Նման ձևով և պատերազմում էին մեր սուրբ հայրերը, ինչպես որ գրված է նրանց վարքերում: Այս դեպքի համար հետաքրքիր է այս պատմությունը:

«Մի մեծահարուստի աղջիկ դիվահարվում է, և ոչ ոք չի կարողանում նրան բժշկել: Որոշում են շուկայում իր զամբյուղները վաճառող մի ճգնավորի կանչել՝ աղջկան այդ ցավից ազատելու համար՝ առանց ասելու նրան բուն պատճառը, որպեսզի իր խոնարհության պատճառով չհրաժարվի, այլ ասում են, թե տանտերը ուզում է քո զամբյուղները գնել:

Եվ երբ բանից անտեղյակ վաճականը մտնում է ներս, դիվահարը աղաղակ բարձրացնելով հարձակվում և ապտակում է նրան: Սակայն վաճականը անսպասելի հարձակումից խուճապի չի մատնվում, այլ Տիրոջ պատվիրանի համաձայն մյուս երեսն է դարձնում, և դեռ աղաղակելով դուրս է թռչում աղջկանից, քանի որ Տիրոջ պատվիրանի կատարումը այրում է նրան»: Այ, սա է բարի պատերազմը:

Եվ եթե հիշենք, որ ամեն բան պարտավոր ենք Տիրոջ օրհնյալ ձեռքից գոհությամբ վերցնել, այն ժամ և կտվորենք չարին հաղթել: Ինչպես որ Յոբը, թեև չարն էր իրեն հարվածներ հասցնում, բայց գիտեր, որ դա առանց Տիրոջ թույլատու կամքի չէր կարող լինել, և սատանային արհամարհելով ու իր կնոջ չար առաջարկը մերժելով, ամեն բան գոհությամբ և համբերությամբ Տիրոջ ձեռքից էր ընդունում, և վերջ էր վերջո, հասավ հաղթանակի և էլ ավելի մեծ օրհնություն վայելեց, քանի որ գրված է, թե. «Համբերությամբ ձեր հոգիները պիտի փրկեք»:

Մենք էլ, եթե մեր վրա եկած հիվանդությունները, վշտերը և նեղությունները վերցնում ենք Տիրոջ ձեռքից՝ անտրտունջ և համբերությամբ դիմակայում նրանց, և եթե դրանք նույնիսկ չարի հարձակման հետևանքներ են, ըստ սուրբ հայրերի, արժանանում ենք նահատակների փառքին:

Եվ եթե մեզ իզուր վիրավորում են, և մենք

խոնարհեցնում ենք մեր անձը՝ համարելով, որ էլ ավելի մեծ վիրավորանքների էինք արժան մեր մեղքերի համար, և խնդրում Տիրոջից, որ օրհնի վիրավորողին, որ այսքան մեղմ վարվեց մեզ պես մեղավորի հանդեպ, այն ժամ անհրաժեշտ նստատակ է լինում, և Տիրոջ խաղաղությունը որպես պարգև պարուրում է մեր հոգին:

Չոգևոր պատերազմի ամեն պարագայում պիտի կարողանանք կողմնորոշվել՝ մեր անձը աստվածաշտության վարժեցնելով, օրհնակ, եթե մեր վերևի հարևանը անփութության պատճառով ջուրը բաց է թողել և վնասել մեր տան պատերը և հատակը, պետք չէ իսկույն խռովվել և պատրաստվել պատերազմի հարևանի դեմ, այլ ծնկի գալով Տիրոջ առջև և իր իսկ պատվիրանի համեմատ գոհություն հայտնել՝ ասելով.

«Գոհանում եմ քեզանից, ով Տեր, որ հոգատար ես անարժանիս հանդեպ և կրթում ու դաստիարակում ես ինձ, և տեսնելով հոգևոր կյանքում իմ ծուլությունը և թմրած վիճակը, արթնության ես մղում ինձ՝ այս միջադեպով հիշեցնելով Նոյի ժամանակվա հանկարծահաս ջրհեղեղը: Այո, Տեր, ես ընդամենը մի փոքր նեղության էի արժանի՝ իմ տկարության պատճառով: Եվ ոչ այնպես, ինչպես քո սրբեր՝ Յոբը և մյուսները: Շնորհակալ եմ այդ մեծ սիրո համար, որ ցուցաբերում ես անարժանիս նկատմամբ: Օրհնիր նաև այս հարևանին՝ իր բարի գործի համար, նրան էլ քեզ դառնալու շնորհ արա, և իր սուրբ աղոթքներով էլ ինձ ողորմիր: Ամեն»:

Եվ ապա սիրով և խաղաղությամբ գնա և խնդրի, որ փակի ջուրը՝ մխիթարելով նրան, որ վատ չզգա իրեն՝ այդ միջադեպի համար: Այո, մենք վնաս կրեցինք նյութական, բայց դրա վրա կարող էր գումարվել նաև հոգևոր վնասը, եթե բարկանայինք, կռվեինք, հուզվեինք, տրվեինք հիշաչարության և վրեժխնդրության, և այդպիսով կպարտվեինք սատանայից, որ հենց այս էր ծրագրել: Իսկ եթե անձը խոնարհեցվի, վնասված տան փոխարեն կարժանանա երկնային անձեռակերտ լուսեղեն կացարաններին, և այս կյանքում էլ կրկնակի կօրհնվի ըստ Յոբ երանելու: Եվ նմանօրինակ ամենատարբեր դեպքերում էլ կարելի է մի աստվածահաճո դիրք գրավել՝ հաղթանակներ տանելով չարի դեմ:

Այս համարում կծանոթանաք չարի բազում խարդավանքներին, բայց դրանք էլ բոլորը չեն, սակայն պետք չէ վիհատվել, քանի որ Տերը ոչ մեկին իր մարդկային կարողություններից վեր չի թողնում փորձություն կրել, և եթե մեր չափի մեջ եղածը կրենք համբերությամբ և Տիրոջը հուսալով, ապա հաղթանակած դուրս կգանք: Այս խրատները մեծ ճգնավորների փորձությունից են վերցված, օրհնակ, մահվան ժամին եղող փորձությունները, բայց ամեն մեկը, ինչպես որ ասացինք, իր չափով է պատերազմ մղելու՝ մինչև ի մահ և ոչ ավելի, այնպես որ, պետք է զգոն լինել, բայց ոչ երբեք հուսալքվել:

Երբեմն նման մի վարդապետություն է գլուխ բարձրացնում, թե Տերը հաղթել է սատանային և նա՝ սատանան, արդեն նման է մի անթույն օձի, և մենք հիմնականում էլ նրանից վախենալու առանձնապես բան չունենք: Սակայն սա հենց սատանայի հորինած վարդապետությունն է, որպեսզի մեզ

զցի անհոգության և ինքնավստահության մեջ, և արձակելով իր մխացող նետերը՝ մեզ շատ հեշտությամբ մահացու վերքեր հասցնի: Երբ ինչու է, Տերը ջախջախեց չարի գլուխը իր խաչով, բայց չասաց, թե երգ ու պար անելով եկեք Իմ ետևից, այլ ձեր խաչը վերցրեք և Ինձ հետևեք, այսինքն՝ ինչպես որ ես պատերազմեցի, նույնն էլ դուք արեք: Եվ ինչ խոսք, Տերը մեզ շնորհ, զորություն պիտի տա, եթե իր ուղով քայլենք և հավատարիմ մնանք Իրեն. «Ես ձեր հետ եմ՝ մինչև աշխարհի վերջը»:

Այո, Տերը հաղթել է, բայց չի նշանակում, որ մենք էլ անելիք չունենք պատերազմի դաշտում, ապա թե ոչ, ինչի համար պիտի փառքի պասկներ բաժանվեին հաղթողներին: Ուրեմն, չխաբվենք, այլ ջանանք մինչև մեր վերջին շունչը պայքարել ըստ սուրբ հայրերի, որպեսզի արժանանանք փառքի պասկին՝ Տիրոջ ողորմությամբ և մարդասիրությամբ: Ամեն:



Մեր սուրբ հայր Հովհան Ոսկերեանի իններորդ գրույցը ապաշխարության մասին

Ինչպես որ սերմնացանները ոչ մի օգուտ չեն ստանում այն բանից, որ սերմը զգում են ճանապարհի վրա, այնպես էլ մենք ոչ մի օգուտ չենք ստանա այն բանից, որ կոչվում ենք քրիստոնյա և չենք արդարացնում այդ կոչումը համապատասխան գործերով: Եթե ցանկանում եք, կարող եմ ձեզ ներկայացնել վկայի՝ Տիրոջ եղբայր Զակարիայի վկայությունը, որն ասում է. «Զավատքը առանց գործի մեռած է» (Չակ.2:20):

Եվ այսպես պետք է անձը ամեն օր վարժեցնել բարի գործերի մեջ, առանց որի միայն քրիստոնյայի անունը ոչ մի օգուտ մեզ չի տա: Եվ մի զարմացեք: Ասացեք խնդրեմ, ի՞նչ օգուտ զինվորին այն բանից, որ նա՝ գտնվելով զինվորական ծառայության մեջ, իր վարքով չի համապատասխանում իր կոչմանը և բանակում ապրելով թագավորի հաշվին, չի մարտնչում հանուն թագավորի:

Միգուցե ծանր է իմ խոսքը, բայց լավ կլիներ, եթե այդպիսինը ընդհանրապես չմտներ զինվորական ծառայության մեջ, քան թե մտնելով՝ անհոգ գտնվեր թագավորական պատվի հանդեպ: Ինչպես կարող է խուսափել պատժից նա, ով ապրելով թագավորի հաշվին, չի ուզում պատերազմել նրա համար:

Դե, ի՞նչ եմ ասում ձեզ՝ հանուն թագավորի գոնե մեր սեփական հոգիների համար հոգ տանենք: Եվ հիմա կհարցնես, թե ապրելով

աշխարհում, բազում հոգսերի մեջ, կարո՞ղ եմ արդյոք պատերազմել, հոգ տանել և փրկվել: Ի՞նչ ես ասում, ո՞վ մարդ, ուզո՞ւմ ես քեզ համառոտ ցույց տամ, որ ոչ թե տեղն է փրկում, այլ ապրելակերպը և հոժարակամությունը:

Ադամը դրախտում այնպես էր, ինչպես նավը խաղաղ նավահանգստում, բայց նավաբեկության ենթարկվեց, իսկ Ղովոր՝ ապրելով սողոմացիների մեջ, ինչպես որ ալեկոծ ծովում, փրկվեց: Զորը արժանացավ արդարացման, լինելով հալածանքների մեջ, իսկ Սավուղը՝ կենալով պալատներում, զրկվեց թե՛ այս և թե՛ գալիք թագավորությունից: Խոսքերով արդարանալ չի լինի, ասելով թե. «չեմ կարող ապրել այս աշխարհում այսքան հոգսերի մեջ և փրկվել»:


Իսկ գիտե՞ք, թե որտեղից է առաջանում նման ինքնաարդարացումը. սա նրանից է, որ դուք հաճախակի չեք գալիս, մի մասդ՝ աղոթքի, մյուսներիդ՝ աստվածային Սուրբ Պատարագին:

Մի՞թե չեք տեսնում, թե ինչպես են ջանում նրանք, որոնք երկրավոր թագավորից ուզում են արժանանալ մեծարանքի և ինչպես են փնտրում թագավորի մոտ իրենց համար բարեխոսներ, որպեսզի չզրկվեն այն բանից, որին համառորեն ձգտում են: Սա ասվում է նրանց համար, ովքեր սրբազան հավաքներն անտեսելով, խորհրդավոր ընթրիքի ահավոր պահին տրվում են զրույցների և դատարկախոսության:

Ի՞նչ ես անում դու, ով մարդ, չլսեցի՞ր սուրբ բեմից եկող ձայնը, թե. «Դռները, դռները ծածկեցեք ամենայն իմաստությանը և զգուշությանը: Ձեր մտքերը դեպի վեր բարձրացրեք աստվածային երկյուղով»: Իսկ դու բոլորի հետ միասին չասեցիր, թե. «Մեր ամբողջ միտքն ու հոգին քեզ հետ են, ով ամենակալ Աստված»: Դու վախ չես զգում, չես ամաչում հանկարծ ստախոս դուրս գալ ամենաահավոր պահին: Չարմանալի է երբ պատրաստված է խորհրդավոր ընթրիքը, երբ մորթվում է Աստծո Գառը, երբ քեզ համար ջանում է քահանան, երբ հոգևոր կրակը դուրս է ճառագում ամենասուրբ ընթրիքից, ներկայացել են քերովբեները, թռչում են սերովբեները, վեցթևյանները ծածկում են իրենց դեմքերը, բոլոր անմարմին զորությունները խնդրում են քեզ համար Պատարագիչ քահանայի հետ միասին, հոգևոր հուրը իջնում է երկնքից, ամենասուրբ կողից լցվում է սկիհի մեջ արյունը քո քավության համար, և դու չե՞ս վախենում ու չե՞ս ամաչում այս ահավոր պահին որպես ստախոս երևալ (քանի որ խոստումը ոչ թե լեզվով, այլ գործով է ապացուցվում):

Շաբաթվա հարյուր վաթսուներե ժամից ընդամենը երկու ժամ է Աստված առանձնացրել Իր համար, մի՞թե այդ ժամն էլ դու պիտի վատնես կենցաղային հարցերի, ծիծաղի և շատախոսության վրա:

Եվ ինչ համարձակությամբ այս ամենից հետո պիտի մոտենաս Սուրբ Զաղորդությանը նման ապականված խղճմտանքով: Մի՞թե դու կարկատած հնոտիներով կհամարձակվիր մոտենալ և կպչել երկրավոր թագավորի հանդերձի եզրին, իհարկե ոչ, ոչ մի դեպքում: (Իսկ որքան առավել պետք է երկյուղել այս պարագային): Եվ մի կարծիր, թե սա սովորական հաց է և մի մտածիր, թե ուղղակի գինի է, իմացիր որ նրանք մնացած այլ կերակուրների նման մարդուց դուրս չեն ելնում:



Մի խորհիր այդպես: Այլ այն բանի նմանությամբ, ինչպես որ մոմը, որ մերձենալով կրակին իրենից ոչինչ չի լցնում, և ոչինչ չի կպցնում, և ոչինչ չի վերցնում, հենց այսպես էլ մտածիր և այս պարագայում, որ խորհուրդները անմնացորդ լուծվում են մարմնի էության հետ:

Եվ մոտենալով, մի մտածիր, թե Սուրբ Զաղորդությունը վերցնում ենք մարդու ձեռքից, այլ պատկերացրեք, որ դուք ընդունում եք աստվածային մարմինը, ինչպես այն կրակը, որ գտնվում էր սերովբեների ձեռքում եղած աքցանում, որ տեսավ Եսային (Եսայի 4): Իսկ Փրկչական արյունը նույնպես ընդունենք, կարծես թե շուրթերով հավվում եք Փրկչական սրբասուն և աստվածային կողին: Եվ այս պատճառով էլ, եղբայրներ, չթողենք սուրբ հավաքները, և այնտեղ էլ չտրվենք դատարկաբանության, այլ կանգնենք երկյուղով և սրտի թրթռով, հայացքի խոնարհումով, իսկ հոգում ունենանք վիշտ և սրտի խորքից ելնող հոգոցներով բացականչենք, այլ ոչ թե ձայնեղությամբ:

Չե՞ք տեսել, արդյոք, նրանց, ովքեր կանգնում են տեսանելի, ժամանակավոր և փտման ենթակա երկրավոր թագավորի առջև: Չէ որ նրանք լինում են անշարժ, լռակյաց, հանգիստ, հայացքով չեն թափառում այս ու այն կողմ, այլ կանգնում են գլխիկոր, զգաստ և երկյուղով:

Այս բաները թող քեզ համար որպես օրինակ ծառայեն, ով մարդ: Խնդրում եմ նմանապես, և դու կանգնիր Տիրոջ առջև, զոնե այնպես, ինչպես որ կկանգնեիր երկրավոր թագավորի առջև, չէ՞ որ Երկնավոր թագավորի առջև պետք է կանգնել էլ ավելի մեծ երկյուղով:



Չեմ դադարի կրկնելուց այն, ինչը որ հաճախ և առաջ էլ ասում էի, մինչև որ ձեզ չտեսնեմ ուղղված: Եվ այսպես, գալով եկեղեցի մտնենք այնպես, ինչպես որ պատշաճ է կանգնել Աստծո առջև, չանելով մեր հոգիները չարությամբ, որպեսզի աղոթքի ժամանակ այնպես չստացվի, որ աղոթենք ինքներս մեր անձերի դեմ ասելով. «Թող մեր մեղքերը, ինչպես և մենք ենք թողնում մեզ պարտք եղողներին»: Սարսափելի է այս խոսքը, և ով արտաբերում է այն, կարծես թե կոչ է անում Աստծուն՝ ասելով. «Ես թողեցի, ով Տեր, և Դու էլ թող: Թողեցի ես, թող և Դու, ներեցի, ներիր և Դու, ես չներեցի, մի ներիր և Դու, եթե ես չեմ թողել մերձավորիս, Դու էլ մի թողնիր իմ մեղսագործությունները: Ինչ չափով չափեցի ես, թող նույն չափով և չափվի ինձ»:

Իմանալով այս ամենը և խորհելով այն ահավոր օրվա մասին և պատկերացնելով այն դաժան կրակը ու սարսափելի պատիժը՝ ետ դառնանք այն ճանապարհից, որում թափառում էինք:

Կհասնի ժամը, և կդադարի այս աշխարհի հանդիսախաղը, և էլ չի լինի ժամանակ՝ հոգևոր սխրանքներ գործելու համար:

Յնարավոր չէ կյանքի վերջում զբաղվել հոգևոր գործերով, անհնար է այս հանդիսախաղի ավարտին ձեռք բերել լուսապսակներ:

Այս ներկա ժամանակը ժամանակ է ապաշխարության, իսկ գալիքը՝ դատի, հիմա է ժամը հոգևոր սխրագործությունների, իսկ գալիքը՝ լուսապսակների, այժմ պահն է աշխատանքի, իսկ այնժամ՝ հանգստի և ուրախության, հիմա է ժամը հոգնատանջ լինելու, իսկ այն ժամ՝ վարձատրության:



Արթնացեք, խնդրում եմ ձեզ, արթնացեք և լսեք ջանասիրությամբ այն, ինչ որ ասվում է ձեզ:

Մենք ապրում էինք մարմնավորապես, հիմա արդեն սկսենք ապրել հոգևորապես, ապրում էինք մենք մարմնավոր հաճույքների մեջ, այժմ ապրենք առաքինությամբ, ապրում էինք մեղքերի հանդեպ անհոգությամբ, հիմա ապրենք ապաշխարությամբ:

Ախր «Ի՞նչ ունես հպարտանալու, ով հող ու մոխիր» (Սիրաբ):

Ինչո՞ւ ես գոռոզանում, ով մարդ: Ինչո՞ւ ես այդպես անհագորեն զովաբանություն փնտրում: Աշխարհային ո՞ր մի փառքի և հարստության վրա ես հույսդ դրել: Խնդրեմ, զմանք գերեզմանները և տեսնենք այնտեղ կատարվող ահասարսուռ և խորհրդավոր իրավիճակը, տեսնենք քայքայվող էությունը, ցեցոտած ոսկորները, նեխած մարմինը: Եթե դու իմաստուն ես՝ խորհիր, և եթե խելացի ես՝ ասա ինձ, ո՞վ է այստեղ թագավոր, իսկ ով՝ ռամիկը, ով ազնվական է և ով ստրուկը, ով է իմաստուն և ով՝ անմիտը: Որտե՞ղ է այստեղ գեղեցկությունը երիտասարդության, ո՞ր է հմայիչ հայացքը, ո՞ր է գեղեցիկ քիթը, ո՞ր է վարդագույն շուրթերը, ո՞ր է գույնը այտերի, ո՞ր է փայլը ճակատի: Մի՞թե ամեն բան հող ու մոխիր չէ, մի՞թե ամեն բան որդ և գարշահոտություն չէ: Եվ ահա ամեն ինչ փտում է: Պահելով այս ամենը մտքում և խորհելով մեր վերջին օրվա մասին, դարձի գանք, եղբայր, մեր խոտոր ճանապարհներից, քանի դեռ մենք ժամանակ ունենք:

Սուրբ արյամբ ենք մենք զնված (Ա Պետրոս 1:19) և այդ նպատակով իսկ, Աստված երկրի վրա հայտնվեց՝ քեզ գնելու համար, ով մարդ, Աստված երկրի վրա հայտնվեց՝ չունենալով անգամ գլուխ դնելու տեղ (Ղուկաս 9:58):

Օ՛ հրաշք, Դատավորը դատապարտյալների փոխարեն ներկայանում է դատի, Կյանքը ճաշակում է մահ, Արարիչը կրում է ապտակներ արարածներից: Սերովբեների համար աներևոյթը, թուք է ընդունում ստրուկներից, քացախ ու լեղի է ճաշակում, գեղարդով խոցվում և դրվում է գերեզման: Իսկ դու, ով մարդ, անհոգ ես, ննջում և քամահրանքով ես վերաբերվում այս հրաշքներին: Չգիտես, որ եթե դու արյունդ էլ հեղես նրա համար, նույնիսկ այդ ժամանակ էլ դեռ քո պարտականություններն ամբողջովին կատարած չես լինի, որովհետև ուրիշ է արյունը Տիրակալի, որիչ ծառայինք:

Եվ այսպես, ջանա ապաշխարությամբ և ուղղվելով պատրաստվել հոգեվարքիդ ահավոր պահին, երբ մոտենա մահը, որովհետև միայն այստեղ երկրի վրա է, որ ապաշխարությունը ուժ ունի, իսկ դժոխքում այն արդեն ուժը կորցնում է: Աղաղակենք առ Աստված, քանի դեռ ժամանակ ունենք: Բարիք անենք, որպեսզի ազատվենք գալիք անվախճան գեհենից և արժանանանք Երկնքի Արքայությանը շնորհով և մարդասիրությամբ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, որին փառք, իշխանություն, հավիտյանս հավիտենից. Ամեն:



Նարեկ

Քան ՃԹ

Առողջ անդամներ ունեցող մարդիկ
Կարիք չեն զգում բնավ բուժվելու,
Ոչ էլ տեսնողներն՝ անհրաժեշտություն առաջնորդների.
Ընչաշատները չեն հաճում երբեք
Լիացածների դռների առաջ,
Ու չեն սպասում հղփացածները ամեն բարիքով՝
Թափփուկներին սեղանի հացի.
Կարքով սրբերը կարիք չեն զգում ողորմածության.
Արդ, գթա դու ի՞նձ, ողորմի՛ր, բարձրյալ, երկնավոր հզո՛ր,
Ի՞նձ, վարանյալիս ամենատխուր:
Ձի եթե Յոբին ես նմանվեի,
Կհամարեի ի՞նձ էլ նրա պես արդար, անարատ.
Եթե լինեի Սովսեսի նման,
Ի՞նքս էլ նրա պես վստահ կասեի՝
«Տերը պետք է որ ճանաչի նրանց, ովքեր իրենն են».
Իսկ եթե Դավթին ես նմանվեի, կասեի անշուշտ՝
«Հաստատեցի կարգ ու արդարություն»
Եվ խոսքն այս մարմնի, բնությունից վեր՝
«Եթե սրտիս մեջ մեղքեր նկատեմ,
Թող որ Տերը ի՞նձ բնավ չլսի».
Եթե լինեի Եղիայի նման,
Կհամարեի ի՞նձ այր Աստծո.
Թե Երեմիայի նման լինեի,
Կօրինակեի ճշմարտությունդ.
Եթե լինեի Եզեկիայի պես,
Կպարծենայի իրավամբ, որ ես
Արդարությամբ եմ քայլել քո առաջ.
Եթե Պողոսի նման լինեի,
Կհամարեի ի՞նձ բնակարան,
Մի ընդունարան ու ազդարարան Աստծո խոսքի:
Բայց անօրենս, օրենքին գիտակ լինելով հանդերձ,
Ահա ոչ միայն չեմ կարող անձս քեզ ներկայացնել
Մեծարու խոսքով, ինչպես որ նրանք,
Եվ չարս համակ՝ բարիների պես հիշվել քո առաջ,
Այլև ամենուր բոլոր գոյերից
Բարեհռչակված անունդ, հզո՛ր,
Ամբարշտյալիս լեզվով ներբողել:
Բայց կարող ես դու և ամեն ինչի հնարներ ունես.

Մատուցի՛ր ի՞նձ, տե՛ր, ոգի փրկության,
Պաշտպանության աչ և օգնության ձեռք,
Բարի հրաման, ողորմության լույս,
Նորոգության խոսք, քավության պատճառ
Եվ կյանքի նեցուկ՝ օգնող գավազան.
Քանզի դու ես հույսն ապավինության, Տե՛ր Հիսուս Քրիստոս,
Օրհնյալ՝ Յորդ հետ, Սուրբ Հոգովդ, ընդմիշտ,
Հավիտյաններից հավիտյանս. ամեն:

(Սբ. Գրիգոր Նարեկացի)

ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

*Տիրոջ խրատը մի՛ անարգիր, Նրա հանդիմանությունից մի՛ թուլացիր, քանի
որ Տերը իր սիրածին է խրատում (Առակ. 3:11):*



Աստվածաշնչից

1. Պատերազմի՛ր հավատքի բարի պատերազմը (Ա Տիմ. 6:12):
2. Լեռների վրա բազմության ձայն կա, մեծ ժողովրդի ձայնի պես, մեկտեղ հավաքված ազգերի թագավորությունների աղմուկի ձայն կա: Չորքերի Տերը պատերազմի համար իր զորքերը աչքի է անցկացնում (Եսայի 13:4):
3. Պատերազմ հայտարարեցեք, զորավարներին արթնացրեք, բոլոր ռազմիկները թող մոտենան: Ձեր խոփերից սրեր կռեցեք և ձեր գերանդիներից՝ գեղարդներ: Տկարը թող խրախուսվի՝ ասելով, թե՛ ես հզոր եմ (Հովել 3:9-11):
4. Ուժ առեք, լքված ձեռքեր ու տկարացած ծնկներ, մխիթարվեցեք, թուլահի՛րտ մարդիկ, գոտեպնդվեցեք և մի՛ երկնչեք (Եսայի 35:3-4):
5. Ուրախացե՛ք ու քաջ եղե՛ք, մի՛ վախեցե՛ք ու նրանց երեսից մի՛ զարհուրեք, քանի որ ձեր Տեր Աստվածը ի՞նքը ձեր հետ պիտի լինի, Նա ձեզ չի թողնի և չի լքի ձեզ (Բ Օր. 31:6):
6. Ձեր Տեր Աստվածը, որ ձեր առջևից է գնում, Նա ձեր համար պիտի պատերազմի: (Բ Օր. 1:30):
7. Դուք մի՛ վախեցե՛ք ու այս մեծ բազմության երեսից մի՛ զարհուրեք, քանզի պատերազմը ձերը չէ, հապա Աստծունն է (Բ Մնաց. 20:15):

8. Տերը պիտի պատերազմի ձեր փոխարեն, դուք լուռ մնացեք (Ելք 14:14):

9. Նրանք ունեն մարմնավոր բազուկներ, իսկ մեզ հետ է մեր Տեր Աստվածը, որ մեզ կփրկի ու մեր պատերազմն Ինքը կմղի (Բ Մնաց. 32:8):

10. Տերը հզոր պատերազմող է (Ելք 15:3):

11. Նա քամիները հրեշտակներ դարձրեց Իրեն և կիզիչ հուրը՝ սպասավորներ (Սաղմ. 103:4):

12. Եվ վերջապես, զորացե՛ք Տիրոջով և Նրա զորության կարողությամբ և Աստծո սպառազինությունը հագե՛ք, որպեսզի կարողանաք դիմանալ սատանայի հնարքներին, որովհետև մեր պատերազմը մարմնի ու արյան հետ չէ, այլ իշխանությունների հետ, պետությունների հետ, այս խավար աշխարհի տիրակալների հետ և երկնքի տակ եղող չար ոգիների հետ:

Ուստի, առե՛ք Աստծո սպառազինությունը, որպեսզի կարողանաք չար օրում դեմ կանգնել չարին. և երբ ամեն ինչ կատարեք, հաստատուն կացե՛ք՝ տեղում պինդ կանգնած, ձեր մեջքերը գոտեպնդած ճշմարտությամբ և հագած արդարության զրահը՝ ձեր ոտքերը ամրացրե՛ք խաղաղության Ավետարանի պատրաստությամբ: Եվ այս բոլորի վրա, առե՛ք հավատի վահանը, որով պիտի կարողանաք հանգցնել չարի բոլոր մխացող նետերը: Եվ առե՛ք փրկության սաղավարտն ու Յոգու սուսերը, որ է՝ Աստծո խոսքը (Եփես. 6:10-17):

13. Քանի որ մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, հապա Աստծուց զորություն առած՝ քանդելու համար ամրությունները (Բ Կորնթ. 10:4):

14. Նայե՛ք Հիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին, որն իր առաջ դրված ուրախության համար հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը և մասեց Աստծո աթոռի աջ կողմում:

Ապա ուրեմն՝ մտաբերեցե՛ք Հիսուսին, որ այսպես համբերեց իր հանդեպ մեղավորների ունեցած հակառակությանը, որպեսզի չլինի թե հոգնեք և հուսալքվեք, դուք, որ կռվի մեջ արյուն թափելու չափ չհակառակվեցիք մեղքին (Եբր. 12:2-4):

15. Արդ, նեղությունների համբերի՛ր Հիսուս Քրիստոսի բարի զինվորի պես: Ոչ ոք զինվոր դառնալով, չի զբաղվի աշխարհիկ կյանքի գործերով, որպեսզի զորավարին հաճելի լինի (Բ Տիմ. 2:3-4):

16. Արթուն եղեք, հսկեցե՛ք, քանի որ ձեր ոտիսը՝ սատանան, մռնչում է առյուծի պես, շրջում և փնտրում է, թե ո՛ւմ կուլ տա: Դիմադրեցե՛ք նրան՝ հաստատուն լինելով հավատի մեջ. իմացե՛ք, որ ձեր եղբայրներն էլ աշխարհում կրում են նույն չարչարանքները (Ա Պետ. 4:8-9):

17. Աստված՝ Փրկիչը մեր, պիտի առաջնորդի մեզ: Աստված մեր կենարար Աստվածն է, և Տիրոջ ձեռքում է Ելքը մահվան: Սակայն Աստված պիտի փշրի մեր թշնամիների գլուխը և կարճամազ պիտի պահի նրանց (Սաղմ. 67:20 -22):

18. Ու նրա թշնամիները փոշի պիտի լիզեն (Սաղմ. 71:9):

19. Նրա առջևից հուր պիտի ընթանա, այրելով իր շուրջն եղող թշնամիներին (Սաղմ. 96:3):

20. Աստծո համար դյուրին գործ է շատ մարդկանց մատնել քջերի

ձեռքը: Երկնավորի համար տարբերություն չկա շատի ու

քչի միջև, որովհետև հաղթանակը ձեռք է բերվում ոչ թե շատ զորքով, այլ այն զորությամբ, որ երկնքից է գալիս: Նրանք մեր վրա են գալիս ամբարտավանության գոռոզությամբ և անօրենությամբ, որպեսզի կոտորեն մեզ... և Տերը նրանց աստկեցնելու է մեր ոտքերի առաջ: Գոտեպնդեցե՛ք, քաջ եղեք, մի՛ վախեցե՛ք (Ա Մակաբ. 3:18-22):

21. Փնտրեցե՛ք Տիրոջն ու հզորացե՛ք, փնտրեցե՛ք Նրա երեսն ամեն ժամ (Սաղմ. 104:4):

22. Ով որ վախկոտ ու թուլասիրտ է, թող ետ տուն դառնա. չլինի թե իր եղբայրների սիրտն էլ իր սրտի պես թուլացնի (Բ Օր. 20:8):

23. Ինչ որ է երկնային Տիրոջ կամքը, այդպես էլ թող կատարվի: Նա թող հիշի մեր հայրերի հետ կնքած ուխտը և մեր ոտքերի առաջ թող կոտորի այս զորքը, որպեսզի հեթանոսները գիտենան, թե գոյություն ունի մեկ Աստված, որ փրկում է Իսրայելը (Ա Մակաբ. 3:60-61):

24. Ձորացրո՛ւ ինձ այսօր, Իսրայելի՛ Աստված (Հուդիթ 13:9):

25. Օրհնյալ է Տեր Աստվածն իմ, որ ձեռքերս վարժեցրեց պատերազմի և մատներս՝ ճակատամարտի (Սաղմ. 143:1):

26. Թշնամիներիցս ավելի խելացի դարձրի ինձ քո պատվիրաններով, քանզի նրանք միշտ իմ մոտ էին (Սաղմ. 118:98):

27. Վեր կաց, Տե՛ր, որ ցանուցիր լինեն քո թշնամիները, փախուստի մատնվեն բոլոր քեզ ատողները (Թվեր 10:35):

28. Օգնի՛ր ինձ, Տե՛ր Աստված իմ, և փրկի՛ր ինձ քո ողորմությամբ: Թող իմանան, որ քո ձեռքն այս է, և որ, Տե՛ր, դու՛ արեցիր այս: Թող նրանք անիծեն, բայց դու օրհնի՛ր. ինձ վրա հարձակվողները թող անոթահար լինեն, բայց քո ծառան թող ուրախանա քեզանով: Իմ մասին չարախոսողները թող անոթ հագնեն և իրենց ամոթը թիկնոցի պես կրեն իրենց վրա (Սաղմ. 108:27-29):

29. Ով՛ Տեր, իմ թշնամիներս որչա՛փ շատացան, և շատերը ելան իմ դեմ: Շատերն էին ասում իմ մասին՝ «Սա փրկություն չունի իր Աստծուց»: Բայց դու, Տե՛ր, իմ օգնականն ես, իմ փառքը և գլուխս բարձր պահողը: ... Չեմ սուսկա ես նրանց բյուրավոր զորքերից, որոնք ամեն կողմից պատել ու պաշարել էին ինձ: Արի՛, Տե՛ր, փրկի՛ր ինձ, Աստված իմ, Քանզի կործանեցիր բոլորին, ովքեր իզուր թշնամացել էին ինձ հետ. դու մեղավորների ատամները կփշրես (Սաղմ. 3:1-4 և 7-9):

30. Քո ողորմությամբ կործանի՛ր իմ թշնամիներին, կորստյան մատնիր բոլոր ինձ նեղողներին, քանզի ես ծառան եմ քո (Սաղմ. 142:12):

31. Ես պիտի հալածեմ իմ թշնամիներին, նրանց պիտի կոտորեմ ու հետ պիտի չղառնամ, մինչև որ իսպառ չոչնչացնեն նրանց: Ես խորտակելու եմ նրանց, որ ոտքի չկանգնեն: Նրանք պիտի ընկնեն իմ ոտքերի տակ: Դու ինձ զորությամբ պիտի օգնես, որ պատերազմեմ, և դու իմ դեմ ելնողներին իմ ձեռքը պիտի հանձնես (Բ Թագ. 22:37-0):

32. Օրհնյալ է բարձրյալն Աստված, որ քո թշնամիներին մատնեց քո ձեռքը (Ծննդ. 14:19):

33. Կերջին թշնամին, որ պիտի կործանի, մահն է (Ա Կորնթ. 15:26):

34. Հնազանդվեցե՛ք ուրեմն Աստծուն և դիմադրեցե՛ք սատանային, ու նա կփախչի ձեզանից: Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: Մեղավորներ, մաքրեցե՛ք ձեր ձեռքերը. երկմիտներ, ուղղեցե՛ք ձեր սրտերը (Հակ. 4:7-8):

35. Գոհություն մատուցե՛ք Տիրոջը, քանզի քաղցր է Նա, քանզի հավերժ է ողորմությունը Նրա: Այսպես թող ասեն Տիրոջից փրկվածները, որոնց Նա ազատեց թշնամու ձեռքից (Սաղմ. 106:1-2):

36. Եվ գահի վրա նստողն ինձ ասաց. «Ահավասիկ ամեն բան նոր են դարձնում»: Ապա ինձ ասաց. «Գրի՛ր. այս խոսքերը ճշմարիտ և վստահելի են»: Դարձյալ ինձ ասաց. «Ես եմ Ալֆան և Օմեղան, Սկիզբը և Վախճանը. ես ծարավածներին ձրի պիտի տամ կյանքի ջրի աղբյուրից: Ով հաղթի, պիտի ժառանգի այս ամենը. և ես նրանց համար Աստված պիտի լինեմ, և նրանք ինձ համար պիտի լինեն որդիներ: Իսկ գալով ծուլերին ու անհավատներին, ոճրագործներին և պռնիկներին, կախարդներին և կռապաշտներին, հմայողներին և բուր ստախոսներին, ամբարիշտներին՝ նրանց բաժինը ծծմբով և հրով այրվող լճի մեջ է, որ երկրորդ մահն է» (Հայտ. 21:5-8):



Հայրերից



1. Ով չի ձգտում իմանալ, թե ինչպես պետք է խուսափել թշնամու ցանցերից, նա կընկնի նրանց մեջ և էլ երբեք չի ազատվի նրանցից: Նույնիսկ մեռնելիս՝ հոգեվարքի մեջ լինելով, պետք է իմանալ թշնամու խորամանկությունները և զգոն լինել («Հոգևոր պատերազմ» գրքից):

2. Դիմադրենք սատանային և աշխատենք ճանաչել նրա դավերը (Անտոն Անապատական):

3. Նա, ով ծանոթ է սատանայի խարդավանքներին, նենգություններին և խորամանկություններին, պարտավոր է մյուսներին էլ զգուշացնել այդ մասին (Անտոն Անապատական):

4. Երբ մենք ընդհանրապես մերժում ենք դևերի կորուսիչ ներշնչումները, այնժամ նրանք թողնում են մեզ և էլ չեն համարձակվում մոտենալ: Չար ոգիները գիտեն, որ երբ Աստված թույլ է տալիս փորձել Իրեն նվիրված մարդկանց, հենց այդ մարդկանց միջոցով էլ իրենց համար մեծ պատիժ է պատրաստում (Անտոն Անապատական):

5. Ես գիտեմ ոմանց, որոնք բազում ջանքերից հետո շեղվել են ճանապարհից և մտավոր խանգարում ստացել, որովհետև իրենց հույսը դրել էին իրենց իսկ գործերի վրա՝ համարելով, որ դրանք

աստվածահաճո բնույթ են կրում, դրանով և խելաթյուրել են Նրա պատվիրանը, Ով ասաց. «Հարցրո՛ւ քո հայրերին, և քեզ կպատմեն, քո ծերերին և նրանք քեզ կասեն» (Բ Օր. 32:7) (Անտոն Անապատական):

6. Արիությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ անտեսանելի թշնամիների հակառակության ժամանակ ճշմարտության մեջ մնալ (Անտոն Անապատական):

7. Ջանք մի գործադիր ճակատագրի մասին Աստծո գաղտնիքների մեջ խորանալու, այդ բանը չեն համարձակվել անել նաև սուրբերը: Մենք տգետ ենք, որպեսզի մեր կարծիքը ունենանք Աստծո անհաս դատաստանների մասին (Անտոն Անապատական):

8. Ատիր այն ամենը, ինչը վնասակար է հոգուդ (Անտոն Անապատական):

9. Ամեն ջանք թափիր, որպեսզի հեռանաս այն մարդկանցից, որոնք օտար հայացքներ և խորհուրդներ ունեն (Անտոն Անապատական):

10. Չար ոգիները հաճախակի, հատկապես ներկա ժամանակներում, ներշնչում են մեղավորին անհավատություն հենց իրենց՝ չար ոգիների գոյության հանդեպ, որպեսզի ավելի մեծ զորությամբ ներքաշեն նրանց իրենց կործանարար ազդեցության տակ (Հովհան Ոսկեբերան):

11. Պատերազմը սատանայի դեմ դադարեցնում է մյուս պատերազմը, որը մղվում է Աստծո դեմ: Եթե թշնամանում ենք սատանային, նշանակում է հաշտվում ենք Աստծո հետ (Հովհան Ոսկեբերան):

12. Նրանց համար, որոնք մշտապես արթուն են և զգաստ, սթափ են և ուշադիր իրենց նկատմամբ, այդպիսիներին սատանան ոչ միայն չի վնասում, այլև օգուտ է տալիս, ոչ թե իր ցանկությամբ, որը չար է, այլ մշտական արթնությամբ նրանց, որոնք նրա չարությունը իրենց օգտին են բանեցնում: Մենք պարտվում ենք ոչ թե դիվային զորությունից, այլ մեր սեփական թուլությունից (Հովհան Ոսկեբերան):

13. Չար ոգին առավել ուժգնությամբ հարձակվում է հոգևոր կյանքում առաջադիմել ցանկացողների վրա: Այնտեղ են շատ ցանցեր հյուսվում, որտեղ առաքինություններ կան (Հովհան Ոսկեբերան):

14. Միայն սկսենք, ու Աստված էլ կսկսի մեր փրկությունը (Հովհան Ոսկեբերան):

15. Դևերը մեզ մղում են հուսահատության, քանի որ գիտեն, եթե զղջանք, առանց վարձքի չպիտի մնանք: Ինչպես որ մի բաժակ սառը ջուր տվողը վարձքը Աստծուց պիտի ստանա, այնպես էլ՝ իր գործած մեղքերի համար զղջացողը: Եթե նույնիսկ մեղքերի համար արժանապես չուղղվի, այնուամենայնիվ, նույնիսկ զղջման համար վարձք կունենա (Հովհան Ոսկեբերան):

16. Հոգևոր կյանքին մերձեցողին սպասվում է պատերազմ ոչ մարդկանց հետ, այլ դևերի և անմարմին ուժերի: Այս պատճառով էլ նրանց առաջնորդը ոչ թե որևէ մարդ է կամ հրեշտակ, այլ Ինքը՝ Աստված: Եվ այս պատերազմի զենքերն էլ հանապատասխանում են պատերազմի բնույթին՝ սրանք պատրաստված են ոչ թե կաշվից և երկաթից, այլ արդարությունից, ճշմարտությունից, հավատից և ողջախոհությունից (Հովհան Ոսկեբերան):

17. Հնուն քրիստոնյաները խաչ էին պատկերում դռներին,

ամանեղենին և նույնիսկ կենդանիների վրա (Յովհան

Ոսկեբերան):

18. Թռչնորս է սատանան, վեր եղիր նրա խայծից (Յովհան Ոսկեբերան):

19. Սուրբ Գիրքը կարդալով, նախ պետք է կատարենք մեր հասկացածը (Յովհան Ոսկեբերան):

20. Տեսնում են շատերին, որոնք հաճախակի չեն հաղորդվում: Այս բանը սատանայից է: Սա նրա արած գործն է, որպեսզի մեզ ետ պահի Քրիստոսի Մարմնի հետ հաճախակի հաղորդվելուց: Եվ ճշմարիտ է այս բանը, թե ով հաճախակի չի հաղորդվում, դրանով իրեն դնում է սատանայի իշխանության տակ, իսկ սա էլ իր հերթին մարդուն առաջնորդում է դեպի չարը (Յովհան Ոսկեբերան):

21. Մոտենալ հաղորդությանն առանց անձնաքննության՝ վտանգավոր է, իսկ չհաղորդվելը՝ սով է և մահ (Յովհան Ոսկեբերան):

22. Երբեք դուրս մի արի՝ առանց ասելու. «Հրաժարիմք ի սատանայէ ...»: Եվ եթե քեզ հանդիպի չար մարդ կամ նույնիսկ սատանան, խաչակնքվիր ու անսասան կմնաս (Յովհան Ոսկեբերան):

23. Աղոթքը դևերի դեմ լավագույն զենքերից մեկն է, հատկապես կարճատև և լարված աղոթքը. «Կհալածեն թշնամիներին, կհասնեն նրանց և ետ չեն դառնա, մինչև չսպառեն նրանց», կամ՝ «Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, ողորմիր մեղավորին», և կամ՝ «Մեղուների պես շուրջս լցվեցին, վառվեցին, բորբոքվեցին, ինչպես հրաճարակ փուշ, բայց Տիրոջ անվամբ վանեցի նրանց» (Մակար Մեծ):

24. Երբեմն նույնիսկ մեկ անգամ ուրիշներին փորձությանդ մասին պատմելը բավական է լինում, որպեսզի փորձությունը խափանվի: Խավարի ոգիները վախենում են լուսից, վախենում են իրենց բացահայտ մերկացումից և չքվում են, երբ իրենց խարդավանքները բացահայտվում են ուրիշների ներկայությամբ (Մակար Մեծ):

25. Մտիր սրտիդ մեջ և այնտեղ պատերազմիր բարի դեմ (Մակար Մեծ):

26. Պիղծ դևերից ոմանք միշտ նստում են կարդացողների մոտ և ամեն կերպ ջանում են նրանց միտքը շեղել: Հաճախ, որպես առիթ օգտագործում են աստվածային գրվածքները և այն շեղում են դեպի չար մտքերը: Պատահում է, որ հակառակ բնության, ստիպում են հորանջել, կամ խոր քուն են բերում, որը շատ է տարբերվում սովորականից: Սա ես իմ վրա եմ զգացել, բայց լավ չէի հասկանում պատճառները, չնայած որ հաճախ էի ընկնում դրանց մեջ: Սուրբ մարդկանցից լսել եմ, որ անժամանակ հորանջումներն ու քունը դևերից են, և որպես ապացույց նրանք բերում են մի սովորույթ, որ օգտագործվել է հնում և մեզ է հասել հին ավանդություններից: Նրանք հորանջելիս խաչ էին հանում իրենց շուրթերին: Այս բոլորը մենք կրում ենք նրանցից այն բանի համար, որ չենք պահում սթափ ուշադրություն և երկյուղ՝ Կենդանի Աստծո սուրբ խոսքը կարդալիս (Եվագր Պոնտացի):

27. Մխացող նետն այրում է հոգին, իսկ առաքինասեր այրը հանգցնում է այն (Եվագր Պոնտացի):

28. Ով շատ է հոգում իր հոգու մասին, նրա մասին Աստված էլ է հոգում (Եվագր Պոնտացի):

29. Աղանդավորների ճառերը մահվան գուժկաններ են,

ով ընդունում է նրանց, կործանում է իր հոգին:

Հեռացրու քեզնից ստահոտ գիտությունները: Ես շատ եմ գրուցել այդ մոլորյալների հետ, նրանց մթազնած ճառերը հետազոտել և նրանցում գտել եմ իժի թույն: Ով ընդունում է այն՝ կործանվում է, ով սիրում է նրանց՝ կլցվի չարիքով (Եվագր Պոնտացի):

30. Աստված է միայն սրտագետ, իսկ սատանան այն քննել չի կարող. «Թե ես մեռք գործեցի՝ ի՞նչ կարող եմ անել քեզ, որ միտքն ես մարդկանց քննում միշտ» (Յով 7:20), «Նա, որ ստեղծել է նրանցից յուրաքանչյուրի սիրտը, հաշվի է առնում նրանց բոլոր գործերը» (Սաղմ. 32:15): Բայց այն խոսքերից, որ մենք արտաբերում ենք, կամ մարմնի ինչ որ շարժմամբ նրանք հասկանում են, թե ինչ է կատարվում մեր սրտում: Օրինակ, երբ մենք խոսակցության մեջ մերկացնում ենք նրանց, ովքեր մեզ չարախոսել են, մեր այդ խոսքերից դևերը հանգում են այն բանին, որ մենք նրանց հանդեպ սիրով չենք տրամադրված, և սկսում են նրանց դեմ չար մտքեր հարուցել մեր մեջ և ընդունելով այն՝ մենք ընկնում ենք հիշաչարության դևի բռնակալության տակ, իսկ սա մշտապես վրեժխնդրության մտքեր է հարուցում: Եվ սրա համար Սուրբ Հոգին մերկացնում է մեզ, ասելով. «Նստած չարախոսում էիր եղբորդ մասին և մորդ որդու վրա զրպարտություն բարդում» (Սաղմ. 49:20): Սրանք բացելով մտքերի դուռը, հիշաչարությամբ խռովում են միտքը, աղոթքի ժամանակ անընդմեջ պատկերելով թշնամու դեմքը մեր առջև, և նրան միշտ մեր առջև ենք տեսնում՝ Աստծո փոխարեն նրան ունենալով որպես աստված: Քանի որ աղոթքի ժամանակ ով որ մեր մտածումների առարկան է, նա էլ մեր աստվածն է: Դրա համար էլ խուսափենք չարախոսության հիվանդությունից, ոչ ոքի չհիշենք չարությամբ, նաև չծամածռենք մեր դեմքը, երբ հիշեցնում են որևէ մերձավորի մասին: Քանի որ չար դևերը հետաքրքրությամբ հետևում են մեր բոլոր շարժումներին և ուսումնասիրում այն ամենը, ինչը կարող են օգտագործել մեր դեմ: Ոչ մեր վեր կենալը, ոչ նստելը, ոչ կանգնելը, ոչ արարքները, ոչ խոսքերը, ոչ հայացքը բաց չեն թողնում. «Ինձ հետապնդողները բռնադատեցին ինձ, իմ դեմ չարիք նյութողները անօրենություն խոսեցին և գիշեր-ցերեկ նենգություն մտածեցին» (Սաղմ. 37:13), որպեսզի աղոթքի ժամանակ աղոտտեն խոնարհ միտքը և հանգցնեն երանելի լույսը (Եվագր Պոնտացի):

31. Անարդար դատավորը ապականված խիղճն է (Եվագր Պոնտացի):

32. Կանգնիր, սիրելիս, կայտառացիր, ջանա մշտապես կարդալ Աստվածային գրքերը, որպեսզի նրանցից սովորես, թե ինչ պետք է անել, որպեսզի խուսափես թշնամական ցանցերից և ստանաս հավիտենական կյանքը (Եվագր Պոնտացի):

33. Հավատացյալի աղոթքը մեծագույն տառապանք է պատճառում չար ոգիներին:

Եթե աղոթում ես ընդդեմ ավտերի կամ քեզ հետ մարտնչող դևերի, հիշիր ասվածը. «Կհալածեն իմ թշնամիներին և կհասնեն նրանց և չեն դառնա, մինչև չսպառեն նրանց» (Սաղմ. 18:38-39): Սա այդ ժամին կասես մեծ խոնարհությամբ՝ անձո սպառազինելով հակառակորդի դեմ: (Նեղոս Սինայեցի):

34. Ուզում ես թշնամուն հալից զցել, հատիր մեղքը, և այդ ժամանակ կարող ես նրա վրա ծիծաղել, ինչպես փետրած ճնճղուկի (Նեղոս Սինայեցի):

35. Դևերը հոգու դեմ պայքարում են մտածմունքների միջոցով, որոնց պետք է դիմակայել համբերությամբ, ու նրանք, տեսնելով ճակատամարտի այդ զորավոր առաջնորդին, արդեն վախով են պատերազմի մտնում (Նեղոս Սինայեցի):

36. Մի ասա, թե չես կարողանում պատվիրանները պահել, որովհետև հայրդ կամ մայրդ, կինդ կամ երեխաներդ, կամ ուրիշ որևէ մեկը խոչընդոտում է: Նրանք չեն կարող քեզ ազատել զալիք բարկությունից ու չսատկող որդերից: Առաքինությունների ու Աստծով հարստանալու ճանապարհին ով էլ որ քեզ խոչընդոտ հանդիսանա, նրան համարիք գարշելի և ատելի (Նեղոս Սինայեցի):

37. Երանելի է նա, ով իր մահվան ժամին Աստծուն հաճելի սուրբ զոհի է նման, ով մեծ ուրախությամբ է բաժանվում մարմնից և ունայն կյանքից: Հրեշտակները տեսնելով նրան երկնքում, գովում են, ինչպես իրենց նմանին (Նեղոս Սինայեցի):

38. Աշխատիր միշտ լսել ու խոսել սուրբերի կատարած գործերի մասին, որովհետև դրանք հոգին մղում են նրանց նմանվելու (Նեղոս Սինայեցի):

39. Վշտերի մեջ գոհացիր Աստծուց, և մեղքերիդ բեռը կթեթևանա (Նեղոս Սինայեցի):

40. Հառաչիր, երբ մերձավորիդ կտեսնես մեղք գործելիս, որպեսզի քեզ համար էլ հառաչես, քանզի բոլորս էլ մեղավոր ենք (Նեղոս Սինայեցի):

41. Եթե չլիներ մեզ փորձող և նեղող սատանան, ապա հայտնի չէր դառնա, թե ով է ջանասեր և ով՝ ծույլ ու անբարեսեր (Նեղոս Սինայեցի):

42. Եթե քեզ դևերը չափից ավելի սխրագործության մղեն, դու նրանց մի՛ լսիր (Աբբա Եսայի):

43. Հինգ բանի պատճառով է սաստկանում պատերազմը՝ ա) դատարկախոսության, բ) փառասիրության, գ) շատ քնելու, դ) զեղեցիկ հագուստներ սիրելու և ե) գերհագեցման (Աբբա Եսայի):

44. Մարդ, քո կատաղի թշնամիները չեն քնում, նրանք անդադար քո կործանման մասին են հոգում, դու ևս անհոգ մի եղիր (Աբբա Եսայի):

45. Մահվան ժամին թշնամին վախեցնում է անցած սայթաքումների հիշողությամբ (Աբբա Եսայի):

46. Սուրբ Գիրքը չիմանալը մեծ ու մութ խորխորատի է նման (Աբբա Եսայի):

47. Մի վստահիր ինքդ քեզ, քանի դեռ պանդուխտ ես այս աշխարհում և քանի դեռ չես անցել օդային խավար իշխանությունների միջով (Աբբա Եսայի):

48. Չնայած որ դևերը փորձություններ են բերում մեր վրա, սակայն առանց մեր թուլտվության այն իրականացնել չեն կարող (Աբբա Եսայի):

49. Սուրբությունների պատճառը չիմացողը՝ հեշտությամբ է ընկնում (Մարկոս ճգնավոր):

50. Մարդու փառքի հանդեպ ունեցած նախանձից՝ ցանկանալով կործանել մարդկային ցեղը, սատանան մտածել է տարբեր խորամանկ միջոցներ.

նախ անգիտություն, ապա՝ կռապաշտություն, հետո՝ անառակ

ապրելակերպ, իսկ ներկայումս աղանդների միջոցով խաբեությամբ և մոլորությամբ ջանում է ամեն կերպ հեռացնել մեզ երկնքից (Եպիփան Կիպրացի):

51. Երբ սատանան տեսնում է, որ Աստված ողորմում է մարդուն և պատրաստ է ներել նրան՝ թեթևացնելով կրքերի լուծը Իր Խոսքով կամ Իր ծառաներից մեկի միջոցով, այնժամ սատանան ավելի մեծ պատերազմ է մղում նրա դեմ կրքերը բորբոքելով: Հայրերը այս բանը լավ իմանալով, ամրապնդում են մարդուն իրենց երկերի միջոցով և թույլ չեն տալիս նրան երկնքել: Մեկն ասել է. «Դու ընկա՞ր: Կանգնիր, և եթե նորից ընկնես, նորից կանգնիր՝ ապաշխարության միջոցով»: Մեկ ուրիշն էլ ասում է. «Ով ցանկանում է առաջադիմել առաքինասեր գործերի մեջ, չպետք է փոքրոգություն անի, և եթե պատահի, որ այդ ճանապարհին ընկնի, չպետք է հուսալքվի, այլ նորից պայքարի»: Մի խոսքով, նրանցից յուրաքանչյուրն էլ տարբեր կերպերով՝ մեկն այսպես, մյուսն՝ այնպես, ձեռք են մեկնում մարտնչողներին և թշնամու կողմից վիրավորվածներին (Աբբա Դորոթեոս):

52. Սատանայի դեմ ամենասուր զենքերից մեկը սաղմոսն է քրիստոնյայի շուրթերին (Եփրեմ Ասորի):

53. Սուրբ Հաղորդությունից և Եկեղեցուց հեռացողները դառնում են Աստծո թշնամի և դևերի բնակարան (Եփրեմ Ասորի):

54. Մարմնական հեշտությունը սատանայի խայծն է, որի միջոցով մեզ որսում ու դժոխք է տանում (Բարսեղ Կեսարացի):

55. Չարը ոչ մի դեպքում չարին չի ոչնչացնում, այդ պատճառով էլ, եթե մեկը չարիք անի քեզ, դու նրան բարություն արա, որպեսզի բարությամբ հաղթես չարին (Հայր Պիմեն):

56. Ով տրտմջում է իր բախտից, նա Քրիստոսի զինվորը չէ (Հայր Պիմեն):

57. Կարևորագույնը սատանայի համար՝ դեպի մեղքն ուղղված առաջին քայլերն են (Հերոնիմոս Երանելի):

58. Հանցագործը երբեմն կարող է խուսափել դատաստանից, բայց սեփական խղճի դատաստանից երբեք չի խուսափի (Գրիգոր Աստվածաբան):

59. Մենք Սամսոնից ավելի ուժեղ չենք, ոչ էլ Սողոմոնից ավելի իմաստուն, և ոչ էլ երանելի Դավթից ավելի ողջախոհ, ու Պետրոսից առավել չենք սիրում Աստծուն: Ուրեմն չապավինենք ինքներս մեզ, քանի որ Սուրբ Գրքում ասվում է, թե՛ ինքն իրեն հուսացողը գլորվում է սարսափելի անկումով (Աբբա Իսիդոր):

60. Բարձրաստիճան հրեշտակների դասից ընկնելով՝ սատանան դատապարտված է մնալ օդում, ինչպես բանտում (Օգոստինոս Երանելի):

61. Մեզ՝ Աստծուն սիրողներին, հարկ է ցանկանալ և աղոթել, որպեսզի մեր այս կյանքից հեռանալու պահին ոչ մի տեսակի վախի հաղորդ չլինենք, որովհետև ում որ այդ ժամանակ վախը պատի, նա անխռով չի կարող անցնել դժոխային իշխանների միջով, որովհետև հոգու երկչոտությունը նրանք համարում են որպես նշան չար բաների հետ հաղորդակցության, ինչպես որ նրանց մեջ կա այդ բանը (Աբբա Դիադիմ):

62. Երբ մեզ վրա են հասնում հիվանդությունները, այդ ժամանակ

կատարելագործվում են մեր առաքինությունները, իսկ հավատը փորձությունների մեջ հաստատ պահելով՝ արժանանում ենք պակսի: Հենց սրանում է կայանում մեր և մնացած մարդկանց միջև եղած տարբերությունը, որոնք չեն ճանաչում Աստծուն և չարչարանքների մեջ բողոքում են ու տրտնջում (Կիպրիանոս Կարթագենացի):

63. Այս բոլորը, սիրելիներ, մենք գրում ենք ոչ միայն ձեզ խրատելու, այլ նաև մեզ հիշեցնելու համար. քանզի մենք ևս գտնվում ենք նույն ասպարեզում և միևնույն պայթարն է վիճակված մեզ: Ուրեմն թողնենք դատարկ ու սին հոգսերը և դիմենք մեր պայծառ ու արժանավայել ավանդության օրենքներին: Տեսնենք, թե ինչն է բարի, ինչն է հաճելի և ընդունելի մեր Արարչին (Կղեմես Հռոմեացի):

64. Հարյր. -Ասա ինձ, հայր, մե՞նք ենք տառապում անհավատությամբ, թե՞ դեռն են մեզ այս վիճակին հասցնում:

Պատ. -Դեռը նախանձից մեզ անհավատության մեջ են գցում: Եվ եթե մենք ընդունում ենք այս, ապա դառնում ենք նրանց ծառան ու հանցակիցը (Բարսեղիսկոս Մեծ):

65. Մարդը երբեք չի կարող ճանաչել Աստծո զորությունը՝ գտնվելով մարմնավոր հանգստության մեջ (Իսահակ Ասորի):

66. Ձինվորը, որ պատերազմի դաշտում ստացել է ծանր վերքեր իր երեսի վրա, ոչ միայն չի հեռացվում գորբից թագավորի կողմից, այլ ընդհակառակը, պարգևատրվում է, որպեսզի էլ ավելի նախանձախնդիր լինի համարձակ պատերազմ վարելու մեջ: Այդպես էլ Երկնավոր Թագավորը փառաց պակս է տալիս նրան, ով շատ փորձություններ և ցավեր է կրում դեռից (Հովհաննես Սանդուղք):

67. Եթե ձեռք բերես համբերության գավազանը, ապա դժոխքի շները կդարեն անամոթաբար պտտվել շուրջդ (Հովհաննես Սանդուղք):

68. Երբ պատրաստվում ենք վեր կենալ՝ աղոթքի կամ եկեղեցի գնալու, այդ ժամանակ դեռից ոմանք մոտենում են մեր անկողնուն և համոզում են, որպեսզի նորից պառկենք՝ ասելով. «Համբերիր, երբ վերջանա սկզբնական երգեցողությունը եկեղեցում, այն ժամանակ կգնաս»: Մյուսներին, որոնք արդեն կանգնել են աղոթքի, ընկղմում են քնի մեջ: Կան նաև դեռ, որոնք առաջացնում են անժամանակ և ուժեղ քաղցի զգացում: Ոմանք էլ եկեղեցում խոսակցության մեջ են ներքաշում: Ուրիշները շեղում են մեր մտքերը պիղծ մտածումներով: Կան այնպիսիները, որոնք ստիպում են մեզ՝ որպես տկարների, եկեղեցում հենվել պատին, իսկ երբեմն էլ մղում են չափազանց հաճախ հորանջել: Ոմանք էլ աղոթքի ժամանակ ծիծաղ են գրգռում, որպեսզի դրա միջոցով Աստծո դժգոհությանը արժանացնեն մեզ: Եվ մի՞թե կարելի է թվարկել խավարի իշխանի բոլոր խարդավանքները, որը ամեն մի նենգության դիմում է, որպեսզի շեղի մեզ աղոթքից (Հովհաննես Սանդուղք):

69. Օրվա ընթացքում թող ոչ ոք իր մտքում չպատկերացնի երազում տեսած պղծությունները, քանի որ դեռի մտադրությունն էլ դա է՝ երազներով պղծել մեզ՝ արթուններիս (Հովհաննես Սանդուղք):

70. Վտանգավոր է հագուստով լողանալը, անվտանգ չէ նաև աստվածաբանությանը մոտենալ նրան, ով որևէ մոլություն ունի (Հովհաննես

Սանդուղք):
71. Ով դարձել է Աստծո ծառա, նա վախենում է միայն իր Տիրակալից, իսկ ում մեջ չկա Տիրոջ երկյուղը, նա հաճախ վախենում է իր իսկ սովերից (Հովհաննես Սանդուղք):

72. Երբ փորձության հանդիպես, մի ձգտիր իմանալ, թե որտեղից և ինչու այն եղավ, այլ աշխատիր փորձությունը կրել գոհությամբ ու անհիշաչարությամբ (Մարկոս Ճգնավոր):

73. Պետք է շատ զգոն լինել, որովհետև մեր թշնամին չի քնում: Սկզբում նա պատճառ դարձավ մեր դրախտից վտարվելուն, իսկ հիմա արգելք է հանդիսանում մեր երկինք ելնելուն (Հովհաննես Պահեցող):

74. Հոգևոր կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ անընդմեջ պատերազմ՝ աներևոյթ թշնամիների դեմ (Թեոդորոս Ստուդիտ):

75. Բոլոր խորամանկությունները և բոլոր խարդավանքները, որ նյութում է մեր դեմ սատանան, նպատակ ունեն քրիստոնյային դուրս կորզել Քրիստոսի ձեռքից: Այնպիսի մի դիրքի մեջ է ներքաշում մարդուն, որ ինքնախաբեությամբ ասի կամ զոհե մտածի, թե այս կամ այն բարի գործը ինքը գործեց և խելամիտ բաները ինքնուրույն մտածեց կամ իմաստուն բաներ խոսեց: Ուրեմն, չվերագրենք մեզ Աստծունը, թեկուզ աննշան, չնչին հարցերում: Ահա սրա դեմ մշտապես պատերազմ մղելը մեծ հերոսություն է քրիստոնյայի համար (Սիմոն Նոր Աստվածաբան):

76. Աստված պահանջում է մարդուց, որպեսզի նա Իրենից հոգևոր իմաստություն խնդրի՝ չարի խարդավանքները ճանաչելու համար (Սիմոն Նոր Աստվածաբան):

77. Խիղճը ճշմարիտ ուսուցիչ է, նրան լսողը գայթակղության չի հանդիպի (Աբբա Փաղաքիա):

78. Մինչև սիրտդ չմաքրվի՝ մի հնազանդվիր նրան (Մարկոս Ճգնավոր):

79. Մեծ երջանկություն է, երբ մտային հարձակումների ժամանակ կա մեկը, որի առջև կարող ես խոստովանել դրանք: Մարդկային ցեղի թշնամին ատում է մտածումների բացահայտման ուղին և ամեն կերպ ջանում է արգելք հանդիսանալ Աստծո ծառային, որը ցականում է արժանանալ Տիրոջ ողորմությանը՝ մեղքերի անհատական խոստովանությամբ: Այսպիսի ընթացքը կամաց-կամաց սպանում է կրքերը մեր մեջ (Գրիգոր Երկխոս):

80. Մահվան պահին լինող թշնամական չորս փորձությունների մասին և այն հաղթահարելու միջոցը:

Առաջինը փորձությունն է հավատքի դեմ:

Այս դեպքում թշնամին աշխատում է ներմուծել քո մեջ անհավատության մտքեր, կամ հայտնվելով, տեսանելիորեն սկսում է խոսել հավատքի դեմ, դու նրա հետ վեճի մի բռնվիր, այլ ինքդ քո մեջ ամրապնդիր հավատք այն բանի հանդեպ, ինչի դեմ որ նա հարձակում է գործում, և ասա նրան սուրբ վրդովմունքով. «Կորիր աչքիցս, սատանա, ստի հայր: Ես չեմ ուզում քեզ լսել, ամբողջ հոգով միշտ հավատացել ու հավատում եմ այն ամենին, ինչին որ հավատում է մայրն իմ սուրբ՝ Եկեղեցին: Եվ սա ինձ բավական է»: Եվ

երբեք թույլ մի տուր անհավատության մտքեր և ամուր

կանգնիր Սուրբ Գրքի խոսքերի համեմատ (Ժողովող 10):

Եթե չարահմար այս օձը հարցնի քեզ՝ ասելով. «Իսկ ի՞նչ է սովորեցնում եկեղեցին», մի պատասխանիր և ուշադրություն մի դարձրու նրա խոսքերի վրա՝ արհամարհելով նրան և ամուր գիտակցելով, որ նա իրենից միայն սուտ և նենգություն է ներկայացնում, քանի որ քեզ հետ խոսում է, որպեսզի բռնացնի խոսքի վրա, բայց դու սրտիդ մեջ խորացիր և ծանրացիր հավատքի վրա:

Իսկ եթե քեզ հավատքի մեջ ամուր ես զգում և ուզում ես խայտառակ անել թշնամուն, ապա ասա նրան, որ եկեղեցին սովորեցնում է, թե՛ մի է ճշմարտությունը: Իսկ եթե հարցնի, թե ո՞րն է ճշմարտությունը, պատասխանիր նրան այն, որ Տեր Հիսուսն իր խաչով ջախջախեց գլուխդ և կործանեց իշխանությունը: Իսկ հետո մեզ համար խաչված Տիրոջ վրա սևեռվիր հոգով և աղոթիր՝ ասելով. «Աստված իմ, Արարիչ իմ և Քավիչ, շտապիր ինձ օգնության, և Քո սուրբ հավատի ճշմարտության մեջ մի թող երկմտեմ, նույնիսկ անմշան, այլ օրհնիր, որպեսզի ես, որ ծնվեցի Քո շնորհով այս ճշմարտության մեջ, այնպես էլ սրա մեջ մնալով՝ ավարտեմ իմ մահկանացու կյանքը Քեզ փառավորող մահով» (Հայր Նիկողոսյան):

81. Մահվան ժամանակ երկրորդ փորձությունը հուսահատությունն է:

Երկրորդ փորձությունը, որով ուզում է մեզ խոցել թշնամին, հուսահատությունն է, որ մեր մեջ ջանում է առաջացնել վախի միջոցով՝ մեր բազում մեղքերի հիշողությամբ: Այս վախից խուսափելու միայն մի միջոց կա, հավատքը Քրիստոսի քավչարար մահվան հանդեպ, որ եղավ մեր մեղքերի համար:

Թշնամին նսեմացնելով այս հավատքը, վախը մեր մեղքերի հանդեպ այնքան է ուռճացնում, որ ճնշում է մեր մեջ փրկության ամեն հույս և կործանում հուսալքությամբ ու անհուսությամբ:

Որի համար և եղբայր իմ, նախօրոք պատրաստվիր այս հարձակմանը դիմակայելու համար, որպեսզի մահվան դարպասներին հասնելու ժամանակ կարողանաս ամուր բռնել մեր հաղթական դրոշը՝ Քրիստոսի խաչը, այսինքն՝ Քրիստոսի քավչարար մահվան հանդեպ սրտի մեջ ամուր հավատք ունենալ: Երբ արդեն կմտնես մահվան դարպասներով և կզգաս մման հարձակում, ապա առաջին գործդ այն է, որ դա համարես մեղքերիդ հիշողությունը, ոչ թե անձիցդ եկող բնական մի բան, այլ թշնամական հարձակում:

Ընկալելով այս ամենը, դու չես կարող չխոստովանել, թե ինչ արագ մեղքերի հիշողությունը սկսում է ճնշել քեզ և զգել հուսահատության մեջ, մարում է փրկության ամեն մի հույս և կործանում մերժվածության վախով, սակայն այս բոլորը դիվային հարձակումներ են: Այս բոլորը գիտակցելով, քեզ համար արդեն դժվար չի լինի հուսալ և վանել ամեն հուսահատություն: Ապավինելով հույս տածելը ամրապնդում է հույսը Աստծո ողորմածության վրա, որի անհունության մեջ անհետանում են մեր անհամար մեղքերը, հաստատելով ամուր հանդավածության վրա, որ Աստված մեր փրկությունն է ցանկանում, այլ ոչ թե մեր կորուստը:

Այս հանդգնումը կարող է միշտ ամրապնդվել, առավել ևս այն ժամանակ, երբ ապավինում ենք մեր Տեր Փրկչի խաչի մահվան անսահման գործությանը:

Եվ ահա, թե ինչպիսի աղոթք է պատշաճ քեզ անել, երբ

մտնում ես մահվան դարպասներից ներս:

«Տեր, բազում եմ պատճառները, որպեսզի ես մտավախություն ունենամ, թե Դու Քո արդարությամբ՝ կդատապարտես ինձ և կմերժես՝ իմ մեղքերի պատճառով, բայց առավել համարձակություն ունեմ՝ Քո անչափ ողորմածությանը հուսալով, Հիսուս Քրիստոսով՝ մեր Քավիչով ու Փրկչով: Եվ այս պատճառով, աղաչում եմ՝ հուսալով շնորհիդ վրա, խնայիր ինձ, թշվառ արարածիս, իմ գործած բազում մեղքերիս պատճառով դատապարտվածիս, բայց մաքրված Քո Որդու և մեր Աստծո անգին արյամբ, և թող փառավորեմ քեզ հավետ: Ամբողջովին հանձնում եմ ինձ Քո ձեռքը. վարվիր ինձ հետ Քո ողորմածությանդ համեմատ: Դու ես իմ կյանքի միակ Տիրակալը» (Հայր Նիկողոսյան):

82. Մահվան ժամին երրորդ փորձությունը լինում է փառամոլությամբ և ինքնագնահատանքով, որը մղում է մարդուն իր կատարած գործերին ապավինել: Եվ այս պատճառով միշտ, առավել ևս մահվան ժամին, ոչ մի դեպքում թույլ մի տուր, որպեսզի ուշադրությունդ քեզ վրա սևեռես, գոհ լինես ինքդ քեզանից և քո գործերից, անգամ եթե քո առաքինություններով բոլոր սրբերից առաջ անցած լինես: Գոհացիր Տիրոջով և հույսդ անմնացորդ դիր Նրա ողորմածության և Տիրոջ փրկարար տառապանքների վրա և կփրկվես՝ ամեն կերպ, մինչև վերջին շունչդ փչելը, ինքդ քեզ նսեմացրու:

Եվ եթե միտքդ գա կատարածդ բարի գործերից մեկը, իսկույն ստիպիր քեզ մտածել, որ Աստված է քո միջոցով կատարողը, և ոչ թե դու, և որ դա միմիայն Նրանից է բխել:

Պատասպարվիր Աստծո ողորմածությամբ, սակայն թույլ մի տուր ենթադրել, որ Տերը քեզ կողորմի՝ քո բազում բարի գործերի, հոգևոր պատերազմում քո տարած հաղթանակների և համբերությանդ համար: Ամուր պահիր քեզ փրկչական երկյուղի մեջ, անկեղծորեն խոստովանելով, որ քո բոլոր ջանքերն ու սխրանքները սին ու անպտուղ կլինեին, եթե Աստված Իր շնորհատու աջով չհովանավորեր, չհամագործակցեր և չներգործեր: Աստծո այս օրհնյալ ողորմածությանը հուսա և ամբողջ էությանբ Նրան ապավինիր:

Եթե իմ այս խորհուրդներին հետևես, ապա վստահ եղիր, որ թշնամիներդ մահվան շեմին իրենց հարձակումներով ոչ մի հաջողության չեն հասնի: Եվ քո առջև կբացվի լայնահուն ճանապարհ, որով ուրախությամբ կանցնես երկրային ժամանակավոր կացարանից դեպի երկնային երուսաղեմ՝ քո հավիտենական և մշտնջենական հայրենիքը (Հայր Նիկողոսյան):

83. Չորրորդ փորձությունը մահվան ժամին՝ ուրվականներն են:

Մեր չար, նենգ և համառ թշնամին երբեք չի հագնում մեզ փորձությունների մեջ զգելու, և եթե կանենա մահվան պահին քեզ խռովության մատնել և գայթակեցնել որևէ ուրվականով, տեսիլքով, Լույսի հրեշտակի տեսքն ընդունելով, դու ամուր կանգնիր քո տկարությամբ և ոչնչության գիտակցությամբ: Եվ սրտով արիացիր և անվախորեն ասա. «Դարձիր, անիրավ, դեպի քո խավարը: Ինձ մման անարժանի վայել չէ տեսիլքներ և հայտնություններ տեսնել:

Մի բան է ինձ պետք միայն. իմ Տեր Հիսուս Քրիստոսի

անընդգրկելի շնորհը, նաև մեր Տիրամոր՝ սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի և համայն սրբերի բարեխոսական աղոթքները»: Եթե նույնիսկ որևէ հաստատ պատճառով, քեզ թվում է, թե ճշմարիտ է տեսիլքը, Աստծո կողմից քեզ առաքված, այս դեպքում էլ մի շտապիր հավատալ դրան, այլ անմիջապես համակվիր քո անարժանության և ոչնչության գիտակցությամբ:

Մի վախեցիր, թե դրանով կվիրավորես Աստծուն, որովհետև Նրան երբեք խորթ չեն մեր խոնարհ զգացումները: Եթե այսպիսի տեսիլքներ տեսնես, ապա Աստված գիտի, թե ինչպես վարվել, որպեսզի հայացքդ չկտրես այդ տեսիլքից, հաստատելով քո հավատքը այն բանում, որ այդ տեսիլքը Աստծուց է: Նա է տալիս շնորհի՝ խոնարհներին և ետ չի վերցնի քեզանից տեսիլքը՝ քո զգացումների պատճառով, որոնք դրսևորվում են խոնարհությունից մղված: Այսպիսին են թշնամու առավել գործածելի զենքերը, որոնցով հարձակվում է մեր վրա՝ մեր վերջին ժամին, մահվան շեմին գտնվելիս:

Բայց նա օգտագործում է նաև ուրիշ այլ կրքեր, առավելապես այնպիսիք, որոնցով մահացողը ավելի շատ է տարվել իր կյանքի ընթացքում և որի մեջ ավելի հաճախ է ընկել: Թշնամին ջանում է այս վերջին պահին անգամ նրա մեջ բորբոքել այդ նույն կիրքը, որպեսզի այս աշխարհից հեռանա նույն կրքոտ տրամադրությամբ, որով պիտի որոշվի նրա վախճանը: Եվ այս պատճառով էլ մինչև պատերազմի վերջին, ահավոր ժամին հասնելը մենք պետք է, սիրելիներս, զինվենք մեր զորեղ կրքերի դեմ և համարձակորեն պատերազմի մեջ մտնենք նրանց դեմ և հաղթենք, մաքրվենք, որպեսզի հեշտացնենք մեր հաղթանակը և պատրաստ լինենք մեր վերջին ժամին, որն ամեն ակնթարթի կարող է վրա հասնել: Ամենքին Տերն ասում է. «Գնա՛ և ինձ դեմ մեղանշած Ամառեկի ժողովրդին կոտորիր, պատերազմ մղիր, մինչև որ բնաջնջես նրանց» (Ա. Թագ. 15:18) (Հայր Նիկողեմոս):

84. Վեց տեսակի մտածողությամբ անձը հաղթում է թշնամուն և սրանցով պահպանում է իրեն, խորհելով և մտածելով Աստծո, Քրիստոսի չարչարանքների, մահվան օրվա, ահեղ դատաստանի, սարսափելի տանջանքների և հավիտենական կյանքի մասին (Աբբա Օրսիսիոս):

85. Դիվային ձայների մասին եկեղեցու ինն հայրերի խորհուրդներն այսպիսին են՝ ուշադրություն չդարձնել դրանց վրա, չխորանալ պատճառների մեջ: Դուք էլ այդպես վարվեք և մյուսներին էլ սովորեցրեք: Դրանց վրա ուշադրություն չդարձնելը կանաչեցնի թշնամիներին, և նրանք կդադարեցնեն իրենց փուչ հրաշքները (Թեոփիլոս Շգնավոր):

86. Երբ թշնամին վախ է պատճառում մեզ, միևնույն ժամանակ նաև միտք է բերում, թե մենք չենք կարող դիմանալ այս հարձակմանը: Իսկ մենք պետք է պատասխանենք այսպես. «Չեմ էլ պատրաստվում դիմանալու, այլ հույս ունեմ, որ Ողորմած Տերը ինձ չի թողնի մենակ, այլ կօգնի, որպեսզի կանգուն մնամ, ինչպես որ օգնել է մինչև օրս» (Թեոփիլոս Շգնավոր):

87. Ավելի շատ կարդա՛ Սուրբ Գիրքը, հատկապես Ավետարանը: Այնտեղ Աստծո Հոգին է շարժվում՝ վռնդելով աստվածամարտ և գարշելի

ոգիներին (Թեոփիլոս Շգնավոր):

88. Նա, ով ասում է, թե իր մոտ միշտ հրեշտակ է գտնվում, թող փորձի այդ հրեշտակին հարցնել, թե հավատում և դավանո՞ւմ է Տեր Հիսուս Քրիստոսին, և թող խաչի նշանն իր վրա պատկերի: «Հարանց վարք»-ում գրված է, որ հրեշտակները, որոնց փորձել են այս եղանակով, գովել են փորձողներին: Թշնամին տանել չի կարող խաչի նշանը (Թեոփիլոս Շգնավոր):

89. Մահացածների համար չկա ավելի մեծ մխիթարություն, քան երբ նրանց համար մատուցվում է անարյուն զոհ: Նույնպես լավ է սաղմոսներ ընթերցելը, քանի որ սաղմոսները, որոնք գրված են Սուրբ Դավթի կողմից, քշում են չար ոգիներին, որոնք մաքսատներում ցուցադրում են մահացածի բոլոր մեղքերը, ջանալով կորստի մատնել նրան և զցել դժոխք (Թեոփիլոս Շգնավոր):

90. Բազում են դիվային նենգ ցանցերը: Դեռ չհասցրած անձը շեղել աղբատությամբ, բռնում է նրան հարստությամբ: Դեռ չգերած նրան վիրավորանքներով և անարգանքներով, զինվում է նրա դեմ գովաբանություններով և փառասիրությամբ: Չկարողանալով գայթակղել անձը հաճույքներով, նա հարձակվում է անձի վրա քեզանից անկախ՝ ամենատարբեր վշտերով: Եվ եթե մարդ այս բաների մեջ հաղթանակ է տանում սատանայի հանդեպ, այդ ժամանակ սատանան նրա վրա է հարձակվում հիվանդություններով, նպատակ ունենալով փոքրոգի մարդկանց տկարացնելու Աստծո սիրո մեջ (Հարանց Վարք):

91. Ինչ նենգությամբ է անօրեն թշնամին կարողանում քաղել իր չար օգուտները մեր բարի գործերից: Պահքից հետո մեզ զցում է անժուժկալության և անչափավորության մեջ, օրհնաբեր և խաղաղ աղոթքից հետո խռովում է ծիծաղով և դատարկաբանությամբ: Եվ այսպես ամեն ինչում և ամեն տեղ միշտ վերցնում է իրենը՝ մեր ամենափոքր անզուլության և ծուլության պատճառով («Շգնավորի օրագիր» գրքից):

92. Ինչի՞ համար է Աստված սատանային թույլ տալիս մեզ փորձել: Նրա համար, որ զգուշանալով և սպասելով նրա հարձակումներին, մենք մշտապես հսկման, արթնության և սրբության մեջ մնանք, որպեսզի հաղթանակ տանելով նրա հանդեպ, ավելացնենք մեր պսակները («Հոգևոր Պատերազմ» գրքից):

93. Փրկության թշնամին շեղում է մեզ աղոթքից: Նրա առաջին խորամանկությունն սկսվում է առավոտից. «պառկիր, դեռ վաղ է», հետո պատկերում է բազում անհետաձգելի գործեր, որպեսզի աղոթողը շտապողաբար կամ անուշադիր կատարի աղոթքը, կամ կրճատի այն և վերջապես թողնի աղոթական կարգը: Այդպես վարվում է նա նաև երեկոյան կարգի ժամանակ, բեռեռելով ուշադրությունը հոգնածության և քնի վրա («Հոգևոր Պատերազմ» գրքից):

94. Երբեմն թշնամին մղում է մեզ ոչ խելամիտ լռակյացության, որպեսզի եղբայրը մտածի, թե մենք նեղացած ենք իրենից, այդժամ տեղին է, որ մենք առաջինը խոսենք նրա հետ, և խոսենք սիրալիկ («Հոգևոր Պատերազմ» գրքից):

95. Փրկության թշնամին չի թողնում մարդուն մինչ ի մահ («Հոգևոր Պատերազմ» գրքից):

96. Նույն հոգին կարող է լինել կամ դևերի բնակարան, կամ Աստծո

և հրեշտակների: Եվ եթե շնանում է դևի հետ, դառնում է անպիտան Երկնավոր Փեսայի համար («Յոգևոր Պատերազմ» գրքից):

97. Չարի հարձակումները ետ մղելու համար բավական է խաչակնքվելը («Յոգևոր Պատերազմ» գրքից):

98. Ճոխությունը զենք է չարի ձեռքում՝ մարդկանց կործանելու համար («Յոգևոր Պատերազմ» գրքից):

99. Մեր տրտունջները ուրախացնում են թշնամուն: Ուզո՞ւմ ես հաղթել նրան, հանուն Քրիստոսի համբերությամբ կրիր վշտերդ և ուրախություններդ, խոնարհությամբ գոհանալով Նրանից ամեն ինչի համար և կհաղթես դևին («Յոգևոր Պատերազմ» գրքից):

100. Խորհուրդ է տրվում խուսափել չար ոգիներով բռնվածներից, քանի որ եղել են դեպքեր, երբ նրանց միջոցով թշնամին շփոթեցրել կամ ներգործել է նաև հոգևոր մարդկանց վրա («Յոգևոր Պատերազմ» գրքից):

101. Մեղքերին հաջորդում են անհոգությունը, ծուլությունը և ցանկությունը, քանի որ անհոգությունը առաջ է բերում ծուլություն, ծուլությունից առաջ է գալիս ցանկություն, իսկ ցանկության պատճառով մարդը մեղանչում է («Յոգևոր Պատերազմ» գրքից):

102. Աղոթքի ժամանակ երազելը դիվային փորձություններ են («Յոգևոր Պատերազմ» գրքից):

103. Դևը երկու չարիք է պատճառում՝ նախ մղում է մեղքի և ապա ետ է պահում ապաշխարությունից («Յոգևոր Պատերազմ» գրքից):

104. Չհուսահատվելը զենք է չարի դեմ («Յոգևոր Պատերազմ» գրքից):

105. Դևերը սարսափում են ինքնամփոփ վիճակից: Ամփոփվիր ինքդ քո մեջ և մի սիրիր արտահայտվելը («Յոգևոր Պատերազմ» գրքից):

106. Պատերազմը, որ մղվում է մեր դեմ դևերի կողմից, նպատակաուղղված է այն բանին, որպեսզի մեզանից հեռացնի Սուրբ Հոգու շնորհները («Յոգևոր Պատերազմ» գրքից):

107. Երբեմն միայն արհամարհանքը քշում է թշնամուն, իսկ դիմադրելը գրգռում է նրան և բազմացնում նրա խարդավանքները («Յոգևոր Պատերազմ» գրքից):

108. Ով կարծում է, թե ինքը խորաթափանց է և ունի հոգևոր տեսողություն և կարծում է, թե կարող է ինքնուրույն քայլել առանց հոգևոր առաջնորդի, այդպիսինը ամենակույրն է բոլոր կույրերից և գտնվում է դիվային խաբկանքի, այսինքն՝ ինքնազնայլանքի մեջ («Յոգևոր Պատերազմ» գրքից):

109. Բոլոր ոգիներից ամենաչարը համառության ոգին է: Սա իսկական սատանայական ոգի է («Յոգևոր Պատերազմ» գրքից):

110. Երբեմն փրկության թշնամին մեր կատարած բարի գործին փաթաթում է չարը: Ինչպես որ մոլախոտն է փաթաթվում պտղաբեր ծառի վրա: Դու աստվածային հոգեշահ խոկունների մեջ ես, իսկ նա քեզ մղում է մտածելու աստվածաշնչյան մեծ գաղտնիքների շուրջ, որը միայն սառեցնում է և առաջ բերում կործանարար մեծամտություն: Դու ջանում ես չվիրավորել ոչ

ոքի, իսկ նա քեզ կշեղի դեպի կորուսիչ մարդահաճություն: Դու ջանում ես չդատել ոչ ոքի, իսկ նա շտապում է քեզ վրա բերել անտարբերություն՝ թե բարու և թե չարի հանդեպ: Եվ այսպես, նաև շատ ուրիշ պարագաներում («Յոգևոր Պատերազմ» գրքից):

111. Չար ոգիների ներկայության նշաններն են. աղմուկը, թակոցները, ձայները և աղաղակները: Նրանց ներկայությունից հոգում առաջանում է վախ, մտքում՝ խռովք և շփոթ, ծանծույթ, ծուլություն՝ առաքինասեր վարքի հանդեպ, վիատություն, երազանքներ և հիշողություններ, մահվան սոսկում և մեղավոր ցանկություններ, բարի գործերի հանդեպ նախանձախնդրության մարում:

Դևերից ամենևին պետք չէ վախենալ, նրանք բացի սպառնալուց և վախեցնելուց ոչինչ անել չեն կարող («Յոգևոր Պատերազմ» գրքից):

112. Մի ոչ հնուտ վանական մեծ նեղություններ էր կրում դևերից: Երբ դևերը հարձակվում էին նրա վրա, նա փախչում էր սրանցից, իսկ սրանք էլ իրենց հերթին հետապնդում էին վանականին:

Եթե քեզ հետ կպատահի նման բան, մի վախեցիր և մի փախիր, այլ կանգնիր տղամարդավարի, խոնարհեցնելով անձո՞ւ Աստծո՞ւ առջև և ասա՝ «Տեր, ողորմիր ինձ, բազմամեղիս», և դևերը կջքվեն, իսկ եթե սկսես վախկոտի պես փախչել, նրանք քեզ կքշեն դեպի անդունդ: Հիշիր, որ Տերը քեզ է նայում, թե ինչպես ես դու ապավինում իրեն:

Նման հարձակումը թշնամու կողմից թույլ է տրվում փառամոլության և հպարտության պատճառով («Յոգևոր Պատերազմ» գրքից):

113. Ինչպես շունը, երբ տեսնում է այն փայտը, որով իրեն խփել են, փախչում է նրանից մեծ արագությամբ և շատ հեռու, այնպես էլ սատանան, երբ տեսնում է խաչակնքվողին՝ սարսափահար է լինում: Քանի որ տեսնում է իր զորությունն ավիրած Քրիստոսի հաչը, այդ պատճառով դողալով փախչում է Տիրոջ նվիրյալներից («Յոգևոր Պատերազմ» գրքից):

114. Պետք է հավատալ, որ առանց Աստծու թույլատու կամքի մեզ հետ ոչինչ չի կարող պատահել: Եվ հենց սրա համար էլ չպետք է տրվել ոչ տրտմության, ոչ փոքրոգության, այլ ամեն ինչի համար շնորհակալ լինել Աստծուց («Յոգևոր Պատերազմ» գրքից):

115. Դևը սիրում է խեղաթյուրել ուրիշների խոսքերն ու գործերը («Յոգևոր Պատերազմ» գրքից):

116. Տեսնելով նրանց, ովքեր սիրում են երազներ, երազանքներ և տեսիլքներ, դևերը հայտնվում են նրանց՝ կերպավորվելով Սուրբ Երրորդության, Քրիստոսի, Աստվածամոր, սրբերի կամ հրեշտակների կերպարանքով: Այս բոլորը դիվային հմայքներ են, սրանցով հրապուրվողները ընկնում են դիվային կապանքների մեջ: Դու մի հավատա այս բաներին: Չարը կռահում է քո մտքերը, և ինչ ցանկանում ես, այն էլ առաջարկում է քեզ: Եթե դու չհավատաս, չընդունես, նա քեզ նմանօրինակ տեսիլքներով ու երազանքներով չի հայտնվի («Յոգևոր Պատերազմ» գրքից):

117. Խորամանկ և նենգ է մեր թշնամին: Անկարևոր գործերը նա մեզ է ներկայացնում որպես կարևոր, և շեղվելով այս մանրուքներով, մենք

հետաձգում ենք ամենակարևոր գործերը և երբեմն էլ մոռացության ենք մատուցում դրանք («Յոգևոր Պատերազմ» գրքից):

118. Երբեմն թշնամին խարդավանքներ է լարում մեր դեմ հետևյալ կերպ. երբ մենք տեսնում ենք ինչ-որ մեղք կամ արատ մեր եղբոր կամ հասարակության մեջ, այդ ժամանակ նա ջանում է մեր սրտերը խոցել անտարբերությամբ և սառնությամբ, ավելի ճիշտ, ամոթալի երկչոտությամբ, որպեսզի չասենք դառը և մերկացնող ճշմարտության խոսքը, դրանով իսկ կոտրելով մեղանչողի եղջյուրը:

«Քրիստոս Թագավոր, շնորհիք ինձ առաքելական նախանձախնդրություն և Սուրբ Յոգու հուրը իմ սրտում, որպեսզի համարձակորեն մշտապես հակառակվեմ անպատկառ, հատկապես շատերին վարակող արատների դեմ: Եվ չխնայեմ ոչ ոքի իրենց իսկ փրկության և Քո մնացած մյուս ժողովրդի կանգուն մնալու համար, որպեսզի այնպես չլինի, որ նրանք էլ տեսնելով արատի տարածումը, գայթակղվեն և իրենք էլ գլորվեն» («Յոգևոր Պատերազմ» գրքից):

119. Երբ դժվարանում ես պատերազմել, և տեսնում ես, որ ինքդ չես կարող հաղթել չարին, շտապիր իսկույն հոգևորականի մոտ, խնդիր նրան, որպեսզի քեզ հաղորդություն տա: Սա հզոր և ամենահաղթ զենք է թշնամու դեմ պատերազմելիս: Պահքը պահելն անհրաժեշտ է, քանի որ այն զարհուրելի է սատանայի համար: Չէ որ սատանան վրձնվում է պահքի միջոցով (Մատթ. 17:21): Թող գիտակցեն պահքը մերժողները, թե ում են նրանք հաճոյանում, ում մղումով են նրանք այն մերժում: Ասում են, թե կերակուրը չի, որ մոտեցնում է մեզ Աստծուն: Ճիշտ է, կերակուրը չի մոտեցնում, նա ինքն իրենից ոչ բարի է, ոչ՝ չար: Մեղքը կերակուրի մեջ չէ, այլ անժուժկալության, Եկեղեցուն չհնազանդվելու և այդ հոգևոր սխրանքից՝ պահքից, հեռանալու մեջ («Յոգևոր Պատերազմ» գրքից):

120. Թշնամին հզոր պատերազմ է մղում մեր սրտի դեմ՝ հազեցած ստամոքսի միջոցով («Յոգևոր Պատերազմ» գրքից):

121. Որդյակ իմ, ջանա չմեծամտանալ, կարծելով, թե արդեն հասել ես այս կամ այն սրբի մակարդակին, այլ միշտ ասա ինքդ քեզ. «Գիտես, ով անձ իմ, որ մենք մեր մեղքերի բազմությամբ դևերից անցել ենք, իսկ ոչ մի բարի գործ չենք արել Աստծո սիրո համար, վա՛յ մեզ, անարժաններին, ի՞նչ երեսով պիտի կանգնենք Դատաստանի օրը» («Յոգևոր Պատերազմ» գրքից):

122. Չկա ավելի ցավազին վիճակ դևերի համար, քան պահքի շրջանը, այդ պատճառով էլ նրանք առանձնահատուկ կատաղությամբ են հարձակվում այդ ժամանակ և հատուկ դաժանությամբ են հալածում հոգևորականներին, որոնք Աստծո մարդկանց առաջնորդում են անկեղծ զղջման՝ իրենց գործած մեղքերի համար: Առանձնահատուկ վայրագությամբ են գործում տաճարում և բարեպաշտ քրիստոնյաների տներում, որոնք մեծ նախանձախնդրությամբ են աղոթում, պահք պահում և ապաշխարում («Յոգևոր Պատերազմ» գրքից):

123. Մեր ժամանակներում Սուրբ Յայրերի աշխատությունների տարածումը հատուկ դիմադրության է արժանանում մերժված ոգիների կողմից, նրանք մարմնավոր իմաստությամբ առաջնորդվող մարդկանց ներշնչում են ամենատարբեր մտքեր, ջանալով հակառակվել և դիմադրել այդ

հոգեշահ գրականության տարածման գործին («Յոգևոր Պատերազմ» գրքից):

124. Թշնամու գործելակերպն այսպիսին է. հոգևոր կյանքում առաջադիմողների մասին կարծիք է ստեղծում, թե նրանք շեղված են հոգևոր ուղուց և հնայված սատանայի կողմից, այլոց մասին կարծիք է ստեղծում, իբր թե նրանք խռովարարներ են, ստիպում է նրանց արցունքներում տեսնել խորամանկություն, իսկ աղաչանքներում կեղծավորություն («Յոգևոր Պատերազմ» գրքից):

125. Աստծո առջև սատանան մեղադրում է մարդկանց, մարդկանց առջև Աստծուն, նաև մի մարդուն մյուսի առջև («Յոգևոր Պատերազմ» գրքից):

126. Ինչպես ասում է Յովհաննես Սամրուղբը, չարը չի հարձակվում նրանց վրա, ովքեր արդեն լիովին հիմնավորվել են մեղքի մեջ: Աշխարհում անհոգությամբ ապրողների վրա նույնպես սատանան սակավ հարձակումներ է գործում, նա հարձակվում է հոգևոր կյանքում առաջադիմողների և իրենց կյանքն Աստծուն նվիրածների վրա:

Գողը չի գնա դեպի աղքատի խրճիթը, այլ կնախընտրի հարուստի ամբարները՝ ամենատարբեր զանձերով լի, որոնցով նա կարող է հագեցնալ: Բայց դևերը փորձում են մարդկանց այն չափով, որ չափով Աստված նրանց թույլ է տալիս («Յոգևոր Պատերազմ» գրքից):

127. Երբ գիշերը կանհանգստացնեն քեզ դիվային երազները, այնժամ հարյուր անգամ ասա այս աղոթքը՝ «Փառք Սուրբ Խաչիդ, Ալելուիա» («Յոգևոր Պատերազմ» գրքից):

128. Երազելն աղոթքի ժամանակ ավելի վտանգավոր է, քան անուշադրությունը: Ստացրիվ աղոթքը մնում է անպտուղ, իսկ աղոթքի ժամանակ երազանքներին տրվելը տալիս է խաբեության պտուղներ («Յոգևոր Պատերազմ» գրքից):

129. Ոմանց թշնամին ներշնչում է, որ եթե մարդ այս կյանքում չի արժանանում որոշ շնորհների, ապա երկնքում էլ նրանցից զերծ կմնա: Այդպիսիներից մեկին թշնամին ցույց է տվել սրբապատկերից ճառագող լույսը և հրամայել բացել բերանը և կուլ տալ այն՝ որպես օրհնյալ շնորհ: Իսկ սա անփորձության պատճառով անում է այդ բանը, իսկ հետո վնասվելով՝ մահանում մեկ շաբաթ անց: Եվ սրա նման ամենատարբեր խաբկանքներով սատանան կործանում է նրանց, ովքեր ցանկանում են իրենց անձերը զարդարել ամենատարբեր շնորհներով, այլ ոչ թե զղջմամբ և արտասուքներով:

Ցանկանալ պետք է, միայն թե՛ կոտրած սիրտ և խոնարհ հոգի՝ մեր անձերի համար, իսկ ինչ վերաբերվում է շնորհներին, ապա Տերը գիտի ում, երբ և ինչպիսի շնորհ տա Եկեղեցու շինության համար («Յոգևոր Պատերազմ» գրքից):

130. Երբ դևին սաստում են մեր Տեր Յիսուս Քրիստոսի անունով, ապա մեզ համար քաղցր և դևերի համար ահավոր այս անունը գործում է մեծ զորությամբ, ինչպես երկսայրի սուր: Որտեղ հավատով և սրբությամբ օգտագործվում է Աստծո անունը, այնտեղ նա անում է իր գործը, քանի որ Աստծու անունն իսկ զորություն է («Յոգևոր Պատերազմ» գրքից):

131. Երբեմն հավատացյալներից ոմանք եկեղեցուց հեռանում են

պիղծ մտքերի պատճառով: Սա խելամիտ չէ, քանի որ չարը պատերազմում է մեր դեմ մալ մտքերի միջոցով՝ նպատակ ունենալով մեզ դուրս բերել եկեղեցուց («Յոգևոր Պատերազմ» գրքից):

132. Սրբություններն հայիոյելը և մարմնավոր պիղծ մտքերը մեզ ներշնչում են դևերը: Երբ այս դժոխային բաները քեզ կանհանգստացնեն, սրտանց հավատա, որ դա դևի ներգործությունն է, և կհեռանա քեզանից այս պղծությունը («Յոգևոր Պատերազմ» գրքից):

133. Մերծենալը առարկայականին կամ մարմնականին ունայնություն է, դիվային հնայություն և սատանայի կամք («Յոգևոր Պատերազմ» գրքից):

134. Թեոդորայի վարքից տեղեկանում ենք, որ նրա մեղքերը գրառած դևերն իրենց ցուցակում չգտան այն մեղքերը, որոնք Թեոդորան խոստովանել էր հոգևորականին: Քանի որ այն մեղքերը, որոնց համար մարդն անկեղծորեն զղջացել է և թողություն ստացել հոգևորականից՝ ջնջվում են («Յոգևոր Պատերազմ» գրքից):

135. Սիրի սուրբ հայրերի գրվածքները, և իմաստությունը քեզ կսիրի («Յոգևոր Պատերազմ» գրքից):

136. Եղի որպես տգետ քո իմաստության մեջ և մի ձևացիր իմաստուն՝ լինելով տգետ («Յոգևոր Պատերազմ» գրքից):

137. Առանձնությունը իմաստության ուսուցիչն է: Առանձնությունը երկնային դրախտ է երկրի վրա («Յոգևոր Պատերազմ» գրքից):

138. Պիղծ խորհուրդները վնդիիր Սուրբ գրքերի ընթերցանությամբ և երկարատև աղոթքով («Յոգևոր Պատերազմ» գրքից):

139. Զաճախակի ասա. «Ներիր ինձ և աղոթիր ինձ համար» («Յոգևոր Պատերազմ» գրքից):

140. Երբ պատրաստվում ենք մոտենալ Սուրբ Զաղորդությանը, այդժամ թշնամին սկսում է ներգործել մեր խղճմտանքի վրա («Յոգևոր Պատերազմ» գրքից):

141. Վախեցիր չար սովորություններից առավել, քան դևերից («Յոգևոր Պատերազմ» գրքից):

142. Զամաչենք Քրիստոսի խաչից: Թող ուրիշները թաքուն, իսկ դու ակնհայտ խաչակնքիր, որպեսզի դևերը տեսնելով Թագավորի նշանը՝ փախուստի դիմեն («Յոգևոր Պատերազմ» գրքից):

143. Զարը հարձակվում է հոգևոր գործերով զբաղվողների վրա: Այնտեղ է ավելի որոգայթներ լարում, որտեղ շատ են առաքինությունները («Յոգևոր Պատերազմ» գրքից):

144. Աղոթքը և Սուրբ Զաղորդությունը երբեք չպետք է հետաձգել, թշնամու ոչ մի հարձակում չպետք է արգելք հանդիսանա աղոթքին և Սուրբ Զաղորդությանը («Յոգևոր Պատերազմ» գրքից):

145. Զարին վնասելու հզորագույն գենքը հնարավորին չափ մաքուր սրտով և երկյուղով հաղորդվելն է Քրիստոսի կենդանարար Խորհրդին («Յոգևոր Պատերազմ» գրքից):

146. Եթե չարը քեզ հայտնվի որևէ կերպարանքով, ուշադրություն

չդարձնես, այլ խաչակնքիր և շարունակիր գործը, առանց Աստծո թույլտվության, ոչինչ չի կարող անել («Յոգևոր Պատերազմ» գրքից):

147. Ինչի՞ համար ենք կարդում մենք Սուրբ Զայրերի գործերը: Որպեսզի նրանցից սովորելով, կարողանանք տեսնել մեր կրքերը և տկարությունները, և թե ում հետ է մեր պատերազմը, ինչպես օգտագործել զենքերը և ինչպես մղել պատերազմը մեր թշնամիների դեմ («Յոգևոր Պատերազմ» գրքից):

148. Նույնիսկ նամակով խոստովանածներն ուժ ունեն, քանի որ այս ձևով էլ է ի հայտ գալիս ամեն ինչ: Դեմք գրեք, այդ ժամանակ էլ ամեն դիվային ներգործությունն ինչպես կցնդի («Յոգևոր Պատերազմ» գրքից):

149. Թշնամին մահացու է ներգործում մարդկային սրտի վրա մալ բնության միջոցով՝ ինչպես Զոբի վրա քամիներով, ջրով ու կրակով: Թշնամական խարդավանքների միջոցով երբեմն վառվում են կացարանները, ջրի տակ են անցնում նավերը և տները, քամիները մղեգնում են շինությունների վրա: Երբեմն թշնամին խոնավ եղանակին, մեզի, մառախուղի և գազերի ծածկույթի ներքո, մենգորեն գործում է՝ մեր մեջ առաջացնելով ճնշող տրամադրություն և նեղսրտություն, և սրանով մեզ ամեն մի արդար և սուրբ բանի հանդեպ անզգա սառնությամբ խոցում է («Յոգևոր Պատերազմ» գրքից):

150. Ախ, ինչ բազմատեսակ են օդային տերության իշխանների խարդավանքները, և ինչ դժվար է երբեմն ճանաչել դրանք («Յոգևոր Պատերազմ» գրքից):

151. Աստվածահաճո մարդկանց մեջ դևը չի կարող մտնել:


Մի ճգնավոր վնդեց դևին, իսկ մա դուրս գալով դիվահարի միջից, խնդրեց, որպեսզի ճգնավորը գոնե ուղղություն ցույց տա իրեն, թե հիմա ում մեջ մտնի, իսկ սուրբն առաջարկեց նրան՝ ասելով. «Մտիր իմ մեջ», իսկ չարի պատասխանն այսպիսին էր. «Ինչպե՞ս կարող եմ մտնել Աստծո տունը», և այս ասելով չքվում է («Յոգևոր Պատերազմ» գրքից):

152. Եթե մեկը հնազանդվում է սատանային և ամեն ինչում կատարում է նրա կամքը՝ գործելով մեղքեր և անօրինություններ, և երբ պատահի, որ մենք հանդիպենք այդպիսի մեկին, այդ ժամանակ պետք է զգույշ լինենք, քանի որ մա կարող է վարակել մեզ իր մեղավոր էությանը: Այսպիսի մարդը կարող է զենք լինել սատանայի ձեռքում, որի միջոցով մա կարող է մեզ գցել իր որոգայթը («Յոգևոր Պատերազմ» գրքից):

153. Իր ատամները կրճատացնելով Աստծո սուրբ մարդկանց վրա, սատանան վշտացնում է նրանց, վրա է պրծնում հատկապես նրանց վրա, ում Տերն Իրենն է համարում («Յոգևոր Պատերազմ» գրքից):

154. Տոն օրերին Աստծո թույլտվությամբ թշնամին միշտ ջանում է տհաճություն պատճառել և վշտացնել: Մեկին հարվածում է, մեկին կսնթում: Եվ որքան ավելի խիստ ես լինում ինքը քո հանդեպ, այնքան ավելի զորեղ կերպով է զինվում թշնամին («Յոգևոր Պատերազմ» գրքից):

155. Երբեմն մեր փրկության թշնամին ջանում է մեզ հրահրել անհարկի սխրանքների: Կամ չափազանց խիստ պահեցողության և



ծոնապահության, կամ ինչ-որ այլ բանի, որը մեր ուժերից վեր է, և որոնք ինքներս ենք մեզ նշանակում և որպես կարգ ենք սահմանում մեր հոգևոր կյանքի համար: Նման անչափավորությունից միշտ առաջանում է ուժերի ջլատում և թուլություն, կամաց-կամաց սկսվում է քանդվել մեր սահմանած կարգը, հետո վրա է հասնում խռովքը, որի ժամանակ էլ թշնամին հեշտությամբ հաղթում է մեզ («Չոգևոր Պատերազմ» գրքից):

156. Քո ի՞նչ բանն է խառնվել ուրիշի գործերին: Քո հիմար միտքը չարն ուղղորդում է դեպի ուրիշի գործերը: Դու կորցնում ես թանկագին ժամանակդ, որը տրված է քեզ փրկությանդ համար, իսկ դու օգտագործում ես քո կորստի համար («Չոգևոր Պատերազմ» գրքից):

157. Եթե ցանկանում ես փրկվել, ապա այսպես արա. երբ տեսնես մարդու ընկնելը մեղքի մեջ, աղաչիր Աստծուն, որպեսզի ների այդ մեղքը նրան: Ինչքան աղոթես, այնքան բարի գործ արած կլինես: Ոմանք, չիմանալով այս դիվային խորամանկությունը, ջանում են դատել մեղանշած մարդուն: Բայց պետք է իմանալ, թե քանի անգամ մարդ դատի մեղանշողին, այնքան անգամ չար գործ կգրանցեն դեերը նրա հաշվին («Չոգևոր Պատերազմ» գրքից):

158. Երբեք մի պարծեցիր, երբ պատրաստվում ես մի որևէ բարի գործ անել, թե չէ թշնամին կվճարի քեզ («Չոգևոր Պատերազմ» գրքից):

159. Միշտ ամեն ինչից առաջ առավել վախեցիր մարդկանց գովեստներից, որոնք ոմանք ընդունում են թշնամու աջակցությամբ՝ ի վնաս իրենց հոգու, քանի որ հոգևոր կյանքում փորձառություն չունեն: Քանզի շատ հաճախ այնպես է պատահում, որ գովեստների միջոցով հոգու մեջ են սողոսկում հպարտությունը և սնափառությունը («Չոգևոր Պատերազմ» գրքից):

160. Պետք է գիտակցել, որ մեզ վիրավորանքներ հասցնում են ոչ թե եղբայրները, այլ դեերը: Նրանք ջանում են շեղել մեզ Աստծուց («Չոգևոր Պատերազմ» գրքից):


161. Վիրավորողի համար աղոթողը սարսափի է մատնում դեերին («Չոգևոր Պատերազմ» գրքից):

162. Քո մանկամիտ վախը, թե ինչ-որ վիուկի պատճառով կարող ես սատանայի իշխանության տակ ընկնել, վկայում է, թե ինչքան անգրագետ են պատկերացումներդ Աստծո, քրիստոնյայի և սատանայի մասին: Եթե դեերը խոզերի մեջ առանց Տիրոջ թույլտվության չհամարձակվեցին մտնել, ապա ինչպե՞ս կմտնեն մարդու մեջ («Չոգևոր Պատերազմ» գրքից):

163. Այսպիսի պատասխան է պետք տալ դեերին. «Թեկուզ և ես բազմամեղ մեկն եմ, բայց իմ փրկության համար չեմ հուսալքվի, քանի որ իմ հույսն Աստծո ողորմածության վրա է: Իմ Աստծո առջև եմ միայն մեղանշել, Նրա առջև և մեղա եմ գալիս: Միայն նա է իմ Դատավորը, և ոչ թե դուք՝ նգովյալ դեեր, դուք ինձ հետ ոչ մի գործ չունեք» («Չոգևոր Պատերազմ» գրքից):

164. Մասնավորապես չար ոգիների մասին հայտնի է, որ Աստված նրանց պատրաստ է ընդունել, բայց իրենք չեն ցանկանում՝ իրենց կարծրացած հպարտության պատճառով («Չոգևոր Պատերազմ» գրքից):

165. Հառեք ձեր մտքերն ու սիրտը դեպի երկինք, դեպի հավիտե-



նություն և չեք բռնվի սատանայի որոգայթներով: Թռչունը, որքան վեր է թռչում, այնքան ապահով է լինում, իսկ երբ ներքև՝ դեպի երկիր է իջնում, այնժամ հեշտությամբ որսվում է կամ խփվում («Չոգևոր Պատերազմ» գրքից):

166. Մեր փրկության թշնամին որպես օրենք գործում է այսպես. երբ մենք ապրում ենք անօրեն կյանքով, նա այդ ժամանակ պատկերում է մեզ մեղքը, որպես թե մի անկարևոր բան, որի հանդեպ երկինք ու երկիր արարող Թագավորը իր անմերձեմալի բարձունքից նույնիսկ ուշադրություն չի դարձնում: Իսկ երբ տեսնում է, թե մենք սկսում ենք զղջալ մեղքերի համար և որոշում ենք քանդել ամարզ կրքերի կապերը, այնժամ նա մեզ պատկերում է Աստծուն որպես անողորմ Դատավոր, իսկ մեր մեղքերն այնքան մեծ, որ դրանց համար կարծես էլ հնարավոր չէ թողություն գտնել («Չոգևոր Պատերազմ» գրքից):

167. Հավատացյալն ունի բազում օրհնաբեր միջոցներ՝ իր հոգևոր և մարմնավոր բժշկությունների, մխիթարության, սրբացման, նաև աներևույթ թշնամիների վնդեղու համար: Դրանք են խոստովանությունը, Սուրբ Հաղորդությունը, Սուրբ Գրքի ընթերցումը, ջերմեռանդ աղոթքը, Աստծո տուն հաճախելը, սրբերի և պահապան հրեշտակների օգնությանը դիմելը, հաճախակի Հիսուսի անունը կանչելը, սրբերի մասունքները, հրաշագործ խաչերը և Ավետարանները, Աստվածհայտնության ջուրը, նշխարը, մասը, օրհնված յուղը և այլ ուրիշ շատ բաներ, որոնք հավատացյալի համար մեծ օգնություն են սգի, վիատության, հիվանդության և թշնամական հարձակումների ժամանակ:

Իսկ որքան քիչ մարդիկ են իրենց նեղությունների մեջ դիմում այս միջոցներին («Չոգևոր Պատերազմ» գրքից):

168. Եթե դու անում ես ինչ որ բարի բան մերձավորիդ հանդեպ՝ հանուն Աստծու, իսկ դրան հետևում է փորձություններ, տհաճություն և դժբախտություն, այդժամ մի մտածիր, թե պետք չէր քեզ բարի գործ անել: Ընդհակառակը, իմացիր, որ այս բոլորը պատահեց մեր փրկության թշնամու կողմից մեր կատարած բարի գործի հանդեպ ունեցած նախանձից: Եվ հենց այս պատճառով էլ մի մեղադրիր քեզ բարիք անելուդ համար, այլ թշնամուդ՝ իր քինախնդրության համար («Չոգևոր Պատերազմ» գրքից):

169. Մեր փրկության թշնամին միշտ չէ, որ մեծ չարություններով է մեր դեմ պատերազմում, այլ բավարարվում է մեր ուշադրությունը մանր-մունր բաներով շեղելով: Նրա համար կարևորն այն է, որ մեզ շեղի գլխավորից և օգտակարից, սպանելով մեր ժամանակը («Չոգևոր Պատերազմ» գրքից):

170. Ինքնուս սովորեցնում է նա, ով չի ղեկավարվում Սուրբ հայրերի գրվածքների ոգով: Այդ իսկ պատճառով պետք չէ հավատալ նրան, ում խոսքը հակասում է սուրբ հայրերի խոսքին: Պետք չէ ընդունել նրան, այլ ընդհակառակը՝ խուսափել նրանից («Չոգևոր Պատերազմ» գրքից):

171. Մարդկանցից հարկավոր է թաքցնել անձնական ապրումները (և՛ հոգևոր, և՛ մարմնավոր), հուզաշխարհը չցուցադրել, այլ կիսվել միայն համախոհի կամ հոգևոր հոր հետ (Չոգեշահ գրքերից):

172. Հոգևոր հայրերը հորդորում են մեզ անհապաղ շտկել մեր



հոգևոր կյանքը, որպեսզի հասցնենք ձեռք բերել

փորձառություն հավիտենական կյանքի համար (Յոզեֆի գրքերից):

173. Հարգի՛ր բոլոր քահանաներին, բայց դիմիր միայն բարի համարում ունեցողներին: Գնահատիր իմաստուն, բարի և հոգևոր կյանքում փորձառու հովիվներին և մտերիմ եղիր նրանց հետ: Մեղքերից արձակել կարող է ամեն մի քահանա, սակայն կրթել հոգևոր կյանքում ոչ բոլորը (Յոզեֆի գրքերից):

174. Մեր փրկության թշնամին միշտ չէ, որ չարություն է ներշնչում, այլ բավարարվում է նաև մեր ուշադրությունը դատարկ բաներով զբաղեցնելով: Միայն թե գլխավորից շեղելով, մեր ժամանակը իզուր տեղը վատնվի (Յոզեֆի գրքերից):

175. Ինքնուրույն մի՛ մեկնիր Ավետարանը և Սուրբ գրքերը, այլ դիմիր սուրբ հայրերի մեկնություններին: Սուրբ Ոսկեբերանը ասում է, որ բոլոր աղանդները առաջացել են Սուրբ Գրոց ոչ ճիշտ մեկնություններից (Յոզեֆի գրքերից):

176. Եթե ուզում ես մերձենալ Աստծուն, մի՛ հաղորդակցվիր աշխարհին սերտ կապված մարդկանց հետ: Իսկ Աստվածճանաչության մեջ խորանալու համար հաճախ գերադասիր առանձնությունը (Յոզեֆի գրքերից):

177. Սատանան առավել ատում է Սուրբ հայրերի գրվածքները, որովհետև նրանք բացահայտում են իր բոլոր որոգայթները, խորամանկություններն ու նենգությունները (Յոզեֆի գրքերից):

178. Ո՞վ ավելի ուժգին կմղի պայքարը, քան նա, ով ձգտում է հաղթել իր (ես-ին):

Մեր միակ հոգսը պետք է հետևյալը լինի. պայքարել մեր եսի դեմ, օրեցօր ավելի ազատ լինել սեփական (եսից), և ամեն օր բարու մեջ առաջխաղացման նվաճումն արձանագրել (Թովմաս Գեմբացի):

179. Սիրիր հարցեր տալ, լռությամբ ունկնդրիր սրբերի խոսքերը, մի արհամարհիր ծերերի մեկնությունները, նրանք իզուր չեն ասել (Թովմաս Գեմբացի):

180. Ցանկություններին դիմակայելով, այլ ոչ թե գոհացում տալով է ձեռք բերվում ճշմարիտ խաղաղություն (Թովմաս Գեմբացի):

181. Ուժերիդ ներածին չափ աշխատիր, և Աստված քո բարի կամքին սատար կկանգնի (Թովմաս Գեմբացի):


182. Սիրտդ մի բաց անխտիր բոլորի առաջ (Ժող. 8:22), այլ ինչը հուզում է քեզ, վստահիր իմաստուն և աստվածավախ մարդու (Թովմաս Գեմբացի):

183. Եթե քաջասիրտ մարտիկների պես հաստատուն եք լինելու պայքարում, իսկապես տեսնելու եք Աստու՛ օգնությունը, որը մեզ երկնքից է հասնում:

Որովհետև Աստված միշտ պատրաստ է իր օգնությունը շնորհել նրանց, ովքեր դիմադրում են և ապավինում շնորհին: Ինքն է մեզ պայքարի առիթներ ընձեռում, որպեսզի առաջնորդի մեզ հաղթության (Թովմաս Գեմբացի):

184. Եթե չգիտես հաղթել անձիդ աննշան բաների մեջ, ինչպե՞ս ես ավելի դժվար բաները հաղթահարելու:

Սկզբից ևեթ դիմադրիր վատ հակումներիդ, ձերբազատվիր անպարկեշտ սովորություններից, որպեսզի աստիճանաբար չթաղվես ավելի մեծ



դժվարությունների տակ (Թովմաս Գեմբացի):

185. Ոչ մի կատարյալ և սուրբ մարդ չկա, որ փորձությունների ենթարկված չլինի:

Բոլոր սրբերն էլ շատ փորձություններ և տառապանքներ են կրել, և այս ուղով առաջ ընթացել: Նրանք, ովքեր չկարողացան հաղթահարել փորձությունները, մերժվեցին Աստծուց և շեղվեցին փրկության ճանապարհից:

Չկա ոչ մի սուրբ հաստատություն կամ ծածուկ մի վայր, ուր վշտեր ու փորձություններ չլինեն (Թովմաս Գեմբացի):

186. Ոմանք փորձում են խուսափել փորձություններից, սակայն փոխարենն ընկնում են ավելի վտանգավոր փորձությունների ճահիճը:

Փորձությունից խուսափելը, բավարար չէ՝ կարծելու, թե հաղթեցիր: Համբերությունը և ճշմարիտ խոնարհությունը մեզ մեր թշնամիներից ավելի ամրապինդ կդարձնեն (Թովմաս Գեմբացի):

187. Փորձության մեջ ընկնելիս հաճախ խորհուրդներ հարցրու, խստությամբ մի վարվիր փորձության մեջ ընկած մարդու հետ, այլ մխիթարիր նրան այնպես, ինչպես կկանենայիր, որ քեզ մխիթարեն (Թովմաս Գեմբացի):

188. Նախ այցելում են տարտամ խոհերը, այնուհետև հաջորդում է վառ երևակայությունը, հետո գալիս են անկարգ մղումը, հաճույքն ու հավանությունը: Այսպես, աստիճանաբար թշնամին ներխուժում է հոգու մեջ, եթե սկզբից ևեթ չդիմակայենք նրան: Մարդն ինչքան հապաղի, անփութորեն ուշացնի դիմադրությունը, այնքան ավելի օրեցօր կհզորանա թշնամին (Թովմաս Գեմբացի):

189. Ոմանք մեծ փորձություններ են հաղթահարում, սակայն ամեն օր ընկնում են թեթև փորձությունների մեջ, որպեսզի իրենց անձը խոնարհեցնեն, և երբեք չապավինեն իրենք իրենց՝ բուռն փորձությունների ժամանակ (Թովմաս Գեմբացի):

190. Որպես արի մարտիկ, դու զինվիր սատանայի հարձակումների դեմ: Չսպիր անժուժկալությունդ և ավելի հեշտությամբ պիտի զսպես մարմնիդ ցանկությունները: Երբեք անգործ մի մնա, այլ կարդա, գրիր կամ աղոթիր, խորհիր կամ այնպիսի մի աշխատանք կատարիր, որ օգուտ տաս հասարակությանը (Թովմաս Գեմբացի):

191. Ոչ ոք երկնային մխիթարությունների արժանի չէ, եթե իր անձը սուրբ վշտերի չի վարժեցնում (Թովմաս Գեմբացի):

192. Ով որ հեռանում է իր ծանոթներից և բարեկամներից, Աստված պիտի մոտենա նրան իր սուրբ հրեշտակների հետ:

Ավելի լավ է ապրել ծածուկ, զբաղվել հոգու փրկությամբ, քան հրաշքներ գործել և մոռանալ անձի մասին (Թովմաս Գեմբացի):

193. Եթե տակավին բարձր երկնային խոհերի ընդունակ չես, հանգիստ գտիր Քրիստոսի չարչարանքների և նրա սուրբ վերքերի մեջ:

Որովհետև, եթե դու սիրով ապաստան գտնես Հիսուսի պատվական վերքերի և խցերի մեջ, պիտի փորձությունների մեջ գտնես մեծ զորություն, պիտի չվրդովվես հանդիմանող մարդկանց արհամարհանքից և պիտի համբերես ու հանդուրժես նրանց թշնամական վերաբերմունքը (Թովմաս

Գեմբացի):

194. Ով որ արարածի հետ կապվի, պիտի նրա հետ էլ սայթաքի, բայց ով Հիսուսի հետ կապվի, միշտ անսասան կմնա:

Սիրիի և պահպանիր Նրան իբրև բարեկամի: Նա քեզ երբեք չի լքի, երբ բոլորը կլքեն, երբ վախճանդ էլ մոտենա՝ քեզ երբեք կորստյան չի մատնի (Թովմաս Գեմբացի):

195. Պետք է, որ մարդը շատ և երկար պայքար մղի սրտում, մինչև սովորի հաղթել իր անձին և իր ողջ սերը բևեռի Աստծու վրա:

Երբ մարդն ինքն իրեն է ապավինում, հեշտությամբ թեքվում է մարդկային մխիթարությունների կողմը:

Բայց ով որ Քրիստոսի ճշմարիտ սերն ունի, առաքինության եռանդը, տեղի չի տա մխիթարություններին, չի փնտրի հաճելի քաղցրություններ, այլ կնախընտրի համուճ Քրիստոսի սիրո քաջաբար ճիգ գործադրել և դժվարությամբ վաստակել (Թովմաս Գեմբացի):

196. Երբ քեզնից վերցվի մխիթարությունը, դու իսկույն մի հուսահատվիր, այլ խոնարհությամբ և համբերությամբ սպասիր, որ Աստված դարձյալ այցելի քեզ, որովհետև Նա կարող է քեզ ավելի մեծ մխիթարություն տալ (Թովմաս Գեմբացի):

197. Ձեզ աստվածային մխիթարություն է տրվում, որպեսզի մարդն ավելի արհամա՝ համբերելու վշտերին:

Եվ սրան հաջորդում է նաև փորձությունը, որպեսզի մարդը չխորխտանա, որովհետև սատանան չի մոռում, և մարմինը տակավին չի մահացել: Սրա համար միշտ պատրաստ եղիր պայքարի, որովհետև աջից ու ձախից թշնամիներ են գալիս, որոնք երբեք դադար չունեն (Թովմաս Գեմբացի):

198. Աշխարհի բոլոր փափկությունները սին են և զազրելի: Հոգևոր մխիթարություններն են միայն քաղցր և մաքուր, ծնվում են շնորհից, որոնք Աստված սփռում է մաքուր սրտերի վրա:

Սակայն ոչ ոք չի կարող միշտ և համաձայն իր կամքի վայելել աստվածային մխիթարությունները, որովհետև փորձության դադարը երկարատև չէ (Թովմաս Գեմբացի):

199. Գոհություն հայտնիր ամենափոքր շնորհի համար և պիտի արժանանաս ավելի մեծն ընդունելու պատվին (Թովմաս Գեմբացի):

200. Երբեմն պիտի Աստուծոց լքվես, երբեմն մերձավորդ քեզ պիտի նեղի, և դեռ ավելին, հաճախ դու ինքդ պետք է բեռ դառնաս անձիդ համար: Պիտի բուժում ու ամոքում չգտնես քո ցավերին: Բայց հարկ է, որ չարչարվես այնքան ժամանակ, որքան որ Աստված կամենա: Որովհետև Աստված ուզում է, որ դու անմխիթար չարչարվես և անվերապահ հպատակվես Նրա կամքին, և ավելի խոնարհ դառնաս՝ նեղության ճանապարհով (Թովմաս Գեմբացի):

201. Երբ հասնես այն կետին, երբ չարչարանքն արդեն քաղցր լինի քեզ համար, և սիրես այն՝ հանուն Հիսուս Քրիստոսի, այնժամ ինքդ քեզ երջանիկ համարիր, որովհետև դրախտը գտած կլինես երկրի վրա (Թովմաս Գեմբացի):

202. Հիշիր, որ հին թշնամին ձգտում է խեղդել քո ձգտումը՝ հանդեպ բարին, և քեզ հեռացնել ամեն տեսակ կրոնաշունչ գործերից, սրբերի

հանդեպ ջերմեռանդությունից, Հիսուսի չարչարանքների

և մահվան մասին խորհրդածելուց, քո մեղքերի հիշողությունից, սիրտդ վերահսկելուց և առաքինության մեջ առաջադիմելու հաստատ վճռականությունից:

Թելադրում է քեզ բազմաթիվ պոտոր մտքեր, որպեսզի խռովվի հոգիդ ձանձուրությամբ, և հեռացնի քեզ աղոթքից և հոգևոր ընթերցանությունից:

Խոնարհ խոստովանանքդ տհաճ է նրա համար, և եթե կարողանար, պիտի ուզե՞նար քեզ բոլորովին հեռացնել Սուրբ Հաղորդությունից:

Սի հավատա նրան և ամենևին մի վախեցիր նրանից, նույնիսկ եթե հաճախ թակարդներ լարի՝ քեզ անակնկալի բերելու համար (Թովմաս Գեմբացի):

203. Դու պայքարիր որպես քաջ մարտիկ, եթե երբեմն սայթաքես տկարությամբ, վերագինվիր ավելի վեհ արիությամբ, ավելի զորավոր շնորհի օգնությունը վայելելու հույսով: Խուսափիր մանավանդ ինքնավաստահությունից և հպարտությունից:

Այս պատճառով շատերը մոլորվում են և սայթաքում անդարմանելի կուրության մեջ: Այս ամբարտավանների անկումը, որոնք այնքան ինքնավաստահ էին, թող մղի քեզ հարատև հսկումների և խոնարհության (Թովմաս Գեմբացի):

204. Ով որ խաղաղության մեջ ինքն իրեն չափազանց ինքնավաստահ է զգում, պայքարի ժամանակ իրեն դրսևորում է որպես ավելի երկչոտ և փոքրոգի (Թովմաս Գեմբացի):

205. Որդյակ, զգուշացիր վիճել խորունկ հարցերի և, մանավանդ, Աստծու գաղտնի դատաստանների մասին, թե ինչու մեկը լքված է, իսկ մեկ ուրիշը այնքան առատ շնորհներ է ընդունում, թե ինչու մեկն այնքան տառապում է, մինչ մյուսը պատիվներ է ընդունում:

Այս ամենը վեր են մարդու իմացականությունից, և ոչ մի տրամաբանություն չի կարող թափանցել աստվածային դատաստանների մեջ:

Ուրեմն, երբ թշնամին քեզ նման գաղափարներ է թելադրում, կամ երբ հետաքրքրասեր մարդիկ հարցեր են տալիս, պատասխանիր դրանց մարգարեի այս խոսքերով. «Արդար ես դու, Տեր, և Քո դատաստաններն ուղիղ են» (Սաղմ. 118.137): Եվ կամ՝ «Դատաստանները Տիրոջ ճշմարիտ են և արդար» (Սաղմ. 18.10):

Սի վիճիր նաև սրբերի արժանիքների մասին և մի քննիր, թե ով է ավելի սուրբ և կամ ով է ավելի մեծ՝ երկնքի Արքայության մեջ: Այս հարցերից միայն վեճ և անօգուտ հակառակություններ են ծնվում: Սրանք են, որ սնուցում են ամբարտավանությունն ու սնափառությունը, սրանցից են առաջ գալիս նախանձն ու երկպառակությունը, երբ մեկը նախընտրում է մի սրբի, իսկ մյուսը՝ ամբարտավանությամբ՝ մեկ ուրիշ սրբի:

Նման հարցեր քննելը ոչ միայն արդյունք չի կարող տալ, այլև տհաճ է սրբերին: Որովհետև «ես խռովության Աստված չեմ, այլ խաղաղության» (1 Կոր. 14.33), և այս խաղաղությունը կայանում է ավելի խոնարհության մեջ, քան սնապարծության:

Ոմանք սիրով տարված, նախընտրում են ավելի այս կամ այն

սրբին, բայց այս սերն ավելի մարդկային է, քան աստվածային (Թովմաս Գեմբացի):

206. Անհրաժեշտ է, սակայն, վերահսկել, մանավանդ փորձության սկիզբը, որովհետև մարդն ավելի հեշտ է հաղթում թշնամուն, երբ չի թողնում նրան իր հոգու մեջ ներթափանցի, և ետ է մղում, երբ փորձում է ներխուժել:

Հայրերից մեկն արդարացիորեն ասել է. «Սկզբից ևեթ չարին դիմադրիր, քանի որ մինչև հասնի սպեղանին՝ ուշ կլինի, որովհետև չարը երկար ժամանակ մի տեղ հաստատված մնալով, ավելի է հզորանում» (Որատիոս):

207. Տերը մեզ չի հրամայում մարմնով զորանալ, այլ՝ հոգով, ոչ թե պատերազմական (մարմնական) մեքենայություններով, այլ նեղությունների մեջ համբերելով հաղթել մեր թշնամիներին: Թող ձեզ հովանի լինի Տիրոջ աջը և հաստատի ճշմարիտ հավատքի մեջ, որ ընդունեցիք Սուրբ Հոգու շնորհներով: Եթե սիրեք Նրան ձեր ողջ սրտով, նույն Ինքը այս կյանքում ձեզ համար փրկություն կլինի և իր բոլոր սուրբերի հետ հավիտենական կյանքին կարժանացնի (Սուրբ Սարգիս Ջորավար):

208. Չար դևը փոքր պատճառներով մեծ վնասներ է հասցնում (Բարսեղ Մաշկևորցի):

209. Մարդու մարմինը պարսպապատ քաղաքի նման է, որն ունի հինգ դուռ՝ աչքը, ականջը, բերանը, ձեռքն ու ոտքը՝ այսինքն՝ շոշափելիքները: Բոլոր չար ու բարի բաները այս հինգ դարպասներից են մտնում ներս և դուրս գալիս այնտեղից: Հոգին այս քաղաքի բնակիչն է, իսկ մարդու բարի գործերը՝ քաղաքի գանձերը: Միտքը թագավորն է այս քաղաքի ու գանձերի պահապանը, սատանան ու իր դևերը թշնամիներն են, որոնք ուզում են գրավել քաղաքը և հափշտակել հոգևոր գանձերը (Հովհաննես Երզնկացի):

210. Աստված, երբ բարիք է տալիս, և մարդիկ այդ մեծարանքի պատիվը չեն հասկանում ու գոհություն չեն հայտնում, Նա ետ է առնում իր տված բարիքները, ինչպես Ադամին հանեց դրախտից, իսկ հրեաներին՝ Երուսաղեմից (Հովհաննես Երզնկացի):

211. Ահա ես տեսնում եմ շատ ավելի մեծ պատերազմ և շատ ավելի երկար և անպատում տանջանքների արհավիրք, ինչը շատ ավելի ցավ է պատճառում, քան բոլոր տեսակի այլ տանջանքները: Այս պատերազմը անմարմին է, որովհետև անմարմին է նաև նա, որ այս պատերազմը մեր վրա է հարուցում: Մարմնի և արյան հետ չէ մեր կռիվը, այլ իշխանությունների, պետությունների, խավարի աշխարհակալ դևերի հետ, որոնք արեգակի ներքևում են գտնվում (Եփես. 6:12) (Սարգիս Շնորհալի):

212. Հետևաբար, զորանանք, անմարմին զենքեր հագնենք և դիմադրելու ելնենք չար ախտյաններին, որոնք սովորություն ունեն խավարի մեջ նետ ու մուխ արձակելու սրտով ուղիղների վրա: Բանասրկուի ճակատին պարսատիկով քար արձակենք և նրան ընկճենք, ինչպես Դավիթը Գողիաթին. առնենք այլազգիների ավարը և ոտնատակ տանք նրանց բնակարանները: Պոռնկության երեսին նետենք ողջախոհության քարը, համբերենք լեզվի հարվածներին, ինչպես սրասայր սուսերին, և եղբոր գազանությանը՝ ինչպես գազանների

ժանիքներին, համբերենք նախատինքի, բամբասանքի և

զրպարտության, ինչպես երկաթե եղունգների, աղքատության մեջ կախված մնանք, ինչպես խաչափայտին, մարենք մեր ընկերոջ զայրույթը, ինչպես հնոցը և մեր գազանական բարկությունը զոհնացնենք և արյան եռը ցամաքեցնենք: Մեր աչքերը թող չտեսնեն գարշելի բաներ, մեր ականջները պոռնկական երգեր, և լեզուն չխոսի աղոտոտ խոսքեր, ձեռքերը չխառնվեն ամոթալի բաների, մեր սիրտը թող չիմանա չար բաներ, և որովայնը չպարարտանա խորտիկներով (Սարգիս Շնորհալի):

213. Այսպես է մղվում այս պատերազմը, որ ավելի երկար և տանջալի է, քան մեծ ճիգով մղված պատերազմները. այս ձևով է մարդ տանում մարտիրոսների մարտնչումը և ստանում հոգու սրբությունն ու մաքրությունը. այս կերպով է, որ զգեստնում է ու սպանում չար ախտյանին իր անդամների մեջ և կենդանացնում է մեղքերով մեռած հոգին (Սարգիս Շնորհալի):

214. Թեև ահավոր է պատերազմը, սաստիկ են հարձակումները և հրեղեն նետերը, սակայն չվախենանք, որովհետև մեր մոտ է գտնվում հավատքի զորագույնը՝ Հիսուս, որի անունով նահատակվում ենք (Սարգիս Շնորհալի):

215. Արդ դադար չառնենք այս հոգևոր պատերազմների մեջ և ուշացած չերևանք, այլ նահատակվենք անմարմին Գողիաթի՝ Բելիարի դեմ, սաղմոսարան և քնար վերցնենք չար այսերի դեմ (Ա Թագ. 16:23), խոնարհությամբ չարչարենք մեր մարմինն Աստծո փառքի համար, մտնենք ապաշխարության հրի բովի մեջ, գամվենք Քրիստոսի խաչին՝ մեղքի ծառի փոխարեն, քացախ և լեղի խմենք, անիվների վրա պրկվենք և բանտ մտնենք, զգալի կամ իմանալի կապանքները համբերությամբ կրենք, և այս բոլորը Քրիստոսի սիրո և, մանավանդ, մեր անձերի համար: Քիստոսի համար, որպեսզի կցորդ լինենք Նրա չարչարանքներին և հաղորդ՝ Նրա փառքին, իսկ մեզ համար, որպեսզի մաքրենք մեր անձերը, ծածկենք մեր եսի ամոթը և դատաստանի օրը համարձակությամբ կանգնենք տիեզերական ատյանի ահավոր բեմի առջև (Սարգիս Շնորհալի):

216. Արդ, Հիսուսի անունով պատերազմենք, Նրա անվան համար արժանի նահատակներ լինենք, վստահությամբ Նրան ասենք. «Բոլոր ազգերը շուրջս պատեցին, և Տիրոջ անվամբ վանեցի նրանց» (Սաղմ. 117:13): Ապստամբ և ահավոր վիշապը թող չհաղթի մեզ իր խաբկանքներով, հորձանուտ ջրերը, այսինքն՝ անօրենության ուղիները չկլանեն մեզ, չլինի որ նա մեզ հաղթի ծուլությամբ, ծանր քնով, հարբեցողությամբ, որոնք առաջանում են այս աշխարհի հանդեպ ունեցած սիրուց, այլ ոչ թե գինուց և օղուց: Չլինի թե բանասարկուն եսասիրության պատճառով մեզ խաբի, և մենք ազահությամբ կռապաշտ դառնանք, կամ բոլոր չարիքների մայր արժաթափրությունն ստանանք: Չար նախանձով չնմանվենք թշնամի բանասարկուին, նենգությամբ աչք չտնկենք ընկերոջ բարիքների վրա, ոչ էլ նրա փրկությանը նախանձենք, ատելությամբ որպես մարդասպաններ չերևանք և չերկարածենք, որ սատանան ոխակալությամբ մեր մեջ չդարանակալի: Ստախոսությամբ բանասարկուի որդիներ չլինենք և բամբասանքներով չտարագրվենք արքայությունից, այլ մաքուր սրտով, առանց նենգության աշխարհի մեջ շրջենք և մեղքից զերծ

կյանքով ապրենք, որպեսզի ազատ մարդկանց պես կարողանանք պնդակազմ լինել հոգևոր ճակատամարտի մեջ և չարչարակից նրանց, որոնք սրով սպանվեցին, և իրենց պարանոցի արյունը Աստծուն անուշահոտ պատարագ մատուցեցին, որպեսզի մասնավորաբար նրանց խոստացված բարիքներին արժանի լինենք մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի շնորհքով և մարդասիրությամբ (Սարգիս Շնորհալի):

217. Այս պատճառով, մենք՝ ճանաչելով նենգավորի խորամանկությունները, միշտ սիրով, ահ ու դողով փութանք առ Աստված, դաստիարակենք մեր միտքն ու զգայությունները՝ միշտ բորբոքելով առ Աստված՝ զոհությամբ և երկյուղով: Գիշերն իջնելու հետ փարատենք մեզանից տխրատեսիլ մեղքերի խավարը, և առավոտյան լուսի ծագելու հետ՝ սիրով ընդունենք մեր մեջ խաղաղության առավոտ Քրիստոսին: Միշտ աղաչենք մարդասեր Աստծուն, որ վերստին վերադարձնի մեզ գերությունից՝ հարավի առունների պես (Սաղմոս 125:4), և բորբոքի մեր հոգիներում Իր սիրո հուրը (Խոսրով Աճձևացի):

218. Տեր, եթե Մարմնիդ հետ հաղորդվում է մարդ, ազատ կլինի ամոթի բոլոր կասկածներից (Գրիգոր Նարեկացի):

219. Կան առաքիլություններ, որոնք հաճելի չեն Աստծուն, և դա չարի խաբելությունն է (Եզնիկ Կողբացի):

220. Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից, նրա հետ վախն էլ թող փախչի մեր մտքերից ու խորհուրդներից (Վարդան Մամիկոնյան):

221. Սուրբ խորհուրդներին մոտենալիս, քահանայի պղծությունը բնավ քեզ չի վնասի, իսկ նա, որ պղծությամբ մոտենա, այդ պարագայում քահանայի սրբությունը նրան չի օգնի (Հովհան Մանդակունի):

222. Տերունական Սուրբ Մարմնին մերձենալը սուրբերի համար լույս է, որ լուսավորում է հոգով մոտեցողներին, իսկ պիղծերի համար՝ հուր է, որ այրում է ու ապականում մեղքով մոտեցողներին (Հովհան Մանդակունի):

223. Մարդը, որ մարդ է սպանում, մարդասպան է կոչվում, իսկ նա, որ անարժանաբար Տիրոջ Մարմնին է հաղորդվում, Աստվածասպան կլինի, քանզի նորից՝ մեկ անգամ ևս Աստծո Որդուն խաչն է հանում (Հովհան Մանդակունի):

224. Եվ արդ, սատանան այսպես բոլորի համար մահվան որոգայթներ է հնարում և Աստծո ուղիղ կարգից և վարքից հանում: Արդյունքում՝ չար պտուղ և անօրեն վարձ, որով կարծում են ստանալ արքայությունը, նույնով պիտի ժառանգեն տանջանքները: Եվ սատանան այնպիսի հափշտակումով է հիմարացնում, որ նույնիսկ աղոթքի, պահքի և ողորմության ժամանակ է զգուս մեղքի մեջ: Եվ չենք ջանում մեզանից թոթափել սատանայի թմբիրը և պաղատանքներով, ապաշխարությամբ Տիրոջը չենք հաշտեցնում, քանզի ապաշխարությունը կարող է սպիտակեցնել մեղքերով սևացածներին և մաքրել գարշաթաթախներին, լուսավորել մեղքերով խավարյալներին և փարատել անօրենության մթերումները (Հովհան Մանդակունի):

225. Ո՛չ երբևէ մտաբերում ենք Օրը, ո՛չ Դատաստանի արհավիրքները և հավիտենական դառն ամոթը: Եվ ամենևին իսկ չենք հիշում, թե ինչ

պիտի կրենք հետմահու և մեծ զգուշությամբ և հանապազ երկյուղով չենք մտաբերում սատանայի ամենահնար պատերազմը, որը միշտ գաղտնի, անդադար մարտնչում է և հարածամ աներևույթ վիրավորում, և չենք սգում և չենք զգուշանում նրա չար նետերից ու խստավեր հարվածներից, այլ ամբողջովին ցանկությունների մեջ անհոգ վայելում ենք և անխոհեմ հանգստանում (Հովհան Մանդակունի):

226. Իսկ ես չարի բազում նետերից վիրավորվեցի և հաղթվելով պարտվեցի. խոստովանում եմ իմ պարտությունը և ծանուցում իմ ամբարշտությունը, պատմում եմ իմ անթիվ մեղքերը և ողբում իմ ահեղ անօրինությունները: Քանզի վերքերիս ցավերը հարկադրում են ինձ պատմել, և իմ աղետների վարանումները ստիպում են ինձ պաղատել, մեղքերս լալ և վերքերս բժշկել (Հովհան Մանդակունի):



Հայրերի վարքից

1. Սուրբ հայրապետ Փիլիպպոսի կաթողիկոսությունը օրավուր զորանում ու հաստատվում էր, որովհետև Տերը նրա հետ էր, քանզի վարքով խիստ ճգնող, պահք պահող, մտքով սրբախորհուրդ, աղոթքներում անձանձիր, խոսակցությունն աստվածային էր. ինչ-որ Աստծուց խնդրում էր, Աստված ամենը անթերի պարզում էր: Մեր աչքերով հենց տեսանք, որ բազում դիվահարներ նրա աղոթքներով ազատվեցին, հիվանդներ, պես-պես ցավազարներ, անդամալույծներ առողջացան, ամուլ կանայք նրա աղոթքներով զավակներ ծնեցին:

Մինչ միաբաններ էինք մեծ միաբանությամբ բնակված Սուրբ Էջմիածնում, Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակ, պատահեց, որ միաբաններից մեկն այսահարվեց: Չարն այնքան ուժեղացավ, որ մինչև անգամ նրան առած՝ տանում էր շինությունից դուրս՝ դաշտ, հանդեր, այստեղ-այնտեղ մարդկանցից հեռու շրջել էր տալիս, որին միշտ բռնում, բերում էին վանք. ապա նրա ոտքերը երկաթյա ոտնակապեր դրին, և այդպես պահելով ամեն օր քահանաներն Ավետարան էին կարդում. և երկարեց այսպես մինչև հիսուն օր: Ապա մի օր, որ կիրակի էր, Փրկական խորհրդի Սուրբ Պատարագը մատուցելուց հետո, երբ ժողովուրդը եկեղեցուց դուրս գալով գնաց, Փիլիպպոս հայրապետը հրամայեց՝ այսակիր միաբանին եկեղեցի բերել, որպեսզի պատարագի քահանան ատյանի մեջ սրբության զգեստով նրա վրա Ավետարան կարդա: Տեր Փիլիպպոսն այս ասաց և ինքը ելավ, գնաց տուն, որովհետև անհրաժեշտ գործ ուներ, պատվավոր ինչ-որ մարդիկ նրան հյուր էին եկել: Գնաց նրանց մոտ, սեղան բացեց նրանց առջև և մի քիչ մնաց նրանց հետ՝ նրանց սիրտը շահելու համար, ապա թողեց նրանց հացկերույթի սեղանին, ինքը վերադարձավ եկեղեցի. եկեղեցու արևմտյան դռնից հանդարտ մտնելով, խաղաղորեն եկավ ատյանի մոտ և այնտեղ ընկավ իր ծնկների վրա՝ իր դեմքը պահելով սուրբ սեղանի հանդեպ: Մի գուբղայի չափով սաղմոսի սրտառուչ պաղատանքով և հորդ արտասուքով

աղոթեց: Այդ ժամանակ այսակիր մարդը կամենում էր ազատվել, փախչել բռնողների ձեռքից: Եվ երբ չկարողացավ ազատվել, ուժգին բարձրաձայն գոչումով աղաղակեց, ընկավ գետին, փսխեց և դարձավ ինչպես մեռել: Այնուհետև տեր Փիլիպպոսը դատարեց աղոթելուց և մոտականերին հրամայեց վերցնել նրան և տուն տանել: Եկեղեցու սպասավորները մոտեցան, սրբեցին փսխած տեղը: Այդ օրից և հետագայում Քրիստոսի շնորհներով և Աստծո մարդ տեր Փիլիպպոսի աղոթքներով այդ միաբանն ազատվեց հիվանդությունից: Ազատված միաբանն ինքն էր պատմում, թե «Մինչդեռ միաբաններն ինձ բռնել էին Ավետարանի ներքո, որ ժամարարը կարդում էր, տեսնում էի, որ մի ահագին սև վիշապ օձ պատել էր իմ մեջքը, պարանոցս և ամբողջ մարմինս: Նաև տեսա Փիլիպպոս հոգևոր տիրոջը, որ իր ձեռքում բռնել էր խիստ մեծ մերկ սուսեր, սրընթաց հարձակումով մտավ եկեղեցու դռնով և հասավ ինձ մոտ, այդ սրով զարկեց օձին, որ փաթաթվել էր ինձ, և կտրատելով ինձնից ցած թափեց: Օձի գլուխը և կտորները մեծ փութով փախուստի դիմելով՝ ելան եկեղեցուց ու կորան»: Ոչ միայն այս, այլև նման շատերին բժշկեց, բայց այս միայն գրեցի՝ իբրև օրինակ նաև մյուսների համար (Առաքել Դավիթեցի):

2. Ճգնավորը վախճանվում էր: Երբ ավանդում էր հոգին, եկավ սատանան և ասաց. «Կարողացար փախչել ինձանից»: Իսկ ճգնավորը պատասխանեց, ասելով. «Դեռևս չգիտեմ»: Արի ու տես հայրերի զգուշությունը, թե որքան զգաստ էին մինչև մահ (Հարանց Վարք):

3. Մի ծեր վանական պատմում էր իր մասին, որ իր հայրը եղել է կռապաշտ քուրմ:

Մանուկ հասակում նա նստած լինելով մեհյանում, տեսնում է, թե ինչպես հայրը ամեն անգամ անասուն է բերում կուռքին զոհաբերելու համար:

Մի անգամ, երբ հայրը դուրս է գալիս մեհյանից, նա գաղտնի մտնում է մեհյան և այնտեղ տեսնում է սատանային՝ բազմած գահին, բազմաթիվ զորականներով շրջապատված:

Եվ ահա իշխաններից մեկը մոտենում է նրան՝ խոնարհվելով ասում. «Ես եղա այսինչ երկրում և այնտեղ մեծ պատերազմ հրահրեցի, և մեծ խռովություն և արյունահեղություն եղավ: Ես եկա քեզ հայտնելու այդ մասին»:

Հարցրեց նրան սատանան. «Ինչքա՞ն ժամանակում արեցիր այդ ամենը»: «Երեսուն օրում», - պատասխանում է դևը:

Սատանան հրամայեց մտրակել նրան՝ ասելով. «Ընդամենը ա՞յդ ես արել այդքան երկար ժամանակում»:

Այնուհետև եկավ մեկ ուրիշը և խոնարհվեց սատանայի առջև:

«Դու որտեղի՞ց եկար», - հարցնում է նրան սատանան:

Պատասխանեց նրան դևը՝ ասելով. «Ես ծովի վրա էի և փոթորիկ առաջացրեցի, խորտակեցի նավերը և բազմաթիվ մարդկանց խեղդամահ արեցի և եկա քեզ տեղեկացնելու»:

«Դու որքա՞ն ժամանակում արեցիր այդ ամենը», - հարցնում է նրան սատանան:

«Քսան օրում», - պատասխանում է դևը:

Սրան էլ սատանան հրամայեց մտրակել ծուլության համար: Եվ եկավ երրորդ դևը, խոնարհվելով ասաց. «Ես եղա այսինչ քաղաքում, որտեղ հարսանիք էին անում: Ես վեճ հրահրեցի և մեծ արյունահեղություն եղավ, և դեռ ավելին, սպանեցի փեսային և եկա քեզ հայտնելու»:

Եվ երբ սատանան իմացավ, որ տաս օրում է արել այդ ամենը, հրամայեց սրան էլ մտրակել:

Եվ մի ուրիշ դև եկավ խոնարհվեց նրան, և սատանան հարցրեց նրան. «Դո՞ւ որտեղից եկար»:

«Անապատից, լրացավ քառասուն տարի, որ ես պատերազմում եմ մի վանականի դեմ և մի կերպ հաղթեցի նրան այս գիշեր զցելով շնության մեղքի մեջ»:

Լսելով այս՝ սատանան վեր կացավ գահից, համբուրեց դևին և, արքայական պսակը հանելով իր գլխից, դրեց դևի գլխին, նստեցրեց իր կողքին ասելով. «Դու մեծ և փառավոր գործ ես կատարել»:

Տեսնելով և լսելով այս ամենը, երեխան ինքն ասաց. «Վանականության դասը պետք է, որ մեծ խորհուրդ ունենա», և ընդունելով քրիստոնեություն, մտավ վանք (Հարանց Վարք):



Հաղթի՛ր, Տե՛ր, իմ հակառակորդին և զորացրո՛ւ՝ դիմակայելու ինձ հետ պատերազմողին, հազցրո՛ւ ինձ հավատքի զրահը, որ պահքով և աղոթքով սրբեմ ցանկության աղտերը և մարմնական խորհուրդները և ստանամ փրկական շնորհները:

Առաքի՛ր, Տե՛ր, Քո խաղաղության հրեշտակին իմ անձին վերակացու և պահպան, որպես իշխանություն՝ զնալու համար իժի և քարբի վրայով՝ ոտնակոխ անելու թշնամու ամենայն զորություն: Եվ պահի՛ր ինձ, Տե՛ր, որպես աչքի բիբ Քո թևերի հովանու տակ:

Արիացրո՛ւ ինձ, Տե՛ր, պատվիրանների պահպանության, որով հայտնի է լինում ժուժկալությունը պատերազմի մարտերում, հաղթությունը բանասարկուի հանդեպ, մարմնի մեջ մեռնելը մեղքի համար և ճգնության մեջ պայծառանալը:

Կանգնեցրո՛ւ ինձ, Տե՛ր, հաստատուն և անշարժ՝ պատերազմի փորձությունների մեջ՝ առանց երկյուղի, քաջ և անուր հավատքով և հորդորական սիրով զորանալու՝ ինձ վրա եկող դևերի դեմ: Չիմի՛ր ինձ Քո ամրակուռ զենքով՝ պատերազմելու և հաղթելու հակառակամարտ թշնամուն, որ կամենում է ինձ որսալ իսպառ:

Մեղքով ընկածիս կանգնեցրո՛ւ, Տե՛ր, և թշնամուց խոցվածիս դարմանի՛ր, վերցրո՛ւ մեղքերիս ցավը և վերացրո՛ւ հանցանքներիս կսկիծը,

հափշտակի՛ր դառը մահճից և ազատի՛ր անողորմ տանջանքներից, հեռացրո՛ւ մարմնական հղփություններից և կարգի՛ր ճգնավորների դասում:

Մինչև ե՞րբ ես, Տե՛ր, հանդուրժելու չարագործին, որ չի հագնում իմ կորստ-յամբ, այլ հանապազ չարիքներ է հարուցում և օտարացնելով խափանում ինձ բարուց և առաքիճություններից, հեռացնում ինձ սրբությունից և դուրս հանում հավիտենական կյանքից: Խավարեցնում է իմ աչքերի լուսավորությունը և ապականելով գերում իմ միտքը, մղում ինձ հանցանքների չար ծառայության և մատնում ինձ անօրեն դահիճների ձեռքը, տանում չարչարանքների վայր և նետում մահվան կապանքների բանտ, դնում խավարասեր սպասավորների մեջ և կապում մեղքերի պարաններով. և արդ, ի՞նչ կլինեն ես՝ եղկելիս, եթե Դու, Տե՛ր, չօգնես ինձ:

Քե՛զ եմ ապավինում, Տե՛ր, որ քավարան ես մեղավորների և դարան՝ հալածվածիս. փախստական դարձրու իմ թշնամուն: Չունեն այլ օգնական, այլ միայն Քե՛զ ունեն պահապան իմ անձին. փրկի՛ր վտանգից, ազատի՛ր որոգայթներից և արժանացրո՛ւ ինձ լինել հավերժի որդի:

Վերակացու և պահապան եղիր իմ անձին, ով Տե՛ր իմ Զիսուս, պահի՛ր ինձ դևերից և փրկի՛ր ինձ մարդկային փորձանքներից: Զաղթի՛ր հակառակորդին և հաստատի՛ր ինձ՝ պատերազմողների մեջ քաջ և ընտիր լինելու, գործակցի՛ր ինձ՝ մեղքերի քավարան լինելու և համբերելու վշտերի, առաքինի գործերով մերձեցալու Քո աստվածային շնորհներին: Եվ Քե՛զ, Զոր և Ամենասուրբ Զոզուդ հետ փա՛ռք, իշխանություն՝ւն, տերություն՝ւն և արքայություն՝ւն և երկրպագություն՝ւն համայն արարածների կողմից, այժմ և անվախճան հավիտյաններում և հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):



Բաղամ եվ Փենեխես (Թիվ 2, 5)

Երբ Իսրայելը պատրաստվում էր հարձակվել Մովաբի վրա, Բաղակը՝ Մովաբի թագավորը, տեսնելով Իսրայելի հաղթարշավը, զարհուրեց և տեսավ, որ մարդկային ոչ մի զորություն չի կարող կասեցնել Իսրայելի ընթացքը, և որոշեց հոգևոր այդ պատերազմում հոգևոր ձևով պատերազմել, քանզի տեսավ, որ Իսրայելի համար Աստված է պատերազմում: Ինքն էլ որոշեց դիմել Բաղամ հարցուկին, որպեսզի Իսրայելին անիծի: Բայց քանի որ անեծքի փոխարեն միշտ օրհնություն էր դուրս գալիս Բաղամի բերանից, Բաղակը զայրացավ և հուսահատվեց, քանի որ չհասկացավ, որ չկա ուրիշ Աստված Իսրայելի Աստծուց բացի, Որն է Արարիչը ամենայնի, և ո՞վ կարող է Նրան դիմակայել: Եվ Իսրայելն էլ անհոգ էր, քանի որ ասվում է. «Տերն է իմ լույսն ու փրկությունը. ես ումի՞ց եմ վախենում: Տերն է իմ կյանքի ապավենը. ես ումի՞ց եմ դողում»:

Բայց քանի որ Բաղակը խոստացել էր վճարել Բաղամին, Բաղամն էլ սովորեցրեց Բաղակին, թե ինչպես կարելի է հաղթել Իսրայելին, այն էլ այնպես, որ Մովաբի բանակից մի հոգի իսկ չտուժի, այսինքն՝ Իսրայելը իր ձեռքով իրեն կոտորի: Սա էր խորհուրդը, թե՛ Իսրայելի Աստված սուրբ Աստված է և մեղք տանել չի կարող, և եթե Իսրայելին գցեք մեղքի մեջ, սուրբ Աստված նրանցից կհեռանա, իսկ առանց Աստծո դրանք ընդամենը թույլ, տկար, վախկոտ մի խառնամբոխ եմ, որոնց կոտորելու համար առանձնապես մեծ ջանք չի պահանջվի:

Եվ Բաղամն իսկույն գործի անցավ. ընտրեց իր ազգի կանանց, նույնիսկ իշխանագուճներին, և նրանց կարգադրեց, որ զուգվեն, զարդարվեն և մտնեն Իսրայելի բանակի մեջ՝ վերցնելով իրենց կուռքերին:

Եվ Իսրայելը չկարողացավ այս փորձությանը դիմակայել, շատերն ընկան շնության մեղքի մեջ և այս կանանց գայթակղության պատճառով խուճկ ծխեցին Բերվեգովրին, ինչպես որ հետագայում նույն պատմության մեջ ընկավ Սողոմոն թագավորը:

Եվ հրաման եղավ, որպեսզի կոտորեն բոլոր նրանց, ովքեր շնացան և խոնարիվեցին կուռքի առջև: Եվ մեծ կոտորած սկսվեց Իսրայելի մեջ: Մովաբի աչքի առջև միմյանց կոտորում էր Իսրայելի ժողովուրդը, Բաղակը ցնծում էր, իսկ Իսրայելի մեջ սուգ կար:

Եվ երբ մի Իսրայելացի իշխան մի մովաբացի կնոջ հետ մտավ իր եղբոր վրանը, այդժամ Ահարոնի որդի Չաբարիայի որդի Փենեխեսը, վերցնելով նիզակը, վրեժխնդիր եղավ, քանզի նախանձախնդիր էր

իր Տեր Աստօն համար, և՛ այդ կնոջը, և՛ այդ իշխանին սպանեց: Եվ դա նրան արդարություն համարվեց, և Աստօն բարկությունը դարարեց, և Իսրայելը մեծ վնաս կրելուց հետո սթափվեց, արթնացավ թմբիրից, մաքրվեց Մովաբի ներմուծած աղտից և շարունակեց իր հաղթարշավը՝ ոչնչացնելով մովաբացիներին և Բաղան հարցուկին՝ իր նեցգ խորհուրդների համար:

Եվ ո՞վ կարող է մեր՝ քրիստոնյաներիս դեմ ելնել, եթե մենք ինքներս մեր դեմ չելնենք. «Եթե Աստված մեզ հետ է, ապա ո՞վ է, որ մեր դեմ է»: Բայց ինչո՞ւ բազում քրիստոնյաներ շեղվում են Տիրոջ ճանապարհներից և գլորվում փրկության ուղուց: Սկսած դեռ առաքելական շրջանից մինչ օրս՝ մեկը գլորվեց 12 առաքյալներից, երկուսը գլորվեցին 70 աշակերտներից և բազումները՝ նորաստեղծ Եկեղեցիներից:

Սա բարի պատերազմ է, և այս պատերազմի ժամանակ մեր թշնամիները բազում հարձակումներ են գործում մեր դեմ, որպեսզի շեղեն մեզ և գլորեն այն գուբը, որից Տիրոջ շնորհիվ դուրս եկանք:

Բայց մի՞թե մեր թշնամիներն ավելի զորեղ են մեզանից: Այո, շատ ավելի, քանի որ նրանց գլուխը՝ սատանան, իր պոչով միայն շարժում է աստղերի մեկ երրորդ մասը: Ո՞վ ենք մենք, որպեսզի կարողանանք մեր մարդկային զորության վրա հուսալով՝ հաղթել նրան: Նրան կարողացավ հաղթել միայն Աստվածամարդը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ Իր խաչով ջախջախելով նրա գլուխը: Ուրեմն, մենք մեր մարդկային կարողություններով ոչինչ ենք, բայց երբ մեր մարդկային չնչին զորությանը գումարվում է աստվածային անհաղթ զորությունը, այնժամ մեր հաղթանակը ապահովված է: Բայց տեսնում ենք, որ Աստված հեռանում է հավատացյալից, երբ նա՝ գայթակղվելով չարից, ընկնում է մեղքի մեջ, և քանի որ ասվում է, թե՛ «Դուք Աստօն տաճար եք, և եթե դուք այդ տաճարն ապականեք, Աստված էլ ձեզ կապականի», տեսնում ենք, որ սատանան մեզ ոչինչ պարտադրել չի կարող, բայց իշխանություն ունի մեզ շատ բաներ առաջարկելու: Ինչպես որ Տիրոջ թույլտվությամբ զրկեց Հոբին իր ունեցվածքից, ընտանիքից և առողջությունից և տեսնելով, որ ոչինչ դուրս չեկավ դրանից, կնոջ միջոցով ստիպեց Հոբին՝ բերան բացել Տիրոջ դեմ, սակայն խայտառակ կորսվեց, քանի որ Հոբը տեղի չստվեց թշնամուն:

Եվային էլ օձը համոզեց, գայթակղեց և խաբելով հաղթեց, բայց նա չէր կարող ուժ գործադրել և ուժով ստիպել, որպեսզի Ադամն ու Եվան ճաշակեն արգելված պտղից: Նույնն էլ Իսրայելի պարագան էր. ո՛չ Բաղամը, ո՛չ Բաղակը չէին կարող ստիպել, որպեսզի Իսրայելը շնանա և կուռքի առջև խոնարհվի:

Մենք էլ, որ ելել ենք և ընթացք վերցրել դեպի երկնային Քանան, զգուշանանք մեր թշնամուց, բայց չվախենանք նրանից, այլ վախենանք մեր Տեր Աստծուն մեր մեղքերով ու անօրինություններով վշտացնելուց: Քանի որ չարը գիտե մեր մարդկային թուլությունները և պատերազմ է մղում մեր դեմ՝ մեր բնությանը հատուկ կրքերի միջոցով. վավաշոտին՝ գայթակղում գերիչ տեսիլներով, պիղծ երազներով, որկրամուլին՝ կերակուրների տեսակներով, արծաթասերին՝ դրամի գայթակղությամբ, և այսպես, ով ինչ թուլություն ունի, դրանով

էլ իր գործն է անում: Քանի դեռ Իսրայելը իր հույսը դրել էր Տիրոջ վրա, թե՛ Աստված մեզ համար կպատերազմի, մենք թե անհոգ էլ լինենք՝ կլինի: Եվ այդ թմբիրն իսկ դարձավ նրանց պարտության պատճառը, քանի որ Աստված Իր իսկ ժողովրդին է ասում. «Արթուն մնացեք, ամեն ժամ աղոթք արեք»:

Ուրեմն, ջանանք արթնանալ, որպեսզի աշխարհի բազում գայթակղությունները և դիվային պիղծ առաջարկները չընդունենք, որպեսզի չհեռանա մեզանից փրկարար զորությունը, քանի որ ասվում է. «Մի՛ տրտմեցրեք Աստծո Հոգին, որ ձեր մեջ է»: Եվ քանի որ շատերն ընկան, ուրեմն, մենք էլ անհոգ չլինենք, չխաբվենք չար խորհուրդներից, թե իբր ամեն բան լավ է, Աստված մեզ համար փրկություն է պատրաստել, մենք էլ անելիք չունենք:

Ուրեմն, քանի դեռ ժամանակ կա, ամեն մեկս աշխատենք քննել, թե մեր սրտերի մեջ ինչպիսի կուռքերի ենք խոնարհվում և խուճկ ծխում, և եթե այս գիրքը կօգնի հայտնաբերել մեր սրտերի մեջ նման բաներ, ապա Փենեհեսի պես վճռական լինենք և այդ կուռքը ոչնչացնենք միզակի հարվածով, որքան էլ որ դա մեզ համար ցավոտ լինի, քանի որ այն հրեշտակները, որ ուրախացան մեր ապաշխարությամբ և մեր դարձով, այժմ սգում են մեր մեղավոր ընթացքի համար, ինչպես որ սուգ էր Իսրայելի մեջ: Ուրեմն, նախանձախնդիր լինենք և կացիճը դնենք արմատին և մեր սրտերից ոչնչացնենք կուռքերը, և Տերը դա մեզ Փենեհեսի պես արդարություն պիտի սեպի, և Իրեն փառք հավիտյանս: Ամեն:

Հայր Նիկողեմոսն այն մասին, որ պատերազմը պետք է մղել անդադար – քաջությամբ

Եթե ցանկանում ես հաղթել թշնամիներիդ որքան հնարավոր է արագ և հեշտ, քեզ, ով եղբայր, պետք է պայքարել կրքերիդ դեմ՝ անդադար և համարձակությամբ, հատկապես և առավելապես, եսասիրության դեմ, այսինքն այն անմիտ սիրո, որ տածում ես քո հանդեպ ինքնագոհությամբ և ինքնախոճախարությամբ:

Քանի որ այս կիրքը ծառայում է որպես հիմք և աղբյուր բոլոր կրքերի համար, ապա սրան այլ կերպ արմատախիլ անել չի լինի, եթե ոչ միայն՝ անդադար ինքնակամորեն ինքդ քեզ վրա չարանալով, նաև սիրով ընդունելով քեզ վրա եկող վշտերը, զրկանքները, անիրավությունները, աշխարհի և անհավատների կողմից հասցված նեղությունները:

Ինքդ քո հանդեպ անողորմ վերաբերմունքը տեսադաշտիցդ կորցնելը, կա և միշտ մնում է պատճառ անհաջողության այս հոգևոր պատերազմում: Եվ այսպես, մեր հոգևոր պատերազմը մենք պետք է մղենք մշտապես և անդադար, և այն պետք է վարել հոգու կայտառությամբ և համարձակությամբ, որը կարող ենք ձեռք բերել, եթե խնդրենք այն Աստծուց: Ուրեմն, ելիր այս մարտադաշտում պատերազմելու՝ առանց տատանվելու, և եթե քո մեջ կառաջանան շփոթեցնող խորհուրդներ՝ քո դեմ պատերազմող դևերի կատաղության և մշտական չարության վերա-

բերյալ, որ տածում են քո հանդեպ այս չար թշնամիները, նաև նրանց գնդերի բազմազանության և մեծաքանակության վերաբերյալ, այդ ժամ դու էլ աշխատիր խորհել Աստծո անսահմանորեն մեծ զորության և քո հանդեպ նրա տածած սիրո մասին, նաև՝ երկնային հրեշտակների անհամեմատ ավելի մեծ քանակության, և զորության, և սրբերի բարեխոսական աղոթքների մասին:

Նրանք բոլորը ոչ հայտնապես պայքարում են մեր համար մեր թշնամիների դեմ, ինչպես որ գրված է Ամաղեկի վերաբերյալ. «Քանի որ Տերը իր անտեսանելի ձեռքով պատերազմում է ամաղեկացիների դեմ սերնդից-սերունդ» (Ելից 17:16):

Որքան տկար կանայք և քանի-քանի դեռահաս երեխաներ արժանացել են այսպիսի հզոր և ամենօրյա արագահաս օգնության մամոթից չար դիվային խորհուրդներին դիմակայելու համար: Նրանք՝ նման օգնության արժանանալով, առավելության հասան թշնամու դեմ և հաղթեցին այս աշխարհի ամբողջ իմաստությանը, թշնամի սատանային, նրա բոլոր խարդավանքները և դժոխքի բոլոր չարությունը:

Եվ այսպես, քեզ այսուհետև պետք չէ սարսափել, երբ թափվում է նման խորհուրդների հոսք քո վրա, որը հարուցում է նման մտքեր. «Թշնամիների կողմից քո դեմ սկսված պայքարը չափազանց հզոր է, որ այն վերջ չունի և այն կծովի քո ամբողջ կյանքի ընթացքում, և չես խուսափի սրանց հետևանքով հաճախակի անկումներից՝ նրանց զանազանության և կրկնության պատճառով: Ինացիր, որ մեր թշնամիներն իրենց բոլոր որոգայթներով հանդերձ, գտնվում են մեր Աստվածային Ջորայետի՝ Տեր Յիսուս Քրիստոսի ձեռքում, որի պատվի և փառքի համար դու մղում ես այս պատերազմը: Քանի որ նա ինքն է քեզ մտցնում մարտի մեջ, դրա համար էլ թույլ չի տալիս քո թշնամիներին վերջնականորեն բռնանալ և հաղթել քեզ, եթե իհարկե, դու ինքդ քո կամքով չանցնես թշնամու կողմը, Նա անձամբ կմարտնչի քո թշնամիների դեմ, և քո ձեռքը կմատնի պարտված ոտիներին: Ինչպես որ գրված է. «Քո Տեր Աստված շրջում է քո բանակատեղում, որպեսզի փրկի քեզ, և քո թշնամիներին քո ներկայությամբ մատնի քո ձեռքը» (Բ՝ Օրինաց 23:14):

Եթե Տերը դանդաղի թշնամիների հանդեպ կատարյալ հաղթանակ շնորհել քեզ և հետաձգի այն մինչև քո կյանքի վերջին օրերը, այդ ժամ ինացիր, որ սա անում է հանուն քո բարօրության, միայն թե դու մի նահանջիր և մի դադարիր մղել մարտը ամբողջ հոգովդ: Ոչինչ, որ երբևէ կվիրավորվես, դրանից պետք չէ որ զենքերդ ցած դնես և դիմես փախուստի:

Մի նպատակ ունեցիր. պատերազմել մեծ խանդավառությամբ և արիությամբ, որովհետև այս պատերազմն անխուսափելի է: Չկա մեկը, որին անտեսի պատերազմը այս կյանքի ընթացքում կամ մահվան ժամանակ: Եվ ով որ չի կրում այս մարտը կրքերին և թշնամիներին հաղթելու համար, նա անխուսափելիորեն գերի կընկնի այստեղ, կամ արդեն այնտեղ և կտրվի մահվան: Անօգուտ չէ քեզ համար իմանալ նաև, թե ինչ նպատակով է Աստված մեզ պահում այսպիսի պատերազմական վիճակում: Ինչպես հնում Աստված՝ առաջնորդելով Իսրայելին Ավետյաց երկիր, ոչ բոլոր ազգերին ոչնչացնելու հրաման տվեց, այլ թողեց տեղում հինգ օտար և Իսրայելի հանդեպ թշնամությամբ տրամադրված ազգերի, և սա նախ և առաջ այն բանի համար, որպեսզի փորձով տեսնի, թե Իր հանդեպ ունեցած հավատքը ամո՞ւր է ընտրյալ ազգի կողմից, և արդյոք

պահվո՞ւմ է Իր պատվիրանները, նաև այն բանի համար, որպեսզի իր ժողովրդին սովորեցնի պատերազմ վարելու արվեստը (Դատավոր. 2: 21-23, 3:1-2):

Եվ այսպես, Նա միանգամից չի ոչնչացնում մեր բոլոր կրքերը, այլ թողնում է այն մեր մեջ, որպեսզի նրանք մեր դեմ պատերազմեն մինչև մահ, և սա հատկապես այն նպատակի համար, որպեսզի փորձի այն սերը, որ տածում ենք Իր նկատմամբ, և արդյոք հնագա՞մը ենք Իր կամքին, նաև, որպեսզի սովորեցնի մեզ այս հոգևոր պատերազմում վարժ լինել:

Ավելի մանրամասնորեն այս մասին շարադրում է երանելի Թեոդորոսը: Ահա թե ինչի համար է Աստված այս անում, ասում է նա.

1. Որպեսզի մենք չտրվենք անհոգության և ծուլության, այլ լինենք արթուն, ջանասեր և ուշադիր:
 2. Որպեսզի մենք չմոռանանք միշտ մեզ սպառնացող հարձակման մասին և որպեսզի կրքերից պարտվելով չընկնենք թշնամական շրջափակման մեջ:
 3. Որպեսզի մշտապես հարատևենք Աստծուն ապավինելու և Նրանից օգնություն փնտրելու և հուսալու մեջ:
 4. Որպեսզի չհպարտանանք, այլ միշտ խոնարհաբար մեր մասին իմաստակենք:
 5. Որպեսզի սովորենք ամբողջ սրտով ատել կրքերը և թշնամիներին, որոնք այսպիսի համառությամբ հարձակվում են մեր վրա:
 6. Որպեսզի ի հայտ գա, թե մինչև վերջ արդյո՞ք պահպանում ենք Աստծո պատվերը. «սեր և հավատը»:
 7. Որպեսզի մղի մեզ ճշտությամբ կատարել Աստծո բոլոր պատվիրանները և չխախտել նույնիսկ ամենափոքրերը:
 8. Որպեսզի կարելի լինի գործնականում հասկանալ, թե որքան թանկարժեք է առաքինությունը, որպեսզի ձեռքից բաց չթողնի այն՝ ընկնելով մեղքի մեջ:
 9. Որպեսզի անդադար պայքարը մեզ մեծամեծ պսակներ ձեռք բերելու հնարավորություն ընձեռի:
 10. Որպեսզի Աստծուն փառավորենք, իսկ սատանային և մեղքն առավելագույնս խայտառակ անենք մեր համբերությամբ՝ մինչև վերջ:
 11. Որպեսզի հմտացած լինելով այս պատերազմում, որը մղեցինք մեր կյանքում, մահվան ժամին անվախ լինենք, երբ մեր դեմ մղվում է ամենադաժան մարտը:
- Այսպիսով, շրջապատված լինելով բազում թշնամիներով, որոնք այսպիսի ոխակայությամբ և ատելությամբ լցված պատերազմում են մեր դեմ, մենք չենք կարող նրանցից սպասել ոչ խաղաղություն, ոչ զինադադար, ոչ ընդմիջում, ոչ պատերազմի հետաձգում, այլ ամեն մի ակնթաթ պետք է պատրաստ լինենք պատերազմի և իսկույն ևեթ քաջաբար մտնենք մարտի մեջ, երբ թշնամիներն այն սկսեն:
- Իհարկե, լավ կլիներ, որ ի սկզբանե չբացենք մեր էության դռները և չթողնենք թշնամիներին և կրքեր մտնել մեր մեջ, մեր հոգիների և սրտերի մեջ, բայց այն բանից հետո, երբ նրանք ճանապարհ հարթեցին մեր ներսը, ապա հարկ չէ մատնվենք անհոգության, այլ պետք է զինվել դրանց դեմ, որպեսզի վնդեցնենք սրանք մեր միջից: Քանի որ սրանք անամոթ են և համառ, և չեն հեռանա, եթե նրանց չվնդեցնենք՝ նրանց դեմ պատերազմ մղելով:

Նարեկ

Քան ԿԶ

Միայն թագավոր, հզոր ինքնակալ,
Արարիչ երկնի, երկրի և բոլոր
Զարդարանքների, որ կա նրանց մեջ,
Տե՛ր Հիսուս, ահա քեզ ապավինած՝
Սպասում եմ ես գալստյանն Փրկչիդ՝
Քո ողորմության ակնկալիքով.
Ոտներդ ընկած՝ գարշապարներիդ հետքն եմ համբուրում,
Խոստովանում եմ պարտությունը իմ,
Հրապարակում մեղքերս բոլոր,
Կշտամբանքներիս քարերով ծեծկվում,
Այրվում եմ սրտիս հառաչանքներով,
Խոցոտվում եմ խոր խղճիս խայթերով
Ու սրտիս բոցով լափված՝ տապակվում,
Եփվում եմ ցողով աղի արցունքիս,
Երիկամներիս հրայրքով կիզվում,
Ցամաքում՝ օղով հուսահատության
Եվ նվաղում եմ հողմով դառնաշունչ,
Ցնցվում եմ վշտից ու կողկողագին հեծությամբ դողում,
Տառապում՝ անլուր տվայտանքներով
Ու տատանվում եմ տագնապով հոգուս,
Մրրկակոծ ծփում ու սասանվում եմ ալեբախումից.
Սարսում եմ, երբ որ լուր է սպասվում,
Գալիքն հիշելով՝ կորչում ահաբեկ,
Ատյանի տեսքից հալվում եմ իսպառ
Ու մեռնում՝ մեծիդ սպառնալիքով:
Լսի՛ր, բարեգո՛ւթ, քավիչ, մարդասեր ու երկայնամիտ,
Քաղցրություն անճառ, բարեպարզ օր և տիվ տենչալի,
Քանգի կարող ես ամեն ինչի մեջ,
Կարող ես նաև շունչս փչելիս ինձ փրկագործել:
Եվ քեզ Սուրբ Հոգուդ ու Հորդ հետ փա՛ռք հավիտյանս. ամեն:

(սբ. Գրիգոր Նարեկացի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ԵՎ ՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Խրատը լսեցե՛ք և իմաստուն եղե՛ք և մի՛ մերժե՛ք: Երանի այն մարդուն, որ
ինձ է լսում (Առակ. 33:34):*



Աստվածաշնչից

1. Վայելչությունը սուտ է ու գեղեցկությունն՝ ունայն, սակայն Տիրոջից վախեցող կինը պիտի գովվի (Առակ. 31:30):
 2. Մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, ապա ձեր մտքի նորոգությամբ նորոգվեցե՛ք (Հռովմ. 12:3):
 3. Ձեր զարդարանքը չլինի՛ դրսից մազերը հյուսելը և ոսկեղեններ շարելը և կամ շքեղ հանդերձներ հագնելը: Այլ սրտի ծածուկ մարդը հեզ և հանդարտ հոգու անեղծությամբ, որ դա Աստծո առաջին շատ թանկագին է (Ա. Պետ. 3:3-4):
 4. Նայեցե՛ք շուշանին՝ ինչպես է աճում. ո՛չ աշխատում է և ո՛չ հյուսում: Ասում եմ ձեզ՝ Սողոմոնն իսկ իր ամբողջ փառքի մեջ նրանցից մեկի նման չհագնվեց: Իսկ եթե խոտը, որ այսօր բաց դաշտի մեջ է, իսկ վաղը հնոց է նետվելու, Աստված այդպես է հագցնում, որչա՛փ ևս առավել ձեզ պիտի հագցնի, թերահավատներ (Ղուկ. 12:27-28):
 5. Նույնպես և կանայք, վայելուչ հագուստով, ամոթխածությամբ և պարկեշտությամբ թող զարդարվե՛ն. ոչ թե հյուսվածքներով կամ ոսկով, կամ մարգարիտներով, կամ պճնագարդ հանդերձներով, այլ բարի գործերով, ինչպես վայել է աստվածապաշտությունը հանձն առած կանանց (Ա Տիմ. 2:9- 10):
 6. Մարդուն մի՛ գովիր իր գեղեցկության համար և մի՛ արհամարհիր իր խեղճ տեսքի համար (Սիրաք 11:2):
 7. Քո գեղեցկության համար սիրող հպարտացավ, քո վայելչության պատճառով քո իմաստությունն ապականեցիր: Ես էլ գետինն նետեցի քեզ (Եզեկ. 28:17):
- ***
8. Մի՛ շնացիր (Ելք 20:14):
 9. Կնոջ հետ շնություն անողի խելքը պակաս է: Այս բանն անողը իր հոգին կկորցնի: Նա վերք ու անարգանք կգտնի, և նրա նախատիմքը անջնջելի է (Առակ. 6:32- 33):

10. Որոյա՛կ, թող քեզ չհաղթի կնոջ գեղեցկութեան ցանկությունը, թող չբռնվեն քո աչքերը նրանով, մի՛ հրապուրվիր նրա թարթիչներով (Առակ. 6:24):

11. Օտար կանանց բերանը խորունկ փոս է, Տիրոջն ատելի եղողը այնտեղ կընկնի (Առակ. 22:14):

12. Մի՛ նայիր ամեն մարդու գեղեցկութեանը և մի՛ նստիր կանանց մեջ, քանզի ինչպէս շորից ծնվում է ցեցը, այնպէս էլ կնոջից՝ չարությունը (Սիրաք 42:12- 13):

13. Երկար մի նայիր կույսին, որպեսզի չզայթակղվես նրա հմայքով: Դեսուդեն մի՛ գցիր աչքերդ քաղաքի փողոցներում և մի՛ թափառիր նրա ավերակների մեջ: Աչքերդ հեռացրու գեղեցիկ կնոջից և երկար մի նայիր օտարի գեղեցկութեանը: Շատերը մոլորվեցին կնոջ գեղեցկությունից. դրանից կրակի ման սեր է բորբոքվում: Ամենևին մի՛ նստիր ամուսնացած կնոջ մոտ և նրա հետ գիմի մի՛ խմիր. գուցե քո անձը շեղվի դեպի նա և քո հոգով կորստյան մատնվես (Սիրաք 9:5-12):

14. Մի՛ նայիր կնոջ գեղեցկութեանը և մի փափագիր: Բարկություն է, լրբություն և մեծ ամոթ, եթե կինն է ամուսնուն հրամայողը (Սիրաք 25:28-30):

15. Բոզաբարո մարդը չի դադարի իր մարմնի անդամների հետ անառակություն անելուց, մինչև որ կրակը վառի նրան: Մարդը, որ մեղք է գործում իր մահճի դեմ, իր սրտում ասում է. «Ո՞վ կտեսնի ինձ: Իմ շուրջը խավար է, պատերը ծածկում են ինձ, ոչ ոք չի տեսնում ինձ. ինչո՞ւ կասկածեն, չէ՞ որ Բարձրյալը չի տեսնում իմ մեղքը»: Նրա երկյուղը մարդկանց աչքն է: Նա չգիտի, որ Տիրոջ աչքը բյուր անգամ լուսատու է արեգակից, տեսնում է մարդկանց բոլոր ճանապարհները և նկատում նրանց բոլոր գաղտնի տեղերը (Սիրաք 23:23-28):

16. Դաշինք կնքեցի աչքերիս հետ ես, ու չնայեցիմ նրանք մի կույսի (Չոբ 31:1):

17. Լսել եք, թե ինչ ասվեց. «Մի՛ շնանա»: Իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջը նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում: Եթե քո աջ աչքը քեզ զայթակղեցնում է, հանի՛ր այն և դե՛ն գցիր քեզանից. որովհետև քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն: Եվ եթե քո աջ ձեռքը քեզ զայթակղեցնում է, կտրի՛ր այն և դե՛ն գցիր քեզանից, որովհետև քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն (Մատթ. 5:27-30):

18. Արդարև ասվել է. «Ով որ արձակի իր կնոջը, թող նրան արձակման թուղթ տա»: Իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ իր կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի, նա՛ է, որ նրան շնության է մղում. և ով որ արձակվածին է առնում, շնանում է (Մատթ. 5:31-32):

19. Զգույշ վարվեցեք ձեր հոգու հետ. քո երիտասարդության օրերի կնոջը մի՛ թող (Մաղաք. 2:17):

20. Ես ձեր վրա պիտի գամ արագ դատաստանով ու արագ վկա պիտի լինեն կախարհների և շնացող կանանց դեմ (Մաղաք. 3:5):

21. Իսկ արդ դու, որ ուսուցանում ես ընկերոջդ, ինքդ քեզ չես ուսուցանում. քարոզում ես չգողանալ՝ գողանում ես, ասում ես՝ չշնանալ, շնանում ես (Չոռմ. 2:21-22):

22. Մարմնի գործերը հայտնի են. այսինքն՝ շնություն,

պոռնկություն, պղծություն, վավաշոտություն ...

անառակություններ և սրանց նման ուրիշ բաներ: Այժմ ասում եմ ձեզ, ինչպէս որ առաջուց էլ ասում էի, թե նրանք, որ այսպիսի բաներ են գործում, Աստծո արքայությունը չեն ժառանգելու (Գաղատ. 5:19- 21):

23. Երբ գամ, գուցե դարձյալ իմ Աստվածն ինձ նկուն դարձնի ձեր առաջ, և սուգ անեն նախապես մեղանչած շատերի համար, որոնք չեն ապաշխարել իրենց գործած պղծության, պոռնկության և վավաշոտության համար (Բ Կորնթ. 12:21):

24. Ամուսնությունն ըստ ամենայնի հարգելի է, և ամուսնական անկողինը սուրբ: Եվ Աստված պիտի դատի շնացողներին և պոռնիկներին (Եբր. 13:4):



1. Մի՛ հագիր հագուստներ, որով կարող ես գովաբանվել ու մեծարվել, որոնք կարող են քեզ հպարտացնել ու փառավորել (Անտոն Անապատական):

2. Մարմնին տուր այն, ինչ պետք է, ոչ թե՛ ինչ որ ուզում է (Նեղոս Սինայեցի):

3. Այս կյանքում ով սիրում է զարդարել մարմինը և փոփոխել հագուստը, նա փառք է ակնկալում մարդկանցից: Իսկ ով անտարբեր է սրա հանդեպ և ուշադրություն է դարձնում միայն մարմնի անհրաժեշտ կարիքներին, նա փառք է ձեռք բերում երկնքում (Եփրեմ Ասորի):

4. Նայենք գերեզմանի մեջ և կտեսնենք մեր էության գաղտնիքները՝ իրար վրա շարված ոսկորների կույտ և մարմնից մերկացած գանգ: Նայելով նրանց՝ կտեսնենք ինքներս մեզ: Ու՞ր է ծաղկող գեղեցկությունը, ու՞ր է անուշ բուրմունքը: Այս բաների մասին մտածելով, հրաժարվենք մարմնավոր ցանկություններից, որպեսզի հարության ժամանակ անոթափար չլինենք (Եփրեմ Ասորի):

5. Ով զարդարում է իր գգեստները և լեցնում իր որովայնը, նա շատ մեծ հարձակումների թիրախ կդառնա, իսկ սթափը սարսափելի է թշնամու համար (Եփրեմ Ասորի):

6. Հագնելով ու հանվելով՝ աչքերիդ ազատություն մի տուր (Աբբա Եսայի):

7. Երբ բաժանվես մարմնիցդ, այն ժամանակ կափսոսաս, որ այնքան հոգս ես արել այնպիսի բաների համար, որոնք քեզ ոչ մի օգուտ չեն տվել (Աբբա Եսայի):

8. Հագուստներով գեղեցկացողը կորցնում է նաև խոնարհ նայվածքի ամոթխածությունը (Եվլաբ Պոնտացի):

9. Ով տրվում է հագուստի շքեղությանը և լեցնում է իր որովայնը,

նա ձեռք կբերի աղտեղի մտածումներ և չի հանգչի սուրբերի օբևանում (Եվագր Պոնտացի):

10. Շքեղ հագուստը վիրավորում է Աստծուն, մարմնի զարդերը դիվային հայտնագործություններ են (Կիպրիանոս Կարթագենացի):

11. Երբ մարմնի գեղեցկությունը հրապուրում է սիրտդ, ապա մտածիր, թե ինչպիսի գարշահոտություն պիտի տարածի այն, և կհանդարտվես (Երանելի Յերոնիմոս):

12. Մարմնի համար հոգ տար, բայց ոչ այնքան, որ թվա, թե քո հոգին է (Աբբա Փաղաքիա):

13. Մի հպարտացիր մարմնիդ գեղեցկությամբ և ուժով, թեթև հիվանդությունը խորտակում է այդ բոլորը և թոշնեցնում (Թովմաս Գեմբացի):

14. Մարմինը ցանկությունների ու կրքերի աղբյուր է, եթե ուզում եք խուսափել կրքերից, պետք է ձեր մարմինը սանձեք (Թովմաս Ավվինացի):

15. Ջարդարի ինքդ քեզ փառավոր և գունագեղ հանդերձներով, բայց մի օր սպիտակ կտավով փաթաթված՝ փոսի մեջ պիտի դրվես (Տեր Գաբրիել քահանա):

16. Հանդերձն այն է, ինչ ծածկում է մարմինը, պահում ցրտից, իսկ զանազան կերպերով զարդարվելը և չափից ավել ուտելն ու ըմպելը չարից է և հեթանոսներինը, ոչ թե մերը (Գրիգոր Տաթևացի):

17. Քո հագուստը թող չլինի պճնվելու, այլ միայն մարմնի պետքերի համար, ինչպես այն շորը, որ մեռելին են ծածկում: Իսկ եթե սիրես ավելորդն ու անպատշաճը, կգրկվես երկնային զարդից (Եզնիկ Կողբացի):

18. Պճնասեր կրոնավորը դևերի հյուրընկալ է (Եզնիկ Կողբացի):

19. Այրեր և կանայք, մենք ոչ փափուկ մարմինների կարիքն ունենք և ոչ էլ զարդարված հագուստների, այլ ներքին զարդերի և փափկության: Չի կարելի միաժամանակ և՛ հոգին և՛ մարմինը փափկացնել և զարդարել, ինչպես որ չի կարելի Աստծուն և ինչքերին ծառայել (Բարսեղ Մաշկևորցի):

20. Տգեղությունը վնաս չի, այլ գեղեցկությունից է, որ ծնվում է վիշտն ու վնասը (Բարսեղ Մաշկևորցի):

21. Այն կինը, որ թեկուզև զարդեր չի կրում, պճնասեր չէ, բայց ինքն իրեն չի զարդարում բարի գործերով, այդպիսինը պիտի պատժվի (Բարսեղ Մաշկևորցի):

22. Որքան այրեր և կանայք կան, որոնք գեղեցիկ հագնվելով իսկապես մերկ են մնում առաքինության զգեստներից: Սակայն հիմա որքան էլ ասենք, այդ մերկությունը հայտնի չի լինի, բայց երևան կգա այնտեղ, ուր առաքինություններից մերկ չարության հագուստով, բոլորն էլ կերևան: Ուր աղքատները փառքով կզարդարվեն, իսկ զարդարվածներն ու փափկակենցաղները մերկ և խայտառակված գեհեճը կնետվեն (Բարսեղ Մաշկևորցի):

23. Պատվիրում են նաև ձեզ՝ կանայք, որ պարկեշտ և բարեձև լինեք ամեն ինչում, ինչպես վայել է քրիստոնյաներին: Ոսկուց ու արծաթից ավելի անոթխածությամբ և պատկառանքով ձեր անձերը զարդարեք: Եվ թող ոչ ոք օտար ներկերով իր երեսը չայլագունի (Ներսես Շնորհալի):

24. Խոնարհություն է անշուք հանդերձը, որ մարդ թանկարժեքն ու փառավորը չի հագնում, որովհետև մարդիկ փառքը հանդերձից են

որում. այս մասին գրված է. «Մի ցոփացեք մեղկ և ամբողջովին պճնված զգեստներով, որոնց գեղեցկությունն ապաշնորհ է» (Անանիա Նարեկացի):

25. Քանզի, ո՛վ թվառական, եկար՝ հեծծելու և պաղատելու առ Աստված, արտասուքներ հեղելու և աղերսագին ողբալու, հայցելու, հառաչելու և թողություն խնդրելու. և արդ, ա՞յդ է քո խնդրվածքների կերպարանքը՝ ի ցույց նայողների պաճուճվելը, օծանվելը և լվացվելը: Ա՞յդ է մեղքերիդ թողություն խնդրելու և հայցելու կերպարանքը՝ արատավորվելը, շողջորթելը և պիղծ ցանկությամբ ակնարկելը, ա՞յդ է Տիրոջը քո չարիքների վրա հեշտացնելու կերպարանքը՝ կրքոտ ցանկությամբ բոզահոմանիների գեղեցկությունը և հասակդ զննելը: Ինքդ քեզ սատանայացնում ես և աղաչում ես սատանայից ազատվել, կամովին դիվահարվում ես և խնդրում ես փրկվել դևերից: Ինչպե՞ս կարող ես Աստծո առջև հեծծել այդպիսի կերպարանքով, կամ ինչպե՞ս հառաչել այդպիսի խորհուրդներով: Նաև համարձակվեցիր նույնիսկ մտնել Աստծո առաջ՝ զազրելի մտքով և սատանայական կերպարանքով, Աստծո եկեղեցին պռոնկանոց դարձնել, և չես սուսկում ու դողում սուրբերի Սրբից և Աստծո ակեղ դեմքից: Չգիտե՞ս, որ Սրտագետը քննում է քո խորհուրդները և գիտի ամեն ինչ. չե՞ս լսել, որ Աստված դատելու է մտածմունքի համար և հաշիվ է պահանջելու աչքերի արատավոր նայվածքների համար:

Եվ արդ, սթափվիր և դե՛ն զցիր քեզանից մտքի պաճուճանքների կեղծավոր խաբեությունը, ապա՝ մտիր Աստծո առաջ և լսիր (Հովհան Մանդակունի):

26. Մի՛ նայիր հաճոյաչափ երեսին, որ զրգռում է սատանայական ցանկություն, ավելի զգույշ եղիր նրա խայթող պոչից (Հովհան Ոսկեբերան):

27. Եթե մեղդ մեղավոր ցանկության կրակ կա, դիր այն դժոխքի մեջ եղող կրակի առջև, և քո միջինը կհանգի (Հովհան Ոսկեբերան):

28. Ինչքան էլ մեծ լինի ցանկության զորությունը, եթե քեզ ցանկապատես Աստծո վախով՝ նրա մոլեգնությանը կհաղթես (Հովհան Ոսկեբերան):

29. Գնչիր քո մեջ տռփանքը, քանի դեռ նա քեզ չի տապալել, քանի որ այս կիրքը իրեն հնազանդվողներին իջեցնում է մինչև դժոխքի խորքերը (Եփրեմ Ասորի):

30. Ինչպես որ խոզի համար հաճելի է թավալվել ցեխի մեջ, այնպես էլ դևերն իրենց համար հաճույք են գտնում շնության և անմաքրության մեջ (Եփրեմ Ասորի):

31. Մաքրության մեջ բնակվում է մեծ լույս և ուրախություն, նաև խաղաղություն ու համբերություն, իսկ վավաշտության մեջ տխրություն, վիատություն, անհագ քուն և թանձր խավար (Եփրեմ Ասորի):

32. Եթե աշխատանքի ժամանակ կանհանգստացնի քեզ շնության ոգին, մի՛ ծուլացիր ձեռքերդ պարզել աղոթքի համար, հավատքով արված աղոթքը կվանի նրան (Եփրեմ Ասորի):

33. Սարսափելի դավաճան է մեր թափառող հայացքը: Սրբերից



մեկն ասել է. «Ցանկությունը նման է շանը, եթե շոյես

նրան՝ չի հեռանա քեզանից, իսկ եթե քշես՝ կփախչի» (Եփրեմ Ասորի):

34. Գրգռի բռնկման ժամանակ չդիպչես մարմնիդ, որպեսզի ավելի զորեղ կիրք չբորբոքես (Եփրեմ Ասորի):

35. Փախչում ես մարմինը վնասող օձից, առավել փախիր այն կնոջից, որը հոգիդ է տակնուվրա անում (Եփրեմ Ասորի):

36. Եթե քեզ անհամբարտացնում է շնության ոգին, սաստիր նրան՝ ասելով. «Տերը թող քեզ սաստի, գարշահոտությամբ լեցուն, աղտեղության դև» (Եփրեմ Ասորի):

37. Թույլ մի տուր աչքերիդ այս ու այն կողմ շրջել, և մի նայիր ուրիշի գեղեցկությանը, որպեսզի աչքերիդ օգնությամբ չտապալի քեզ քո հակառակորդը (Եփրեմ Ասորի):

38. Դիվային երաժշտությունները շարժման մեջ են գցում մեր կրքերը և մեր ամձը գցում են աղտեղի երազանքների մեջ: Իսկ սաղմոսները և հոգևոր երգերը միշտ միտքը սևեռում են առաքինի գործերի վրա, նաև սառեցնում են բարկության եռքը և հանգցնում են կիրքը (Եվագր Պոնտացի):

39. Կանացի հայացքը թունավոր նետ է, վիրավորում է հոգին և լցնում այն թույնով, և ինչքան երկար է մնում այդ վերքը, այնքան ավելի է խորացնում վնասվածքը: Ով աշխատում է զերծ մնալ այս նետերից, նա չի մասնակցում մարդաշատ հավաքներին, ցրված չի թափառում տոնակատարությունների ժամանակ, քանի որ ավելի լավ է հանգիստ մնալ տանը և հարատևել աղոթքի մեջ, քան թե տեղիք տալ տոնակատարություններին՝ դառնալով թշնամու համար ոյուրին որս (Նեղոս Սինայեցի):

40. Ավելի լավ է մոտենաս այրվող խարույկին, քան թե ջահել կնոջը, երբ դուք երկուսով եք, մանավանդ, եթե դուք երկուսով էլ դեռ ջահել եք: Ցավ զգալով կրակից՝ իսկույն ետ կթռչես, իսկ տրվելով կանացի զրույցին, իսկույն չես հեռանա (Նեղոս Սինայեցի):

41. Եթե խնայես հակառակորդին, ձեռք կբերես թշնամի: Եվ եթե խնայես այս կրքին, ապա նա կըմբոստանա քո դեմ (Նեղոս Սինայեցի):

42. Ինչպես որ ծղոտի վրա երկար ժամանակ մնացած կայծը բոց է առաջացնում, այդպես էլ երկարատև հիշողությունը կանանց մասին բորբոքում է վավաշտություն (Նեղոս Սինայեցի):

43. Պատժիր մտածունքը կերակրի սակավությամբ, որպեսզի ծանրանան ոչ թե շնության, այլ սովի վրա (Նեղոս Սինայեցի):

44. Ամենից վտանգավորն այն է, երբ սիրտը կեղտոտվում է վավաշտության կրքով, քանի որ շատ ջանքեր են պետք այս ախտը արմատախիլ անելու համար (Նեղոս Սինայեցի):

45. Աղոթական հսկմանը խառնիր արցունքներ, որպեսզի օգնություն ստանաս պայքարում (Նեղոս Սինայեցի):

46. Երանելի է նա, ով ոտնահարում է հաճույքները: Այդպիսիներից սարսափում են դևերը (Նեղոս Սինայեցի):

47. Զուգված կնոջ տեսքը խորտակում է մրրկածուփ ծովից ավելի



արագ: Մրրկածուփ ծովից դեռ կարելի է մի կերպ

լողալով ափ հասնել: Սակայն կանացի տեսքը հմայում է և ստիպում անփույթ լինել (Նեղոս Սինայեցի):

48. Հարց. - Հայր, եթե երազախաբության մեջ ընկնեն, օգտակա՞ր է արդյոք եղբայրներից որևէ մեկին խոստովանել այդ մասին, և նրա առաջ երկրպագելով, աղոթք խնդրել:

Պատ. - Երազախաբության մասին ճիշտ է պատմել նրան, ով կարող է առանց գայթակղվելու լսել այդ մասին, և երկրպագելով, հարկ է աղոթք խնդրել:

Քանզի Ս. Գիրքն ասում է. «Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք» (Հակ. 5:16): (Բարսիլիսկոս Մեծ):

49. Հարց. - Երբ պատահի, որ երազային փորձության պատճառով ընկնեն պղծության մեջ, իսկ առավոտյան պիտի մոտենայի Սուրբ Հաղորդությանը, ապա ինչպե՞ս պետք է վարվեն այդ դեպքում:

Պատ. -Մոտենանք որպես խոցվածներ, այլ ոչ թե քամահրանքով: Որպես թե բժշկի կարիք ունեցողներ, և Նա, որ բժշկեց արնահոսությամբ տառապողին, կբժշկի նաև մեզ: Շատ սիրենք, որպեսզի մեզ էլ շատ ներվի: Իսկ երբ մոտենաս Հաղորդությանը, ասա. «Թող այս Սրբությունը, ով Տեր, չդառնա ինձ դատ կամ դատապարտություն, այլ հոգուս ու մարմնիս սրբացուն»: Եվ այն ժամ մոտեցիր երկյուղով, և մեր Տերը Իր մարդասիրությամբ ողորմությունը կծագեցնի մեր վրա: Ամեն (Բարսիլիսկոս Մեծ):

50. Գիշերային պատերազմը երկակի է, մեկը առաջանում է վավաշտությունից, իսկ մյուսը՝ դիվային փորձությունից: Երբ այսպիսի պատերազմից ընկնում ես նման փորձության մեջ, արա յոթ անգամ յոթակի երկրպագություն մինչև գետին, այսինքն՝ քառասունինը անգամ, ամեն անգամ ասելով. «Տեր, Քո Սուրբ անվան համար, ներիր ինձ»: Իսկ եթե փորձությունը քեզ կպատահի հիվանդության ժամանակ կամ կիրակի օրը, երբ պետք չէ մինչև գետին երկրպագություն անել, ապա քառասունինը երկրպագությունների փոխարեն յոթանասուն անգամ ասա միայն այդ աղոթքը: Փորձությունների տարբերությունը կայանում է հետևյալում. դիվայինը լինում է գորոզամտությունից, իսկ վավաշտությունից եղած փորձությունը՝ որկրամոլությունից (Բարսիլիսկոս Մեծ):

51. Երբ սատանան ուզում է միացնել երկու անձանց՝ անպատկառ սիրո միությանը, այն ժամ փորձում է այս և այն կողմերը և նոր սկսում է վառել կրքի հուրը (Հովհաննես Սանդուղք):

52. Ամբողջ զորությամբ փախչենք, որպեսզի չտեսնենք և չլսենք այն պտղի մասին, որի համար մենք խոսք ենք տվել երբեք չճաշակել: Զարմանում եմ, որ մենք մեզ համարում ենք Դավիթ մարգարեից ավելի զորեղ, չէ՞ որ դա անհնարին է (Հովհաննես Սանդուղք):

53. Ով ուզում է շատակերությամբ և հագնալով հաղթել շնության դևին, նա նման է յուղով կրակ հանգցնողին (Հովհաննես Սանդուղք):

54. Ամենօրինակ Տերը մեծ հոգածություն է հանդես բերում կանացի սեռի անպատկառությունը անոթխածությամբ կասեցնելով, ասես մի աներևույթ սանձով: Քանի որ, եթե կանայք իրենք իրենց ոտքով վազեին տղա-

մարդկանց մոտ, ապա ոչ մի մարմին չէր փրկվի (Յովհաննես Սանդուղբ):

55. Բոլորը, հատկապես ընկածները, պետք է զգուշանան, որպեսզի իրենց սրտերի մեջ տեղ չտան անաստված Որոզհնեսի թուևոտ ուսմունքին, քանի որ նրա պիղծ ուսմունքը Աստվածային մարդասիրության մասին, շատ հաճելի է վավաշոտ մարդկանց (Յովհաննես Սանդուղբ):

56. Ճշմարտապես երանելի է նա, ով ձեռք է բերել կատարյալ անզգայության վիճակ ամեն մարմնականի, արտաքինի և գեղեցկության հանդեպ (Յովհաննես Սանդուղբ):

57. Մի մտածիր մերժումներով և ապացույցներով տապալել շնության դևին, քանի որ նա ունի բազում համոզիչ արդարացումներ, ինչպես մեր բնությունը, որի միջոցով և պատերազմում է մեր դեմ (Յովհաննես Սանդուղբ):

58. Ոմանք հաստատում են, որ շնության դեմ եղող այս պատերազմի ժամանակ քնի մեջ սերմնածորումը լինում է միայն կերակրից: Բայց ես տեսել եմ, որ մեկը լինելով ծանր հիվանդության մեջ, իսկ մյուսները՝ խիստ պահքի մեջ, հաճախ պղծվել են սերմնածորումով: Մի անգամ ես հարցրեցի այս մասին մի հմուտ և խոհական ճգնավորի, և այս երանելին տվեց ինձ շատ պարզ և հասկանալի պատասխան. «Լինում է, -ասաց նա, -սերմնածորում քնի մեջ՝ կերակրի գերհագեցումից և ավելորդ հանգստից, երբեմն հպարտությունից, երբ մենք երկար ժամանակ զերծ ենք լինում սերմնածորումից, սրանով մեծամտանում ենք, երբեմն այն բանից է լինում, երբ դատում ենք մերձավորին: Վերջին երկու պատճառից սերմնածորում կարող է լինել նաև հիվանդների մոտ, նաև կարող է լինել բոլոր երեքից էլ»: Եթե մեկը զգում է, որ մաքուր է այս բոլոր պատճառներից, այդ դեպքում այդ երանելին այսպիսի անկրթության պատճառով հարձակում է կրում դևերի նախանձության պատճառով, երբ Աստված թույլ է տալիս այն բանի համար, որպեսզի սա ձեռք բերի մեծագույն խոնարհություն (Յովհաննես Սանդուղբ):

59. Կերակրի հագեցման ժամանակ որկրամոլության այս անմաքուր ոգին հեռանում է և մեզ վրա ուղարկելով շնության ոգուն, և նրան է հաղորդում, թե ինչ վիճակում ենք մենք գտնվում այդ պահին և ասում է. «Գնա, խռովեցրու սրան, նրա որկորը հագեցած է, և քեզ արդեն քիչ բան է մնում»:

Եվ այս եկողը ժպտում է և քնով կապկպելով մեր ձեռքերը և ոտքերը, մեզ հետ անում է այն, ինչ ուզում է, պղծելով մեր անձը գարշելի երազներով, իսկ մարմինը՝ սերմնածորումով (երազախաբությանը) (Յովհաննես Սանդուղբ):

60. Երբեմն չափավոր հոգևոր երգեցողությունը հաջողությամբ հանգստացնում է ոյուրագրգռությունը, իսկ երբեմն էլ, չափից շատ և անժամանակ երգեցողությունը առաջ է բերում վավաշոտություն: Եվ այսպես, օգտվենք երգեցողությունից իմաստությամբ և ճիշտ ժամանակ ընտրելով (Յովհ. Սանդուղբ):

61. Շատերը, որոնք փորձվում են վավաշոտությամբ, մարմնով չմերձենալով, մտքով են շնանում: Պահում են մարմնի մաքրությունը, սակայն ապականում են հոգին: Սիրելիներս, պետք է հրաժարվել վավաշոտ մտքերով և երազանքներով տարվելուց, նրանցից հաճույք ստանալուց, առհասարակ, նրանց վրա ուշադրություն դարձնելուց, ըստ Սուրբ Գրքի. «Ամենայն

զգուշությամբ պահիր և պահպանիր քո սիրտը, որովհետև նրանից է բխում կյանքի աղբյուրը» (Առակաց 4:23) (Աբբա Յերոնտիոս):

62. Մի՛ շնացիր: Այս պատվիրանի դեմ գործած մեղքերը շատ ահավոր են: Այսպիսի մեղավոր հիվանդությունը մարդուն ախտահարում է դեռ վաղ մանկությունից և չի թողնում մինչև իսկ մահվան օրը: Ինչու՞ է սատանան այսպիսի մեղքով պատերազմ մղում մարդու դեմ: Որովհետև նա մեր փրկության թշնամին, մեզանից լավ գիտի, որ սուտ չեն առաքյալի խոսքերը, թե. «Ոչ պոռնիկները, ոչ շնացողները, ոչ իզագյալները, ոչ արվամուլները Աստծո Թագավորությունը չեն ժառանգելու» (Ա Կոր. 6:9, 10) («խոստովանության կերպ» գրքից):

63. Ինչ մեծ վիրավորանք ենք հասցնում Տիրոջը, եթե մեր մարմինը, որ գնված է սրբության համար, ապականում ենք շնության պիղծ կրքին տեղիք տալով: «Դուք Աստծո տաճար եք, և Աստծո Յոզին ապրում է ձեր մեջ, -ասում է Պողոս առաքյալը,- եթե մեկն Աստծո Տաճարն ապականի, Աստված էլ նրան պիտի ապականության մատնի» («խոստովանության կերպ» գրքից):

64. Եթե մեկն ապրում է ամուսնական միությանը, որ սրբագործված չէ Եկեղեցու խորհրդով, ապաշխարե՞ք դառն արտասուքներով, քանի որ դուք ձեր կյանքը անցկացնում եք շնության մեջ: Խնդրեցե՞ք Տիրոջը, որպեսզի սրբագործի ձեր ամուսնական կապը Եկեղեցու խորհրդով, ինչ տարիքում էլ որ դուք լինեք («խոստովանության կերպ» գրքից):

65. Դուք, որ ամուսնական կապի մեջ եք, արդյոք չե՞ք դավաճանել ձեր սրտի մեջ՝ անմաքուր հայացք նետելով հակառակ սեռի ներկայացուցիչներին, էլ չենք խոսում հայտնապես շնության մասին: Ամուսնության մեջ քրիստոնյան պետք է պահպանի ժուժկալություն և խոհեմություն: Արդյո՞ք ժուժկալում եք կիրակի և տոն օրերին: («խոստովանության կերպ» գրքից):

66. Տեր, մենք մեղք ենք գործում Քո «Մի՛ շնացեք» պատվիրանի դեմ: Չափից դուրս ազատ վարվելով հակառակ սեռի ներկայացուցիչների հետ, աչքներս կրքոտությամբ հառելով գեղեցիկ արտաքինին, սիրային երաժշտությամբ, անամոթ շարժումով, սեփեթանքով, չափից դուրս կապվածությամբ, չարաշահելով ուտելիքը և խմելիքը, կարդալով գրքեր և նայելով նկարներ, որոնք բորբոքում են մեր մեջ մեղավոր մտածումներ: Դիտում ենք գայթակղող ֆիլմեր և պիեսներ, նախօրոք իմանալով, որ նրանցում լինելու են շնության մեղքի թույնով հագեցած տեսարաններ, զգեստների ավելորդություններով ուրիշներին դուր գալու և գայթակղեցնելու համար: Մեր վրա եղող Աստծո պատկերի ոչ բնական աղավաղմամբ, այսինքն՝ օգտագործելով ամեն տեսակի դիմաներկեր («խոստովանության կերպ» գրքից):

67. Մեղքերն ի սրտե խոստովանելը քանդում է թշնամու բոլոր մտադրությունները, որոնց մեջ ընկղմված է խեղճ մեղավորը: Եվ եթե մեկն ունի դեռ յոթերորդ պատվիրանի դեմ գործած չխոստովանած մեղքեր, թող լցվի տղամարդկությանը և պատմի այն հոգևորականի, Խաչի և Ավետարանի առջև: Շտապե՛ք, որովհետև Տերն ասաց. «Ինչ բանում որ գտա, նրանում էլ պիտի դատեմ» («խոստովանության կերպ» գրքից):

68. Երբ ցանկության կիրքը սկսում է բորբոքվել քո

մեջ, ապա անմիջապես աղոթքով նրա առաջը առ, կամ մի որևէ այլ գործով զբաղվիր: Ինչպես որ կայծը կարելի է հեշտությամբ և արագ հանգցնել, իսկ եթե հապաղես, ապա ցանկության կիրքը կայծից կվերածվի բորբոքված կրակի, և նրա առաջը էլ առնել չես կարող, «Ահա մի փոքր կրակը որքան բան բոցի կտա»: (Հակ. 3:5) (Հոգեշահ գրքերից):

69. Այնտեղ՝ հրավառ ձյուրի և զարշահոտ ծծմբի մեջ պիտի թաղվեն հայիոյողները և վավաշոտները (Թովմաս Գեմբացի):

70. Ցանկության կրակները կամքիդ համեմատ վառիր ու բորբոքիր, բայց մահվան ձեռքը երբ վրադ դրվի, պիտի մարեն նրանք և դժոխքի հավիտենական կրակները նրանց պիտի հաջորդեն (Տեր Գաբրիել քահանա):

71. Մեր ապականյալ բնության մեջ չկա ուրիշ այլ կիրք, որ այնքան բռնությամբ տիրած լինի մեր սրտին, որքան ցանկության կիրքը, որին անկարգ բաղձանքներից առաջ է գալիս ուրիշների պատիվը բռնաբարելու և արատավորելու մեղքը՝ այսինքն շնությունը (Տեր Գաբրիել քահանա):

72. Աստված որ իր բնության մեջ սուրբ է ու անարատ, ատում է և զգվում այս գարշելի մեղքից, որովհետև մյուս մոլությունները մարմնից դուրս են, միայն շնությունն է, որ մարմնի մեջ է կատարվում (Տեր Գաբրիել քահանա):

73. Ահա ցանկության անվայել փափագներդ հագեցնելու համար առանձնություն ես փնտրում, որպեսզի ծածկվես մարդկանց տեսադաշտից, սակայն Աստծո աչքերը քեզ առանձնության մեջ էլ են տեսնում, որտեղ էլ որ լինես՝ Նա ներկա է: Ինչո՞ւ ուրեմն չես երկյուղում Աստծո ներկայությունից:

Հիշիր՝ ու ասա ինքդ քեզ. ես մարդկանց աչքերից ծածկվելու համար առանձին տեղ քաշվեցի, բայց Աստծո անենատես աչքերը ինձ տեսան, ուրեմն պետք է մեզ Աստծուց վախենալ ու երկյուղել: Այս մտածումները կրակի վրա թափված ջրի պես պիտի մարեն ներսումդ բորբոքված մեղքի կրակները, բայց այս բոլորից առավել չար կրքերիդ հաղթելու համար պետք է նաև խնդրես Աստծո շնորհի օգնականությունը, ապա թե ոչ՝ ամեն դարման անօգուտ կլինի. «Եթե Տերը ինձ ժուժկալություն չտա, հասկացա, որ ուրիշ ճամփով չեմ կարող ժուժկալ լինել», - ասաց Սողոմոն Իմաստունը (Տեր Գաբրիել քահանա):

74. Ուրեմն այս յոթներորդ պատվիրանի դեմ չմեղանչելու և սպառնացող պատիժներից զերծ մնալու համար ոչ միայն շնության ու ցանկասիրության մեղքերից պետք է պահել մեր անձերը, այլ նաև զգուշանալ բոլոր չար խորհուրդներից, աչքի հրացայտ նայվածքներից, պղծալից պատմություններ ունկնդրելուց, գայթակղեցուցիչ վեպերից, ցանկահարույց պատկերներ դիտելուց: Երբ փորձության մեջ ես՝ հիշիր մահդ, այսինքն՝ երևակայիր, որ մեռար, անշունչ ու անզգա դարձար, սիրտդ դադարեց բաբախելուց ու հոգիդ բարձրանում է Աստծո ատյանի առջև և դատում ու դատապարտում է քեզ հավիտենական կրակի, այդ ժամ ինքդ քո մեջ մտածիր, թե ինչպես ցանկության կրակները շուտով անցան ու մարեցին, բայց այս կրակները հավիտյան մարել չունեն և սիրտդ կրծող որդերը հավիտյան չեն մեռնելու (Տեր Գաբրիել քահանա):

75. Մոլագար սիրով բորբոքվածները լինում են կույր և խուլ,

որովհետև ոչ զգում են, ոչ տեսնում ուրիշներին, այլ միայն

նրան, ում սաստիկ սիրահարված են: Հրաժարվում են ամեն բարիքից, որպեսզի միայն չիրաժարվեն նրանից, ոտնակապ գերի են, բայց իրենց համարում են ազատ, առավել հոժար են մեռնել, քան ազատվել այդ մոլագարությունից (Պողոս Պատրիարք):

76. Նավաբեկությունը և մահը սակավ աղետալի են, քան մարմնական հեշտասիրությունը: Պետք է ավելի վախենալ վավաշոտությունից, քան ծովի կարծր ժայռերից: Երիտասարդները թող զգույշ լինեն հեշտանքի քաղցրությունից, ինչպես գեղեցիկ ծաղիկների ներքո սողացող օձերից, որոնց մահաբեր խայթոցները չեն բժշկվում: Նմանօրինակ սերը գարշամոլություն է, նենգավոր և դավաճան, որը իր դառնությունը ծածկում է քաղցրությամբ քողի տակ (Պողոս Պատրիարք):

77. Այսպիսիներից (սողունական մեղք գործողներից), իբրև մարդացած դևերից, պետք է խույս տալ և փախչել: Այսպիսիների հետ խոսքով անգամ պետք չէ հաղորդակցվել, եթե մույնիսկ բարեկամական կապ լինի: Թերևս այնպիսի ժանտագործների համար զրեց աստվածային Հովհաննեսը. «Նրանց տուն չընդունել և նրանց ողջույն չտալ». ապա ավելի խիստ է խոսում և ասում. «Ով որ նրան ողջույն տա, հաղորդ կլինի նրա չար գործերին» (Բ. Հովհ. 10:11) (Սարգիս Շնորհալի):

78. Աստվածային օրենքը սովորեցնում է հետևյալը. Պետք չէ մերձենալ կնոջը, երբ նա դաշտանի մեջ է. այսինքն՝ երբ կինը կանանց ամսարյունի մեջ է, ամուսինը չպետք մերձենա նրան:

Ի՞նչն է պատճառը:

Ինչպես որ մշակը ճահճուտ վայրերում չի ցանում սերմը, որպեսզի ողողմամբ չփչանա, մույպես երբ կինը նկատի ունենանք որպես դաշտ և այրը՝ մշակ, եթե այդ ժամանակ հարաբերության մեջ մտնի, անպտուղ կմնա. բեղմնավորվելու պարագային էլ զանազան հիվանդությունների դուռ է բացվում մանուկի համար, այսպես՝ բորոտություն, քոսոտություն, դիվահարություն և այլ գարշելի ու անբժշկելի ցավեր: Հետևաբար, նա որ այս շրջանի մեջ մոլեգնաբար հարաբերվի, այս չարիքներին պարտական կլինի, մանուկներին սպանող է նա և արժանի մահվան: Եթե կինը ծածկի ամուսնուց իրողությունը, ինքը պարտական կլինի (Հովհաննես Երզնկացի):

79. Նույնպես, քրիստոնյաները պետք է գիտենան, որ երբ այր ու կին Աստծո հրամանով ու օրենքով և Սուրբ պսակով միացած են իրար, հրաման չունեն բաժանվելու, ինչպես Քրիստոս ևս հրամայեց. «Այն, որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատ. 19:5): Առաջնորդները թող սովորություն չառնեն և չթույլատրեն բաժանումը և Աստծո հրամաններին դեմ դուրս չգան (Հովհաննես Երզնկացի):

80. Շնացողները թող զրկվեն հաղորդությունից և հանդերձյալ կյանքի մեջ Արքայությունից, ինչպես Պողոսն էլ գրում է. «Շնացողները Աստծո Արքայությունը չեն ժառանգի» (Ա. Կորնթ. 6:9) (Հովհաննես Երզնկացի):

81. Երբ մարդ գեղեցիկ դեմք է տեսնում և կամ պոռնկական երգեր լսում, այնժամ ցանկությունը բորբոքվում է և ստիպում մեղանչել: Ուստի, դու արգելիր տեսանելիքդ ու լսելիքդ, որպեսզի խորհուրդների պատերազմ չբարձրանա քո դեմ: Արդ, ինչպես որ արծիվը թռչում է և թակարդի մեջ

կերակուր տեսնում, զորությամբ իջնում է կերակուրը ճանկելու, և մագիլի ծայրը մնում է թակարդում, և այդ փոքրիկ մասի պատճառով նրա ողջ զորությունը թուլանում է, այնպես էլ պատահում է մարդու հետ, որ բռնվում է մի չնչին նայվածքով (Անանիա Նարեկացի):

82. Ցանկությունը կանցնի, բայց նրա որդը չի մեռնի (Մաշտոց):

83. Չորս պատճառով է լինում պոռնկությունը. անժուժկալ ուտելուց և խմելուց, քնի հագեցումից, պարսպ թրև գալուց և դատարկաբանելուց, երգելուց և ծիծաղից, նաև՝ զարդարուն հանդերձներից (Յովհան Մանդակունի):

84. Աղոթքի տեղում պետք չէ ոչ միմյանց նայել և ոչ կնոջ, որպեսզի աղոթքի փրկությանը հակառակ արատ չներմուծվի մեր մեջ (Գրիգոր Տաթևացի):

85. Որովայնից պտղի վիժեցման նպատակով դեղ ընդունելը, հավասարազոր է մարդասպանության, ինչպես որ թունավորելով մարդասպանություն գործելը (Բարսեղ Մեծ):

86. Ինչի համար ցանց էլ այնտեղ, որտեղ ինքը՝ հողը այնպիսին է, որ զորեղ է միայն պտուղը կործանելու համար, որտեղ բազում պատճառներ կան՝ ծննդաբերության դեմ: Որտեղ մինչ ծնվելը սպանություն է գործվում, դու ոչ միայն պոռնիկին պահում ես անառակության մեջ, այլև դարձնում ես մարդասպան:

Դա չի՞ մշանակում, որ դու հայիություն ես գործում Աստծո շնորհի դեմ և հակառակվում Աստվածային պատվիրանին:

Վազում ես, որպես թե օրհնության ետևից, այն բանի համար, որ իրականում անեծք է: Այն, որ օրհնության պատճառ է դարձնում ես անեծքի վայր: Ծննդաբերության զանձարանը դարձնում ես սպանության զանձարան: Կնոջը, որ ստեղծված է որդեծնության համար, դարձնում ես մանկասպան (Յովհան ԷՕ ԵւԵԷ):

87. Մարդու կյանքն սկսվում է հենց հղիության ընթացքից, և այդ ժամ նրան տրվում է անմահ հոգի, այնուհետև գնում է զարգացումը և աճը՝ սկսելով ստանալ ավելի կատարյալ ձև: Հղիության արհեստական ընդհատումը, որ պահից էլ, որ արվի, համարվում է կյանքի ընդհատում: Որ պահին էլ, որ հղիությունը սկսվի, սա արդեն անթերի մարդ է, անմահ հոգի ունեցող: Եվ այն մայրերը, որոնք հանձն են առնում արբորտի միջոցով հեռացնել երեխային, կատարում են ահավոր մարդասպանություն: Եվ ես սարսափում եմ՝ պատկերացնելով ահավոր դատաստանի ժամանակ այն մայրերին, որոնց սպանված երեխաները պիտի ելնեն և նայելով այդ մայրերի աչքերին, պիտի ասեն. «Ինչի՞ համար դուք մեզ սպանեցիք» (Ավագերեց Անդրեաս):

88. Նրանք, ովքեր անգիտակցաբար են գործել նման հանցանք (վիժեցում) և իրենց հանցավոր են ճանաչում, այդպիսիները պարտավոր են զղջումով և ապաշխարությամբ մեղա գալ Աստծո առջև ու թողություն խնդրել Տիրոջից, քանզի չկա մեղք, որ չներվի մարդասեր Աստծո կողմից, եթե, իհարկե, զղջանք ու խոստովանենք, միայն թե այլևս չկրկնելու պայմանով (Հոգեշահ գրքերից):



Հայրերի վարքից

1. Մի օր Անտիոքի անապատի ճգնավոր սուրբ Պետրոսի մոտ, որը հայտնի էր իր բժշկության պարզեցումով, եկավ երանելի եպիսկոպոս Թեոդորիտի մայրը, որ տառապում էր աչքի սաստիկ ցավով: Այդ կինը դեռ երիտասարդ էր և սիրում էր զարդարել իրեն ոսկե օղերով, թանկագին վզնոցներով, շպարել իր դեմքը և հագնել հարուստ մետաքսե զգեստներ: Եվ նման տեսքով նա կանգնեց սուրբ Պետրոսի առաջ, թախանձելով բժշկություն: Սուրբը տեսնելով նրա պճնվելու հակումը, որոշեց նախ բժշկել նրան այդ հոգևոր ախտից: «Ասա ինձ,- դիմեց նա կնոջը,- եթե որևէ համարեղ գեղանկարիչ մի բարձրարվեստ դիմանկար ներկայացնե՞ր ցուցահանդեսում, իսկ որևէ տգետ, արվեստի կանոններին անտեղյակ մեկը ոչ միայն չհավաներ այդ արվեստի գործը, այլ անգամ հանդգներ ուղղել պատկերված դեմքի գեղեցկությունը, օրինակ, երկարացնելով հոնքերը և թարթիչները, սպիտակեցնելով մաշկը, գունավորելով այտերը, ի՞նչ ես կարծում, չէ՞ր զայրանա գեղանկարիչը, տեսնելով, թե ինչպես է սանձարձակ ձեռքը այլափոխում իր ստեղծագործությունը: Հասկացիր, ուրեմն, թե ինչ վիրավորանք ես հասցնում քո զարդարվելու և պճնվելու մոլուցքով բոլոր իրերի Արարչին, սքանչելի ստեղծագործողին, որը կերտել է մեր գեղեցկությունը, որովհետև մի՞թե դու կներկեիր տարբեր ներկերով քո դեմքը, եթե չհամարեիր, որ Աստծո ստեղծագործությունը թերի է և անհրապույր, իսկ այդպես մտածելով դու անխոհեմաբար մեղադրում ես Ամենակարող և Ամենատես Աստծուն՝ անկարողության և անմտության մեջ:

Մինչև սրտի խորքը չափազանց ազդված այս դասից, երանելի Թեոդորիտի մայրը ընկավ ճգնավորի ոտքերը, աղաչելով ներել իրեն թեթևամտության համար և չմերժել բարեխոսելու իր բժշկության համար: Սուրբը խաչի նշանով բժշկեց կնոջը («Հոգևոր ցանքս» գրքից):

2. Երեք կույսեր պատարագի ժամանակ մտան եկեղեցի աղոթելու, և պատարագի քահանան իր հոգևոր աչքերով տեսավ, թե ինչպես երկնքից մի իրեշտակ իջավ և կարմիր պսակ դրեց առաջին կույսի գլխին: Քիչ անց հայտնվեց երկրորդ իրեշտակը և մի լուսեղեն սպիտակ պսակ դրեց երկրորդի գլխին, հետո հայտնվեց մի պիղծ դև և մի դժոխային վերարկու առած՝ գցեց երրորդի գլխին և սկսեց ցատկոտել նրա շուրջ բոլորը: Պատարագի վերջում քահանան հարցրեց առաջինին. «Ինչի՞ մասին էիր մտածում աղոթքի պահին»: «Մտածում էի Փրկչի մասին, թե ինչպես մեր փրկության համար հանձն առավ փշե պսակը» իսկ քահանան ասաց. «Ես էլ տեսա, թե ինչպես կարմիր պսակը դրեցին քո գլխին»: Երկրորդը նույն հարցին պատասխանեց այսպես. «Ես էլ մտածում էի, թե ինչպես երկնքի Արարիչն իջավ, մարդացավ և որպես մանուկ հնազանդությամբ ապրում էր մեր փրկության համար»: Քահանան էլ ասաց. «Ես էլ տեսա, թե ինչպես սպիտակ պսակը

դրեցին քո գլխին»: Երրորդ կույսն այդ հարցին այսպես պատասխանեց. «Ես մտածում էի, թե երբ պիտի ավարտվի պատարագը, որպեսզի դուրս գամ և ինձ համար մի գեղեցիկ վերարկու գնեմ»: Իսկ քահանան ասաց. «Ես էլ տեսա, թե ինչպես դեերը դժոխային վերարկու էին զգել գլխիդ և քարշ էին տալիս իրենց ետևից» («Հայելի Վարուց»):

3. Մեծ Ներսեսը Հունաստան գնալիս Խաղ սարկավագին ձեռնադրել էր Բագրևանդի և Արշակունիքի եպիսկոպոս: Այս Խաղը Մեծ Ներսեսին էր նման ամեն բանով, մանավանդ աղքատների խնամակալության գործում, որի շտեմարաններն էլ հենց աղքատների նման առատացան սքանչելի կերպով, ինչպես Եղիայի և Եղիսեի ժամանակ, և թագավորին հանդիմանելու մեջ էլ նա խիստ էր և ահավոր և աներկյուղ: Սատանան ոչ մի կերպ նրան դիպչել չկարողացավ, բացի մի բանից. նա զգեստի կողմից պճնասեր էր և ձիասեր, որի պատճառով նրան պարսավում և ծաղրում էին: Այս պատճառով նա հրաժարվեց շքեղ զգեստներից և մազեղեն հագնելով՝ էշով էր ման գալիս մինչև իր մահվան օրը (Մովսես Խորենացի):

4. Վանականը գնալիս, ճանապարհին միանձնուհիների հանդիպեց: Տեսնելով նրանց, նա ճանապարհի մյուս կողմն անցավ: Այդ ժամանակ վանամայրը ասաց նրան. « Եթե դու կատարյալ վանական լինեիր, ապա տեսնելով մեզ, մեր մեջ կին չէիր տեսնի» (Հարանց Վարք):

5. Մի սուրբ և առաքինի այդ կանգնել էր աղոթքի և հանկարծ զարմացավ՝ տեսնելով բացված երկինքն իր առջև, որից և հույժ խնդաց և զվարճացավ իր հոգին: Մինչդեռ բազում մարդիկ մտնում էին այդ ճանապարհով երկինք, երկու ահագին և հույժ զարհուրելի վիշապ մեծ և ընդարձակ ցանց էին զցել բացված երկնքի այդ մասում և արգելք էին հանդիսանում նրանց, ովքեր ուզում էին մտնել: Այնժամ Աստծո հրեշտակը մոտեցավ նրան և բացատրեց տեսիլքի խորհուրդը. «Մի վիշապը բղջախոտությունն է, իսկ մյուսը՝ սնափառությունը, իսկ ցանցը, որ տեսար, անառակ և ունայն զարդերը կանանց, քանի որ նրանք հպարտանում են և բարձրամտությամբ և սնափառությամբ, նաև գիճությամբ, անչափ մեծ վնաս են հասցնում և աշխարհի համար են գործում և փակում են այն դուռը, որը Քրիստոս բացել է իր Արյամբ՝ մարդկության համար, և արգելք են դառնում երկնային բարության: Մարդկանց հոգիները չեն կարողանում մտնել երկնային ուրախության մեջ: Ես ասում եմ քեզ, ավելի շատ է թիվը դատապարտվածների, որոնք ընկել են այս խորամանկ կանանց խարդախության ցանցը և գայթակղվել նրանց զարդերից, քան թե նրանցը, ովքեր գայթակղվեցին երկնքից ընկած մյուս բոլոր դևերից» (Հայելի Վարուց):

6. Սբ. Եպիփանը առավ իր աշակերտներին՝ լեռնաբնակ անապատական մենակյաց մարդկանց, և ճանապարհ ընկավ Հունաց աշխարհը: Երբ գնում էին, նրանց մի կին հանդիպեց: Երբ այդ կնոջ մոտով անցան, Եպիփանը սկսեց փորձել աշակերտներին և ասաց. «Վա՛հ, ինչ գեղեցիկ ու վայելուչ կին է»: Նրա աշակերտներից մանկահասակ մեկն ասաց. «Քո գոված կնոջ մի աչքը կույր է»: Սուրբ Եպիփանը ասաց. «Իսկ դու ինչու՞ նրա վրա նայեցիր, որ երեսը տեսնես, քո մեջ, ուրեմն, չար խորհուրդներ կան»: Անմիջապես այդ մանուկին իրենից հեռացրեց (Փավստոս Բուզանդ):

7. Մի վանական, հարձակում կրելով շնության դևից, սաստեց նրան՝ ասելով. «Կորիք ինձանից դեպի խավարը, սատանա, մի՞թե չգիտես, որ թեկուզ և անարժան, համենայնդեպս անդամն եմ Քրիստոսի մարմնի»: Եվ նույն պահին, ինչպես որ փչելով հանգցնում են լամպը, այնպես էլ ակնթարթորեն դադարեց բորբոքված կիրքը: Վանականը ինքն էլ զարմացավ և փառավորեց Աստծուն (Եփրեմ Ասորի):

8. Մի վանամայր մենաստան ընդունեց որբ աղջկա: Աղջիկը երգում էր և կարդում դասում, իսկ երբ լրացավ նրա տասնութ տարին, անսպասելի մահացավ: Վանամայրը 40 օր պահեցողությամբ աղոթեց Աստծուն, որպեսզի Տերը ցույց տա իրեն, թե դրախտի որ դասում է գտնվում իր սանուհին: Եվ 40-րդ օրը նա տեսավ, որ հողը պատռվեց և կրակի լեզուները դուրս նետեցին աղջկան: «Աղջիկս, դու կրակների մեջ ես,-սարսափահար աղաղակեց վանամայրը,-ինչո՞ւ դու ընկար այդտեղ»:

«Մայր իմ, աղոթիր ինձ համար,-ասում է նա,-ես արժանի եմ այս պատժին: Քանի որ, երբ ես երգում էի դասում, տաճար էր մտնում մի երիտասարդ, և ես՝ մտքում նրա հետ շնանալով՝ վայելք էի ստանում, սակայն չէի խոստովանում ամոթից: Եվ ահա հիմա տանջվում եմ կրակների մեջ» («Հայելի Վարուց»):

9. Երբ եղբայրները հարցրեցին սբ. Կյուրեղ Ալեքսանդրացուն շնության խորհուրդների մասին, նա պատասխանեց այսպես. «Եթե քեզ մոտ չկան նման խորհուրդներ, ուրեմն, դու անհույս ես, քանի որ, եթե չունես այդպիսի խորհուրդներ, ուրեմն, ունես շնության գործեր, քանի որ ով չի պատերազմում մեղքի դեմ մտքում և չի դիմակայում նրան, նա այն գործում է մարմնավորապես, իսկ ով գործում է նման մեղք գործով, իր անզգայության պատճառով, ինքնըստինքյան, նա էլ չի խռովվում շնության խորհուրդներից» (Կյուրեղ Ալեքսանդրացի):



Աղոթք

Նայիր, Տէր, իմ անձի մերկությանը, որ կողոպտեց թշնամին: Եվ այժմ խայտառակ ու անոթալից եմ Քո առջև: Մարդասիրի՛ր և հանդերձ հագցրու ինձ, մտցրու և ուրախացրու Քո ընտրյալների պատվի մեջ:

Դու՛րս բեր ինձ, Տէր, խորաթոփչ ծովահեղձ ցանկական կենցաղի մեղքերի անվերջ արկածներից և շնորհի՛ր ինձ աչքերի լույս և մտքի տեսություն, կյանքի հանդարտություն, շնորհների մերձեցում, արդարության ճանապարհների շավիղներ:

Հագցրու՛ ինձ, Տէր, առաջին պատմուճանը, որ մերկացա իմ մեղքերով, ցույց տուր Քո անոխակալությունը իմ հանդեպ և Քո լուսափայլ ողորմությամբ զարդարիր իմ մերկությունը:

Մի՛ նայիր, Տէր իմ, եղկելի սրտիս և զագրասեր մարմնիս, քանզի հող եմ և մոխիր, սիրում եմ երկրավորները և չեմ փափագում նայել երկնայիններին, այլ միշտ հեշտանում եմ չարիքների մեջ ու չեմ տեսնում անվախճան փառքը: Եվ չեմ հիշում առաջին երանելի սուրբ հայրերին, այլ թավալվում եմ այս աշխարհի տիղմում և մաքրվելով չեմ բարձրանում՝ դասվելու առաքինիների կողքին: Եվ քանզի մոռանում եմ Դատաստանի երկյուղը և չեմ դողում ահեղ, սոսկալի, դառը տանջանքներից, որ պահված եմ մեղավորների համար, և ծուլանում եմ՝ անհոգ լինելով կյանքի փրկության հանդեպ. շնորհի՛ր ինձ, Տէր, անհանգիստ սուգ ու կոծ, և ապաշխարության արցունքներ:

Լսիր, Տէր, անառակիս աղաղակը, որ ամոթով կանգնած եմ Քո առջև. հայրենի գանձը վատնած կորչում եմ սովամահ: Անասուն խոզերին հավասար կերակրվեցի և նմանվեցի նրանց:

Մի՛ մերժիր ինձ, Տէր, Քո հայրենի գութից, համարձակվում եմ Քո Սիրո խնամքին ապավինել: Ծնողիցդ հեռացա և իմ որդիությունը ուրացա: Հայր, մեղա՛ երկնքի և Քո առաջ, արժանի չեմ Քո որդին կոչվելու, դարձրու ինձ որպես մեկը Քո վարձկաններից:

Մեղքերի խորքերն ընկղմվածիս հանիր և բեր դեպի Քո պատվիրանների լույսը, Քեզ մո՛տ կանչիր Քեզանից հեռացածիս և ների՛ր իմ անառակ գործերը, Քեզ ապավինածիս միսիթաիրի, Քո պատվիրանների կապից արձակվածիս բըռնիր Քո սիրո լուծով:

Բխեցրո՛ւ, Տէր, իմ գլխում վտակների աղբյուր և ոռոգի՛ր իմ մտքերի անդաստանը, լվա՛ իմ հանցանքների աղտերը և սրբի՛ր իմ վերքերի թարախը, հանիր իմ մեղքերի փուշը և տնկի՛ր կենաց բույսը: Աճեցրո՛ւ, Տէր, արդարությունը և նվաստացրո՛ւ անօրենությունը, մեռցրո՛ւ մարմնի ցանկությունը և նորոգի՛ր հոգուս կենդանությունը:

Չարդարի՛ր ինձ, Տէր, Քո մեծ երկյուղով և դարձրու անառակությունից դեպի արդարություն, աղտեղությունից՝ սրբություն, ծուլությունից՝ զգաստություն, ժուժկալությամբ գնալու քո ուղիղ ճանապարհով, քավիր մեղքես Քո ողորմությամբ և միացրու ինձ Քո սուրբերին, որպեսզի նրանց հետ փառաբանեմ անոխակալ մարդասիրությունդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):

